

ՀՈՒՅՄ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Կոմանդոս. Հարկավոր է վերադարձնել հայկական կողմի կորցրած ռազմավարական նշանակության բարձունքները



211, Մայիս 2016 թ. No 211, May 2016 شماره ۲۱۱ خرداد ماه ۱۳۹۵

Այս համարում Հայերեն բաժին

| | |
|-----------------------------------|----|
| 1- Խմբագրական..... | 0 |
| 2- Մայիսյան..... | 1 |
| 3- Հայաստանի Հանրապետություն..... | 16 |
| 4- Արևմտյան Հայաստան..... | 33 |
| 5- Սփյուռք..... | 34 |
| 6- Միջազգային..... | 35 |
| 7- Հասարակական..... | 36 |
| 8- Գծանկարչություն..... | 39 |
| 9- Մայրենի լեզու..... | 39 |
| 10- Աբադան..... | 40 |

Պարսկերեն բաժին

| | |
|-------------------------|-----|
| Լուրեր..... | 0 |
| Արցախի պատմություն..... | 1-4 |
| Իրանահայ թատրոն..... | 5 |
| Ծաղկազարդ..... | 5 |

Ճապիկի առաջին էջում՝ Վերադարձնել հողերը...
Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը
Համար 211, Մայիս 2016 No. 210, May 2016
ماهنامه لويس - شماره ۲۱۱ خرداد ماه ۱۳۹۵

ԼՈՒՅՍ

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝
Էդ. Բաղդասարյան
Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան
Թամ Ղարախանյան, Սաթենիկ Ավետիսյան
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան
Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com
Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Պոստաձևերի հեղինակների կարծիքները կարող են
չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին
պարտադիր է:

ماهنامه لويس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com

نشانی اینترنت: www.louysonline.com

AI Monitor. Փակ դռների հետևում թուրք- խորայելա-ադրբեջանական բլոկը լավ է աշխատում գրեթե բոլոր ճակատներում

Ապրիլի սկզբին Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի հակամարտ զորքերի շփման գծում բախումները Թուրքիայի մամուլի առաջին էջերում էին, բայց քիչ բան ասվեց այդ բախումներում իսրայելական գեներալադմիրալի ներքինի մասին: Միայն թուրքական Hurriyet-ն անդրադարձավ Ադրբեջանի կողմի իսրայելական Harop անօդաչու թռչող սարքի մասին, որը հայկական կողմի բողոքն առաջացրեց:

Սոցիալականներում Ադրբեջանը պարբերաբար ներկայացվում է որպես Թուրքիայի ամենամոտ բարեկամը, միևնույն ժամանակում էլ լուրջ սպառնալիքի իր կարգավիճակը: «Չետաբրբիր է, որ իսրայելն Ադրբեջանի սպառնա-գիտությունների հիմնական մատակարարն է, եւ այս իրավիճակը հանելուկ է. ինչո՞ւ են թուրքերը լռում, երբ իրենց ամենամոտ բարեկամ Ադրբեջանն ու ամենամեծ հակառակորդը, եթե ոչ թշնամին՝ իսրայելը, սերտ հարաբերություններ են զարգացնում: Հատկանշական է թուրքական հասարակության երկու շերտերի լռու-թյունը. ուլտրա-ազգայնականների, որոնց հավատար-մությունն Ադրբեջանին գրեթե բացարձակ է, եւ իսլամականների, որոնք իսրայելին քննադատելու ոչ մի առիթ բաց չեն թողնում», - գրում է պարբերականը:

Պարբերականի համաձայն, Ազգային եւ ռազմավարական հետազոտությունների հայկական կենտրոնի ղեկավար Ռիչարդ Կիրակոսյանը կարծում է, որ իսրայելը Թուրքիային փոխարինել է Ադրբեջանի կարևոր ռազմական հովանավորի դերում: Ըստ նրա, այս մասին է վկայում 2012 թվականին Ադրբեջանի կողմից իսրայելական պետական Israel Aerospace Industries-ից անօդաչու թռչող սարքերի եւ հակաօդային պաշտպանության գեներալ-հրթիռային համակարգերի գնման շուրջ կնքված 1.6 մլրդ դոլար արժողությամբ պայմանագիրը: Կիրակոսյանի խոսքով, երկկողմ հարաբերությունները չեն սահմանափակվում գեներալ առևտրով:

«Երկրները շահերը համընկնում են երեք հիմնական ուղղություններով՝ անվտանգության եւ ռազմական փոխգործակցության, այդ թվում՝ հետախուզության ոլորտում համագործակցության; Էներգետիկայի եւ առևտրի; աշխարհաքաղաքական ռազմավարու-թյան», - ընդգծում է հոդվածագիրը:

Թուրքիան, ըստ հրապարակման, միշտ Ադրբեջանին կոչ է անում նվազեցնել իսրայելի հետ համագործակցության մակարդակը: «Չետեւաբար՝ «Եթե չես կարող հաղթել ինչ-որ մեկին, միացիր նրան» ասացվածքն այժմ իսրայելա-ադրբեջանական ռազմավարական բարեկամության հարցում թուրքա-կան կառավարության չգրված կարգախոսն է դարձել: Փակ դռների հետևում թուրք-իսրայելա-ադրբեջանական բլոկը, կարծես, լավ է աշխատում գրեթե բոլոր ճակատներում: Ուլտրա-ազգայնականների համար Հայաստանի դեմ Ադրբեջանի պոտենցիալ հաղթանակը գերիշխում է իսրայելի հանդեպ թշնամանքի նկատմամբ», - ամփոփում է հեղինակը:

Թուրքական գորքերի ներխուժումը Արևելյան Հայաստան, Մալիայան հերոսամարտերը

Դր. Էդիկ Բաղդասարյան

(Դրվագներ «Չայ Պետականության Պատմություն» գրքից, 7 հատորով, հատոր 4, Տորոնտո 2013, Դր. Էդիկ Բաղդասարյան)

Տրապիզոնի հաշտության բանակցությունների ձախողում-միջ հետո թուրքական գորքերը արշավեցին Արևելյան Հայաստան: 1918 թ. մարտի վերջին ընկավ Սարիղամիշը, սարիլի կեսերին, Անդրկովկասյան կառավարության (նախագահ՝ Ա. Չխենկելի) դավաճանական վարքագծի հետևանքով, գրեթե առանց դիմադրության թուրքերին հանձնվեց լավ ամրացված Կարսը: Ստանալով Անդրկովկասի անկախության հայտարարման լուրը թուրքական կովկասյան բանակի հրամանատարությունը պահանջեց անհապաղ դատարկել Կարսը: Ուստի Չխենկելին գորքերի հրամանատարությանը կարգադրեց՝ առանց դիմադրության եւ կրակոցի հանձնել Կարսի ամրոցը: Այդ կարգադրությանը առարկեց հայկական առաջին կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանը, որն այդ ժամանակ ստանձնել էր ճակատի հրամանատարությունը: Նա գտնում էր, որ Կարսի ամրոցը ի վիճակի է դիմադրել թուրքերի ներխուժմանը, ունի պաշտպանվելու բոլոր հնարավորությունները: Ապրիլի 1-ի վիճակով, Սարիղամիշի անկումից հետո, Կարսի մատույցները պաշտպանում էին հայկական առանձին կորպուսի գորամասերը, իսկ Կարսի ամրոցում գտնվում էին հայկական 2-րդ գունդը, առանձին հրետանային գունդը, սակրավորների վաշտը, հեծյալ եւ հետիոտն կամավորական ջոկատը, հունական կամավորական զնդի մի մասը, մեկ հեծյալ գունդ, ռուսական կամավորական գունդը: Գեներալ Նազարբեկյանի հրամանով Կարսի պաշտպանները թուրքական հարձակվող գորքերին դիմավորեցին հրետանային հուժկու համազարկով: Թուրքերը կանգ առան: Սակայն ապրիլի 11-ին հետևեց Չխենկելու նոր հրամանը՝ Կարսը անհապաղ հանձնելու վերաբերյալ: Կնքվեց ժամանակավոր զինադադար: Կարսը անցավ թուրքերի ձեռքը¹:

Վիճակը ամենեւին էլ չփրկեց Անդրկովկասը անկախ հայտարարելը: Չկար համերաշխություն Անդրկովկասյան կառավարության ներսում եւ Սեյմում: Նոր կառավարության նախագահ, մենշեվիկ Ա. Չխենկելին վարում էր ըստ էության թուրքամետ գիծ:

Անդրկովկասի երեք հիմնական (հայ, վրացի, ադրբեջանցի) ազգերի անմիաբանությունն էր պատճառը, որ թուրքական գորքերը ռազմական հաջողություններ էին ունենում:

Թուրք զավթիչների դեմ պայքարի հարցում հայ քաղաքական բոլոր կուսակցությունները միակամ էին: 1918թ. ապրիլին Ալեքսանդրապոլում Հայոց ազգային խորհրդի նախաձեռնությամբ կայացավ հայ քաղաքական կուսակցությունների եւ անկուսակցական գործիչների խորհրդակցություն: Խորհրդակցությունը որոշեց ,բոլոր հնարավոր միջոցներով շարունակել երկրի

պաշտպանությունը: Սակայն հայությունը միայնակ ի վիճակի չէր դիմակայել թուրք զավթիչներին:

Թուրքական գորքերի ռազմական հաջողությունները հարկադրեցին Անդրկովկասի կառավարությանը վերսկսելու Տրապիզոնում ընդհատված բանակցությունները: Մայիսի 11-ին Բաթումում սկսվեցին թուրք-անդրկովկասյան հաշտության նոր բանակցություններ: Սակայն ռազմական հաջողություններով արբեցած թուրքերն ամենեւին մտադրություն չունեին բավարարվել Բրեստի հաշտության պայմաններով: Նրանք կողոպտչական նոր պահանջներ ներկայացրին, որի պատճառով բանակցությունները կրկին մտան փակուղի:

Օգտվելով նպաստավոր հանգամանքից՝ մայիսի 15-ին թուրքական գորքերը հանկարծակի հարձակումով գրավեցին Ալեքսանդրապոլը (Գյումրին) եւ առաջ շարժվեցին երկու հիմնական ուղղություններով: Հայկական գորքերի հրամանատար , գեներալ Նազարբեկյանը իր շտաբը տեղափոխեց Լարաբլիխա, իսկ Համամյու գյուղը մայիսի 21-ին թուրքերի ձեռքն ընկնելուց հետո՝ Դիլիջան: Թուրքական գորքերի մի խմբավորում Ալեքսանդրապոլից շարժվեց դեպի Արարատյան դաշտ՝ Երեւանը եւ Էջմիածինը գրավելու, իսկ մյուսը՝ Լարաբլիխա (Վանաձոր)-Լազախով ռազմավարական ուղղություն վերցրեց դեպի Բաքու: Հայկական ազգային գորամասերը անկարող էին երկարատեւ դիմադրություն ցույց տալ զավթիչներին: Հայ ժողովրդի զլխին նորից կախվեց ֆիզիկական բնաջնջման վտանգը²:



Գեներալ Նազարբեկյանը Դիլիջանից հուսահատական հեռագիր է հղում Թիֆլիսի հայոց ազգային խորհրդին՝ հայտնելով, որ ինքը ոչ մի զինվոր չունի, ուստի պետք է ընդունել հաշտության ամեն մի պայմանագիր: Բաթումից հայ հատվիրակների խորհրդով Համո Օհանջանյանը Երեւանի ազգային խորհրդին հեռագրում է՝ առանց դիմադրության քաղաքը հանձնել թուրքերի ողորմածությանը: Երեւանի քաղաքային Դումայի նախագահ դաշնակցական Թոշյանի առաջարկությամբ Դուման ընդունում է Հ. Օհանջանյանի առաջարկը: Այս որոշման դեմ քաղաքում համաժողովրդական ցույց է կազմակերպվում, որի

¹ - Հ. Ա. Ավետիսյան, Վ. Ն. Ղազարեցյան, Ռ. Հ. Գասպարյան, Ռ. Օ. Սահակյան, Հայոց Պատմություն 1900-1939, Երեւան, 1993, էջ 102-103:

² - Նույն տեղում, էջ 40-42:

Հույս Ամսագիր

մասնակիցները որոշում են կռվել եւ պաշտպանել քաղաքը: Ոտքի է ելնում նաեւ քաղաքի շրջակա գյուղերի բնակչությունը: Թշնամուն դիմադրելու համար գյուղացիները խմբերով գալիս են Քանաքեռից, Առինջից, Ավանից եւ այլ գյուղերից:

հրամանատարը գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանն էր, հրետանային նախապատրաստությունից հետո անցավ հակահարձակման: Հայկական զինուժը հուժկու գրոհով հետ վերցրեց թշնամու կողմից մեկ օր առաջ գրաված Մարդարապատը: Թուրքերը, մեծ կորուստներ տալով, խուճապահար նահանջեցին մինչեւ Արաքս կայարանի մոտակա բարձունքները: Իսկ մի քանի օր տեսած համառ ու ծանր մարտերից հետո թուրքական 15-հազարանոց զորքը չախչախվեց եւ նահանջեց դեպի Գյումրի:



Մարդարապատի հերոսամարտը

Թուրքերին դիմակայելու համար կատարվեց հայկական զինված ուժերի վերադասավորում: Ստեղծվեց Երեւանյան զորախումբը, որի հրամանատարն էր գեներալ Մովսես Միլիկյանը:

Արարատյան դաշտ ներխուժած թուրք ասկարները (զինվորները) մայիսի 21-ին գրավեցին Մարդարապատ (Արմավիր) գյուղն ու կայարանը: Հայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքարի ելավ, ուր վճռվելու էր նրա ինքն-չինելու հարցը:



Դանիել բեկ Փիրումյան 1861-1921

Այդ հաղթանակը բարձրացրեց զորքի եւ ժողովրդի տրամադրությունը: Հարկ է նշել, որ հայրենիքի եւ Երեւանի պաշտպանության համար ոտքի ելավ Երեւանի ու Արարատյան դաշտի ողջ հայ բնակչությունը: Հարյուրավոր մարդիկ, անկախ կուսակցական պատկանելությունից, մասնագիտությունից, քաղաքական համոզմունքներից ու տարիքից, ներկայանում էին զորամաս եւ կամավոր մեկնում ճակատ: Գյուղացիները տրա-մադրում էին փոխադրամիջոցներ, փամփուշտ, սննդամթերք, մտնում աշխարհագրայինների շարքերը, փորում խրամատներ: Հերոսամարտը ստացավ համաժողովրդական բնույթ, հայ ժողովուրդը համախմբվել, մի բռունցք էր դարձել, որովհետև յուրաքանչյուր հայ գիտակցում էր, որ ինքը մարտնչում է հանուն հայրենիքի, հանուն կյանքի ու ազգային արժանա-պատվության:



Մայիսի 22-ի վաղ առավոտյան եկեղեցու զանգերի դողանքների ներքո սկսվեց Մարդարապատի պատմական ճակատամարտը: Մարդարապատի զորաշոկատը, որի



Բաշ-Ապարանի հերոսամարտը



Բաշ-Ապարանի հուշարձանը, Ապարանում - 1979

Սարգսրապատի ճակատամարտին գրեթե զուգընթաց ահեղ մարտեր մղվեցին նաև Բաշ-Ապարանում եւ Ղարաքիլիսայում: Մայիսի 22-ին թուրքական մի դիվիզիա, գրավելով Սպիտակը, շարժվեց Բաշ-Ապարան՝ նպատակ ունենալով Երեւանի վրա գրոհել հյուսիսից, մտնել Արարատյան դաշտ եւ Սարգսրապատի մոտ հայկական զորամասերին հարվածել թիկունքից: Ստեղծվեց հարվածային խումբ: Հայկական զորամասը, Դրոյի ղեկավարությամբ, ոչ միայն կասեցրեց թուրքերի առաջընթացը, այլև խիզախ հակազորոհով փախուստի մատնեց թշնամուն: Այդ կռիվներում հայերին օգնում էր Ջահանգիր աղայի քրդական (եզդիական) ջոկատը:



Գեն. Թովմ. Նազարբեկյան (1855-1928)

Մայիսի 24-28-ը ահեղ մարտեր տեղի ունեցան Ղարաքիլիսայի մոտ: Երկու կողմերն էլ ունեցան մեծ կորուստներ: Չնայած թշնամին ի վերջո գրավեց Ղարաքիլիսան եւ շարժվեց առաջ, սակայն այնտեղ նույնպես հայերը ցույց տվեցին հիրավի հերոսական դիմադրություն: Դա խոստովանել է հենց թուրք հրամանատարությունը: Ղարաքիլիսայի կռիվներում աչքի ընկան սպաներ Ա. Բեյ Մամիկոնյանը, Ն. Ղորղանյանը, Գ. Նժդեհը, մարտերում հերոսաբար զոհվեց կապիտան Գ. Տեր-Սովսիսյանը եւ ուրիշներ:

Այսպիսով՝ Սարգսրապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսամարտերում հայ ժողովուրդը կարողա-ցավ թշնամուն արժանի հակահարված տալ եւ վիժեցնել Արեւելյան Հայաստանը գավթելու ու տեղի հայությանը ոչնչացնելու երիտթուրքերի ծրագիրը: Մայիսյան հերոսամարտը ամբողջ հայ ժողովրդի հավաքական ուժի եւ ազգային միասնության հաղթանակն էր: Ավելին, եղեռն տեսած, կյանքի ու մահվան եզրին կանգնած հայ ժողովուրդը ոչ միայն պահպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլ եւ ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ եւ ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը: Մայիսյան հերոսամարտերը հիմք հանդիսացան Հայաստանի անկախության համար: Եվ հենց այդ հաղթանակի օրերին հռչակվեց Հայաստանի անկախությունը:



Դրաստամատ Կանայան -Դիր - 1883-1956

Մայիսյան հերոսամարտը դարձավ հայոց նոր ժամանակների Ավարայրը, որ իր խաղացած դերով ու նշանակությամբ, հիրավի, հայ ժողովրդի պատմության ամենահերոսական դրվագներից է: Այս դեպքերով, կարելի է ասել, փակվում է հայ ժողովրդի ողբերգական եւ հերոսական իրադարձություններով հարուստ նոր պատմության շրջանը, եւ սկսվում նորագույն՝ հայկական պետականությունների պատմության ժամանակաշրջանը³:


³ - ՀԺՊ, հ. 7, էջ 38-45. Հայ. Հարց Հ., էջ 77, 291-292, 405-406. Հեղինակների կոլեգիա, Հայոց պատմություն, Երևան 1994, էջ 227-231:

Հայաստանի առաջին հանրապետությունը (1918թ. մայիս - 1920թ. նոյեմբեր-դեկտեմբեր)

Հայաստանի Հանրապետության հռչակումը

Այն օրերին, երբ հայ ժողովուրդը թուրքական զավթիչների դեմ կյանքի ու մահվան կռիվներ էր մղում 1918թ. մայիսյան հերոսամարտերում, սուր հակասություններ էին առաջացել երկրամասի երեք հիմնական ազգություններից կազմված Անդրկովկասյան Դաշնային Հանրապետության իշխանության մարմիններում: Այդ իսկ պատճառով Անդրկովկասյան Դաշնության փլուզումը դարձավ անխուսափելի:

1918 թ. մայիսի 26-ին լուծարվեց Անդրկովկասյան սեյմը (պառլամենտը), և դրանով իսկ կազմալուծվեց Անդրկովկասյան Հանրապետությունը: Այդ նույն օրը Վրաստանը հռչակեց իր անկախությունը, հաջորդ օրը՝ Ադրբեջանը, իսկ մայիսի 28-ին Թիֆլիսում գործող Հայոց (կենտրոնական) Ազգային խորհուրդը որոշում կայացրեց հռչակել Հայաստանի անկախությունը: Ընդունված հայտարարագրում մասնավորապես ասվում էր, «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծարումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր կացության հանդեպ՝ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական զավառների գերագույն և միակ իշխանությունը»⁴:



Հայաստանի առաջին հանրապետության հռչակագիրը

Ըստ հայ պատմաբան Զարեանդի՝ «Հայաստանի Հանրապետության դեմ առարկություն կա, որ այն ,անոնցնե էր: Իսկ այդ ,անոնցրե ունի երոկւ իմաստ՝ նախ այն, որ արեւելահայերն ենկերտել Հայաստանի Հանրապետությունը, ապա երկրորդն այն է, որ այն «ՅՂ-ի

⁴ - Հեղինակների կողմից, Հայոց Պատմություն, Երևան 1994, էջ 231:

ձեռնարկվածն է... Սակայն Հայաստանի Հանրապետությունը հիմնվեց բովանդակ հայ ժողովրդի ճիգերով, նրա ստեղծման մեջ դեր կատարեց ո՛չ միայն արեւելահայությունը, այլև՝ արեւմտահայ գաղթականությունը և աշխարհի չորս կողմերից երկիր փութացող կամավորությունը: Հայոց ազատությունը կերտեցին Դաշնակցական պետերի՝ Արամի և Դրոյի հետ միասին ոչ-կուսակցական զորավարներ՝ Նազարբեկյանը, Միլիկյանը և Փիրումյանը: Ինչու հայ ժողովրդի միահամուռ ջանքերով ստեղծված հանրապետության հիմնադրի պատիվը տայ միայն արեւելահայության և միայն Դաշնակցությանը»⁵:

Այսպիսով, եղեռն սալրած հայ ժողովուրդը, թշնամու մահաբեր սպառնալիքի պայմաններում, ուժ գտավ իր մեջ և վերականգնեց հայոց անկախ պետականությունը: Հայաստանի անկախության հռչակումը պատմական անհրաժեշտություն էր և ստեղծված պայմաններում միակ նախընտրելի ուղին: Հայաստանի անկախության համար հայ ժողովուրդը պարտական էր ազատագրական իր տեսական պայքարին, իսկ կոնկրետ պարագայում Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի հաղթական հերոսամարտերին: Ի նշանավորումն այդ իրադարձության՝ Մայիսի 28-ը համարվում է համայն հայության նվիրական տոներից մեկը՝ Առաջին հանրապետության անկախության օրը:

Հայաստանի անկախության հռչակումը շրջադարձային եղավ հայ ժողովրդի քաղաքական և հոգեւոր-մշակութային կյանքում⁶:

Բաթումի պայմանագիրը

1918 թ. ապրիլին Տրապիզոնում ընդհատված թուրք-անդրկովկասյան բանակցությունները մայիսի սկզբներին վերսկսվեցին Բաթումում: Թուրքերն ավելի կողոպտիչ պայմաններ ներկայացրին: Նրանք մայիսի 26-ին վերջնագիր տվեցին անդրկովկասյան պատվիրակությանը: Բայց քանի որ հենց նույն օրը Անդրկովկասյան Հանրապետությունը կազմալուծվեց, ուստի նորահռչակ հանրապետություններից յուրաքանչյուրն ինքը պետք է լուծեր Թուրքիայի հետ պատերազմի և խաղաղության հարցը:



Ա. Խատիսյան



Յով. Քաջազունի

⁵ - Զարեանդ, Հայաստանի Հանրապետությունը և անոր դերը հայոց պատմության մեջ, Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1963, համար 7 (արևելահայերենի վերածցիցից մենք):


⁶ - Ա. Մ. Շակոբյան, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները, էջ 9-11: Հեղինակների կողմից, Հայոց պատմություն, Երևան 1994, էջ 231-232:



Մ. Պապաջանյան

Հենց Հայաստանի անկախության հռչակման օրը՝ մայիսի 28-ին, Հայոց Ազգային խորհուրդը որոշեց նոր պատվիրակություն ուղարկել Բաթում եւ հաշտություն կնքել թուրքերի հետ: Նորանկախ Հայաստանի պատվիրակությունը գլխավորեց Ալ. Խատիսյանը:

Սակայն հայոց զենքի փառքը խամրում է Բաթումի դիվանագիտական սեղանների վրա. թեև Հայաստանում գործը պահանջում էր մերժել հաշտությունը, եւ ժողովուրդն էլ կողմ էր կռիվը շարունակելուն, Թիֆլիսի դաշնակցական քաղաքագետներից բաղկացած պատվիրակությունը (Ալեքսանդր Խատիսյան, Հովհաննես Բաջազունի, Միքայել Պապաջանյան), որ դեկավարվում էր Կովկասի մայրաքաղաքում նստած Հայ Ազգային Խորհրդի կողմից, անտեղյակ ռազմաճակատի կացությանը, իր հաղթանակած ավինի փոխարեն, թշնամու ողորմածությամբ էր զծում Հայոց պետության սահմանները, եւ հաշտագիրն ստորագրելուց հետո միայն, Վեհիբ փաշայից իմանում, որ հայկական զորքը կռվել է հերոսաբարեւ հաղթել⁷:



Մեհմեդ Վեհիբ Փաշա (աջ) եւ նրա մեծ եղբայր՝ Ասադ Փաշա (ձախ)

Մայիսի վերջին սկսվեցին հայ-թուրքական բանակցությունները: Հունիսի 4-ին կնքվեց Բաթումի հաշտության պայմանագիրը Հայաստանի Հանրապետության եւ Օսմանյան թուրքիայի միջև: Պայմանները չափազանց ծանր էին Հայաստանի համար:



ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Կնքված պայմանագրով հայ-թուրքական սահմանագիծը այնպես էր տարվում, որ երկիրը մասնատվում էւ չնչին տարածք էր թողնվում Հայաստանին:

Պայմանագրի համաձայն Հայաստանը ունենալու էր սահմանափակ թվով գորք: Երկաթուղիների վերահսկողությունն անցնելու էր թուրքիային, որպեսզի կարողանա Հայաստանի վրայով գորք տեղափոխել Ադրբեջան: Դրա նպատակն էր խորտակել Սոս. Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունան եւ տիրանալ Բաքվի նավթին: Դրանից գատ Հայաստանը պարտավորվում էր կազմալուծել հայկական ազգային անկանոն զորախմբերը եւ այլն:

Այսպիսով, Բաթումի պայմանագրով թուրքիային էր անցնում ոչ միայն Արեւմտյան Հայաստանը, այլ եւ Արեւելյան Հայաստանի զգալի մասը՝ Կարսի մարզը եւ շուրջ 5 գավառ: (Թուրքիան գավթեց Արդվինը, Կարսը, Արդահանը, Օլթին, Կաղզվանը, Ախալքալակը, Ախալցխան, Մուրմալուի գավառը, Էջմիժնի եւ Ալեքսանդրապոլի գավառների երեք քառորդը, Երեւանի գավառի կեսը եւ Շարուր-Ղարապաղյազի գավառի մեկ հինգերորդը, Ալեքսանդրապոլը, ամբողջ երկաթուղին մինչեւ Ջուլֆա) Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետությանը փաստորեն մնում էր ընդամենը 9 հազ. քառ. կմ տարածք՝ 321 հազար բնակչությամբ, որն ընդգրկում էր Սեւանա լճի ավազանը եւ Արարատյան դաշտի մի մասը: Այս կապակցությամբ տեղին է հիշել գերմանացի մի դիվանագետի արտահայտած հետևյալ պատկերավոր խոսքերը. «Թուրքերը հայերին տեղ տվեցին Սեւանում լողանալու համար, բայց դուրս գալու՝ չորանալու համար տեղ չտվեցին»: Ընդհանուր հաշվով Թուրքիան Արեւելյան Հայաստանից իլյում էր 28 հազ. քառ. կմ տարածք: Պատմաբան Լեոն Հայաստանին մնացած այդ տարածքը իրավամբ համարել է ոչ թե հայ ժողովրդի բնակության տեղ, այլ գերեզման⁸:

⁷ - Հ. Գ. Թուրքյան, Սրղարապետի հետամարտը, Երեւան, Թեհրան 1982, էջ 212. Բ. Ս. Օհանջանյան, Դաշնակցությունը առանց դիմակի, Երեւան 1980, էջ 93-95. Հեղինակների կոլեգիա, Հայոց պատմություն, Երեւան 1994, էջ 232-233.

⁷ - 1918-1921. Հետադարձ հայացք, Երեւան 1998, էջ 4.



Բաթումի

Բայց մյուս կողմից, ճակատագրի հետեւանքով, սա անկախ Հայաստանի առաջին միջազգային փաստաթուղթն է, որով թուրքիան առաջինը ճանաչեց Հայաստանի անկախությունը: Այլ. Խատիսյանը, ամփոփելով հայ-թուրքական բանակցու-թյունների արդյունքները, իր ուղարկած նամակում գրում էր. «Մենք կբերենք վատ հաշտության պայմանագիր, բայց կբերենք նաև անկախ Հայաստան, տուն, բույն, որտեղ կովում է ժողովրդական միտքը: Այս բոլորը կկապի, կմիավորի, կբարձրացնի ոգին, իսկ դա կարելու է: Ես հավատում եմ մեր պետությանը»:

Չորսվար Անդրանիկը մերժեց ճանաչել Բաթումի ստրկացուցիչ «դաժանե» դաշինքը: Բաթվի Ազգային խորհուրդը, ուր մեծամասնություն էին կազմում դաշնակցականները, նույնպես մերժեց այդ դաշինքը: Արեւմտահայ դաշնակ-ցականների պաշտոնաթերթը «Աշխատանք»-ը գրել է. «Եւ եթե կնքված է հաշտությունը, ստորագրված են պայմանները... ապա ուրեմն գործված է հանցանքներու ամենասոււը, դավաճանության ամենաստուկային, որոնց նմանը հայկական տարեգրության մեջ չէ եղած դեռ» (1918թ, հունիսի 5): Շատերը խորհում էին թե «դաշնակցականները պարզապես ծախեցին Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի հաղթանակները»:

Բաթումի պայմանագրով Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը: Հետաքրքրական է որ գերմանացիները Թալեաթ-փաշահի հետ կնքած գաղտնի պամաձայնագրում, թուրքին պարտադրել են Հայաստանին շնորհել ինքնավարություն:

ԲԵՈՆՈՒՄ ՌՈՒՄԵԿԸՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻ ՀԵՈՒԳԻՐԸ

No 432
Մանգելշտամից

Թարգմանություն ռուսերենից

14/30 հունվարի, 1917 թ.

Համաձայն գաղտնի տեղեկությունների, Շվեյցարիայում գտնվող Թեռնում Ալբանիայի դեսպանորդ Սուրբեյա բեյը պնդում է, որ Թալաթ-փաշան Բեռլինում

եղած ժամանակ գերմանացիների հետ կնքել է գաղտնի համաձայնագիր, որով Թուրքիան պարտավորվել է Հայաստանին շնորհել ինքնավարություն, փոխարենը Գերմանիան երաշխավորում է Օսմանյան կայսրության անձեռնմխելիությունը: Սուրբեյայի խոսքերով, գերմանացիների նպատակն է՝ իրենց վրայից հանել հայկական կոտորածների պատասխանատվությունը եւ ազգությունների ինքնատրոշ-ման սկզբունքի ռուս պաշտպանների մեջ հարուցել համակրանք Թուրքիայի նկատմամբ: Նկատի առնելով, որ Թուրքիային է վերապահվել նախաձեռնությունը, Սուրբեյայի պնդումները չեն հակասում Ժնևում Թուրքիայի կյուպատտուսի այն հաղորդմանը (տեսնել իմ համար 2345 հեռագիրը), որ Բեռլինում հայկական հարցը ճանաչել են որպես Թուրքիայի ներքին գործ: Նա սակայն ավելի առաջ է գնում Ցյուրիխում Թուրքիայի հյուպատտուսի հայտարարությունից (տես իմ համար 383 հառագիրը), ըստ որի ինքնավարություն հնարավոր է համարվել սուսկ 1914 թվականի ռուս-թուրքական ակտի սահմաններում: Համենայն դեպս այդ բոլոր երեք կարելի է հետեւցնել, որ Գերմանիան հայկական հարցում սկսել է մի նոր խաղ եւ ձգտում է Թուրքիայի հաշվին մի ավելորդ անգամ հանդես գալ փոքր ժողովուրդների «ազատարարի» դերում: Բնորոշ է, որ Ժնևի հայերի շրջանում մինչև իսկ լուրեր են պտտվում, թե առաջիկայում Գերմանիան հռչակելու է անկախ Հայաստան:

ՕՏՈՒ¹⁰

Բաթումի պայմանագիրը, որը չի վավերացվել ո՛չ Հայաստանի եւ ո՛չ էլ թուրքիայի կառավարությունների կողմից, իր ուժը պահպանեց մինչև համաշխարհային պատերազմի ավարտը՝ 1918 թ. նոյեմբերը¹¹:

Ազգային բանակի ստեղծումը

Հայոց անկախ պետականության կայացման ամենագորեղ կռվաններից մեկը սեփական ազգային բանակի ստեղծումն էր: Պատմության փորձը սովորեցնում է, որ այն ազգն է անվտանգ, իսկ պետությունը՝ կենսունակ, որն ունի կարգապահ ու մարտունակ բանակ:



Մովսես Սիլիկյան



Յովհաննես Յախվերդյան

¹⁰ - ՀՄՍՀ ՊԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 43, թ. 48 (Պրոֆ. Չոն Կիրակոսյան, Հայաստանը Միջազգային դիվանագիտության եւ Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում 1828-1923, Երևան 1972, էջ 402-403):
¹¹ - ՀԺՊ, հ. 7, էջ 102:

⁹ - Գերսամ Ահարոնյան, Մեծ երազի ճամբուն վրա, Բ տպագրություն, Բեյրութ, 1964, էջ 111:



Թովմաս Նազարբեկյան

Բարձրագույն պայմանագրից հետո Թուրքիայի պահանջով Հայաստանը կարող էր ունենալ ընդամենը մեկ դիվիզիա: Այդ իսկ պատճառով 1918 թ. ամռանը հայկական կորպուսը վերակազմավորվեց մեկ հետևակային դիվիզիայի, որի հրամանատար նշանակվեց գեներալ Մովսես Միլիկյանը¹² (1862-1937): Դիվիզիայի գորայինների ընդհանուր թիվը հասնում էր 16 հազարի: Հանրապետության ռազմական նախարարն էր գեներալ Հովհաննես Հախվերդյանը (1873-1937)¹³, որը

Մովսես Բաբայի Միլիկյան (1862 սեպտեմբերի 14, Նուխիի գավառ, Վարդաշեն - Երևան, Ավանի ձոր, 1937 դեկտեմբերի 10), ռուսական և հայկական բանակների ռազմական գործիչ, ազգային հերոս, Ռուսաստանի բանակի գեներալ-մայոր (22.08.1917), Հայաստանի Առաջին Հանրապետության բանակի գեներալ-լեյտենանտ (28.05.1919), ՀՀ բանակի ռազմական խորհրդի անդամ (24.04.1919-ից): Ազգությամբ ուղի էր: 1884 թվականի օգոստոսի 14-ից ծառայել է ռուսական բանակի Կովկասյան զինվորական օկրուգում: Եղել է վաշտի, գումարտակի հրամանատար: 1911 թ-ի հունիսի 25-ին արժանացել է զեդայետի աստիճանի: 1914 թ-ին նշանակվել է Երևանի զինվորական պարտեի օգնական, 1915 թ-ին՝ 8-րդ գնդի հրամանատար, 1916 թ-ին՝ Վանի գորայինների հրամանատար: Լինելով Վանի գորայինների հրամանատար՝ գնդապետ Միլիկյանը մասնակցել է Մուշի, Բիթլիսի ազատագրմանը, Էզրումի գրոհին, որը վերջնելուց հետո նշանակվել է Էրզրումի պարտե (in english՝ Commandant): 1917 թ-ի օգոստոսի 22-ին արժանացել է գեներալ-մայորի աստիճանի: 1917 թվականի Ռուսական Հեղափոխությունից և ռուսական զորքերի նահանջից հետո 1918 թվականի հունվարին նշանակվել է Հայկական բանակային կորպուսի 1-ին հրաձգային դիվիզիայի, ապա՝ Երևանյան գորայինների հրամանատար: Գարժ ժամանակում Միլիկյանը ստեղծել է մարտունակ կանոնավոր զորամասեր, որոնք պատրաստ էին Օսմանյան Գայարության զորքերի հարձակումները հետ մղելուն և իրենց պաշտպանության և հսկման տակ էին վերցրել Երևանը: Երևանի նահանգի փաստացի դիկտատոր Արամ Մանուկյանի հրամանով 1918 թ-ի մայիսին ղեկավարել է Հայաստան ներխուժած թուրքական զորքերի դեմ ծավալված Մարդարայատի ճակատամարտը տարել փառահեղ հաղթանակ ու կասեցրել նրանց հարձակումը Երևանի ուղղությամբ: Հայաստանի անկախացումից հետո 1919 թ-ին նշանակվել է Գավառի տարածաշրջանի ճակատի հրամանատար, 1920 թ-ի աշնանը՝ Գարս-Ալեքսանդրապոլի ճակատի ընդհանուր հրամանատար: Մարդարայատի ճակատամարտին մասնակցած ապագա Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը Միլիկյանի մասին գրել է. "այդ ժամանակվա հայ գեներալներից ամենատաղանդավորը Միլիկյանն էր...": Հայաստանի խորհրդայնացումից հետո 1921 թ-ի հունվարին Միլիկյանը արքայազն էր Դյազան, մայիսին վերադարձել ու հաստատվել է Դոնի-Ռոստովում: Աշխատել է մի քանի խորհրդային հաստատություններում: 1927 և 1935 թթ-ին դարձյալ ձերբակալվել է, սակայն հանցանքների ապացուցված չլինելու պատճառով՝ ազատվել: Միլիկյանը կրկին ձերբակալվել է 1937 թվականին՝ Ստալինյան "մաքրումների" ժամանակ ազգայնամոլության մեջ մեղադրվելու պատրվակով և գնդակահարվել: Հետևանքի արդարացիվել է Խորոշուվի ժամանակ:

¹³ - **Հախվերդյան Հովհաննես Բաբսեդի (Հախվերդով Իվան Վասիլի)** (29.7.1873, Մանկտ Պետերբուրգ - 1921), զինվորական գործիչ: Մովորել է Մանկտ Պետերբուրգի 1-ին կադետային կորպուսում: Ավարտել է Պավլովսկի ռազմական ուսումնարանը, 1902-ին՝ Գլխավոր շտաբի Նիկոլայան ակադեմիան: 1904-05-ի ռուս-

կառավարության միակ անկուսացական անդամն էր, իսկ հայոց բանակի գլխավոր հրամանատարը (սպարապետ)՝ գեներալ Թովմաս Նազարբեկյանը¹⁴ (1855-1931):

Կազմալուծվեցին ՀՀ տարածքում գտնվող կամավոր հայդուկային խմբերը: Մասնավորապես խոսքը վերաբերում է փառաբանված հայդուկապետ Անդրանիկի գլխավորած հավաքական զորաջոկատին: Գեներալ Անդրանիկը որոշակի տարածայնություններ ուներ կառավարության հետ, ուստի 1919 թ. գարնանը նա իր սուրը և զենքերը հանձնեց կաթողիկոսին և մեկընդմիջտ հեռացավ Հայաստանից: Ազգային հերոս Անդրանիկը արտասահմանում շարունակեց իր ազգամեր գործունեությունը: Նա մահացավ 1927թ. ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում, թաղվեց Փարիզի Դեր-Լաշեզ գերեզմանատանը: Երախտագետ հայ ժողովուրդը ի կատար ածեց Անդրանիկի կտակը: 2000 թ. նրա աճյունը տեղափոխվեց հայրենիք և հանդիսավորությամբ թաղվեց Երեւանի Եռաբլուր զինվորական պանթեոնում, այնտեղ, ուր հանգում են Հայաստանի ու արցախյան հերոսամարտի մյուս նահատակ հերոսները:

1919 թ. հունվարից, երբ արդեն թուրքական զորքը հեռացել էր Անդրկովկասից, և ավարտվել էր նաեւ հայ-վրացական պատերազմը, կատարվեց բանակի մասնակի զորացրում: Դրա փոխարեն հայտարարվեց 20-25 տարեկան զինապարտ քաղաքացիների զորակոչ: ՀՀ զինված ուժերը աստիճանաբար համարվում էին թե՛ զորքով և թե՛ զինտեխնիկայով ու նյութատեխնիկական միջոցներով: Արդեն 1920 թ. հունվարին հանրապետության զորքի թիվը հասնում էր 25 հազարի, իսկ աշնանը, թուրք-հայկական պատերազմի շրջանում, շուրջ 40 հազարի, այդ թվում՝ 33 գեներալ և 2000-ից ավելի սպա:

Բանակում կարելու խնդիրներից էին նաեւ կարգապահության ամրապնդումը, մարտական ոգու բարձրա-ցումը, մայրենի լեզվի արմատավորումը և այլն: Այդ ուղղությամբ եւս զգալի աշխատանքներ կատարվեցին: Սակայն ժամանակի պակասը և մի շարք աննպաստ հանգամանքներ հնարավորություն չտվեցին

ճապոնական պատերազմի տարիներին ծառայել է Գլխավոր շտաբում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նշանակվել է 3-րդ ֆինլանդական գնդի (Լվով) հրամանատար, ապա՝ Տրապիզոնի 127-րդ հետևակային դիվիզիայի շտաբի պետ, Կովկասյան 2-րդ հեծելազորային կորպուսի հրամանատար (Պարսկաստան), 1917-ի հունիսին 5-րդ ֆինլանդական, ապա՝ 3-րդ հրաձգային դիվիզիաների հրամանատար (Հարավ-Արևմտյան ռազմաճակատ): 1917-ի վերջից թողել է ծառայությունը և տեղափոխվել Կովկաս: 1918-ի հունիսի 15-ից՝ Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար: Հանրապետության անկումից հետո բանտարկվել է Մոսկվայում, ապա՝ գնդակահարվել: Հովհաննես Հախվերդյանը գրականագետ Լևոն Հախվերդյանի հայրն է և երգիչ-երգահան Ռուբեն Հախվերդյանի պապն է:

¹⁴ - **Թովմաս Հովհաննեսի Նազարբեկյան** (Սարիյի 4, 1855- Փետրվարի 19, 1928), հայ ռազմական գործիչ, ռուսական բանակի գեներալ-մայոր, Հայաստանի Դեմոկրատական Հանրապետության գեներալ-լեյտենանտ, զորատեսակի գեներալ /բանակի գեներալ/, սպարապետ: Օնվել է 1855թ.: Ավարտել է ռազմական գիմնազիան: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կռվել է Կովկասյան ճակատում, եղել է Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար: 1917 թ. նշանակվել է նոր կազմավորված Հայկական բանակային կորպուսի հրամանատար: Նրա ընդհանուր հրամանատարությամբ հայկական զորքերը 1918 թ-ի մայիսի երրորդ տասնօրյակում կասեցրել են թուրքերի հետագա առաջխաղացումը Վանաձորի ուղղությամբ: Հետագայում շարունակել է ծառայությունը Հայաստանի Դեմոկրատական Հանրապետության բանակում: Գրել է հուշեր: Մահացել է 1928 թ-ին Թիֆլիսում:

ավարտին հասցնել հայկական ազգային բանակի կայացումը¹⁵:

Հայաստանի առաջին հանրապետության օդուժը

Դեռևս 1918 թվականին Հայաստանի առաջին հանրապետությունն օդուժ ուներ: ՀՀ անկախացումից հետո ռուսական հրամանատարության կողմից հայկական կորպուսի տնօրինությանն էր հանձնված 2-րդ, այլ տվյալներով՝ 3-րդ կովկասյան ավիաչոկատը, որը եւ դարձավ հայկական բանակի օդուժի հիմքը:



Հայկական բանակի ավիաչոկատի հիմնադրման ամսաթիվ է համարվում 1918 թ. օգոստոսի 15-ը: Ավիաչոկատի առաջին հրամանատարն էր պորուչիկ Վոխպովը, որին 1919 թ. սկզբներին փոխարինեց հետագայում լավ հայտնի Արթուր Վասիլի Ղուլյան-Ռիսկին (երբեմն նշվում է նաև Գուլյան): Սկզբնապես հայկական միակ ավիաչոկատն ուներ երեք ինքնաթիռ, երեքն էլ տարբեր մակնիշների՝ ,Nieuport», ,Morane-Saulnier L» եւ ,Voisin III» կամ ,Voisin V»: Պահեստամասեր չկային, եւ թռիչքներ գրեթե չէին կատարվում¹⁶:

Գիվանագիտական կապերի հաստատումը

Յուրաքանչյուր նորանկախ պետության առաջնահերթ խնդիրներից է հասնել այլ պետությունների հետ դիվանագիտական կապերի հաստատման եւ միջազգային ճանաչման: ՀՀ առաջին ճանաչողը եղավ Թուրքիան, սակայն կողմերի միջեւ անմիջական դիվանագիտական կապեր չհաստատվեցին: Հայաստանը դիվանագիտական կապեր հաստատեց ու ներկայացուցչություններ հիմնեց ինչպես իր անմիջական հարեւանների՝ Վրաստանի, Պարսկաստանի ու Ադրբեջանի, այնպես էլ Զառյալ դաշինքի եւ Անտանտի մի շարք երկրների հետ: Ընդհանուր հաշվով մեկ-երկու տարվա ընթացքում Հայաստանը դիվանագիտական կապեր հաստատեց աշխարհի շուրջ 40 պետությունների հետ: Գիվանագիտական ներկայացուցչություններ եւ կապեր հաստատվեցին (դեսպանատներ) Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի, Ֆրանսիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Գերմանիայի, Բրազիլիայի, Իտալիայի, Պարսկաստանի, Բելգիայի, Բուլղարիայի, Ուկրաինայի, Հունաստանի եւ այլ երկրների հետ:



Աշխարհի առաջին կին դեսպանը՝ Դիանա Աբգար, Դիանա Աբգարը Յոկոհամայում



Յոկոհամայում 1937թ. իր մահկանացուն կնքած և արտասահմանցիների գերեզմանատանը թաղված Դիանա Աբգարի շիրիմը: Դիանա Աղաբեգ Աբգարի ժառանգները՝ նրա թոռը՝ Մայրլ Աբգարը և ծոռը՝ Դենիզ Աբգարը, նկարը՝ 2010 թ. հոկտեմբերի 18

¹⁵ - Հեղինակների կոլեկտիվ, Հայոց Պատմություն, Երևան 1994, էջ 239-240:
¹⁶ - <http://razm.info/489> եւ <http://www.hayzinvor.am/>



Իշխան Հովսեփ Արղության
ՀՀ դեսպան Իրանում



Արմեն Գարո
ՀՀ դեսպան ԱՄՆ-ում

1920թ. հունվարին Անտանտի պետությունների Գերագույն խորհուրդը փաստորեն (de facto) ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանը պատրաստվում էր անդամակցելու այն ժամանակվա միջազգային ամենա-հեղինակավոր կազմակերպությանը՝ Ազգերի լիգային: Սակայն 1920թ. վերջին Հայաստանի անկախության վերացման ու խորհրդայնացման հետևանքով այդ հարցը փակվեց:

Դիվանագիտական կապեր հաստատելով՝ Հայաստանի կառավարությունը նպատակ էր հետապնդում հասնել Հայաստանի միջազգային ճանաչմանը, դրանով նպաստ բերել Հայկական հարցի լուծմանը, օտար պետությունների հետ իրականացնել առ ևտրատնտեսական հարաբերություններ, ստանալ հումանիտար օգնություն և այլն¹⁷:

Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները

Անկախ պետականությունը անհնար է պատկերացնել առանց ազգային-պետական խորհրդանիշերի: Պետական դրոշ ընդունվեց եռագույնը՝ կարմիր, կապույտ և ծիրանի գույներով: Կարմիրը խորհրդանշում էր ազատագրական պայքարում հայ ժողովրդի թափած արյունը, կապույտը՝ Հայաստանի ջինջ երկինքը, իսկ ծիրանագույնը՝ աշխատանքը: Ի դեպ՝ եռագույնի վերաբերյալ, Նոր Նախիջեւանից Ալ. Խատիսյանին ուղղված նամակով ևս դրոշի մի քանի ջրաներկ պատկերներով, իրզոհունակությունն ու նկատառումներն է արտահայտել մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանը¹⁸:

Որպես պետական հիմն (օրհներգ) ճանաչվեց ազատության մեծ երգիչ Մ. Նալբանդյանի խոսքերի հիման վրա գրված Մեր հայրենիք՝ հայրենասիրական երգը (որոշ փոփոխություններով, իսկ երաժշտությունը՝ Բարսեղ Կանայանի):



1920 թ. հուլիսին, ընդունվեց նաև զինանշանը, որի հեղինակներն էին ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը: Չինանշանի վրա պատկերված առյուծը և արծիվը գաղափարի իմաստով մարմնավորում էին երկու՝ Արեւելյան և Արեւմտյան Հայաստանները: Այդ նշանակում էր, որ հայ ժողովուրդը երազանք ուներ հասնելու երկու Հայաստանների միացմանը: Հատկանշական է, որ մերօրյա Հայաստանի Հանրապետությունը ժառանգել և ընդունել է այն ժամանակվա բոլոր երեք խորհրդանիշերը՝ դրոշը, օրհներգը և զինանշանը: Հատուկ օրենքով սահմանվեցին ՀՀ պետական և ազգային-կրոնական տոները՝ Նոր տարվա, Ծննդյան, Վարդանանց, Տեառնընդառաջի, Չառկի, Մայիսի 1-ի և այլն: Կարգավորվեցին պետության և եկեղեցու փոխհարաբերությունները: Հռչակվեց բոլոր կրոնների (խղճի) կատարյալ ազատություն և հավասարություն: Հայոց պետականության անվիճելի արժեքներից մեկը դարձավ հայերենը պետական-պաշտոնական լեզու ճանաչելը և գործողության մեջ դնելը: Մայրենին ստացավ պետական լեզվի կարգավիճակ: Ցարական ժամանակների նախկին պետական դպրոցները ազգայնացվեցին ու հայաշունչ դարձան¹⁹:

Սահմանվեցին պետական շքանշաններ: Հայոց անկախ պետականության կայացման գործում կարևոր էրևույթ էր ազգային դրամի (արժույթի) ստեղծումը, որը ստվեց Լոնդոնում և դրվեց շրջանառության մեջ²⁰:



ՀՀ թղթադրամների նմուշներ

¹⁷ - Հեղինակների կոլեգիա, Հայոց Պատմություն, Երևան 1994, էջ 238-239.

¹⁸ - ՀՀ ՊԿՊԱ ֆ. 200, ց. 1 գ.35, թ. 138: Արարատ Հակոբյան, Գայաստանի Հանրապետություն, 1918-1920, Երևան, 1992, էջ 9.

¹⁹ - Հեղինակների կոլեգիա, Հայոց Պատմություն, Երևան 1994, էջ 237.

²⁰ - Հեղինակների կոլեգիա, Հայոց Պատմություն, Երևան 1994, էջ 243.

Հայկական անկախ պետականության վերականգնման պատմական նշանակությունը

Այսպիսով, դարերի ընդմիջումից հետո, հայ ժողովրդի հերոսական մաքառումների արդյունքում, 1918 թ. մայիսի 28-ին ծնվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Դա օրինաչափ պատմական անհրաժեշտություն էր:

Հայաստանի անկախության հռչակումը նոր դարաշրջան բացեց հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ: Դրանով փաստորեն սկսվեց հայոց պատմության նորագույն ժամանակա-կաշրջանը:

Անկախ պետականության վերականգնումը պայմաններ ստեղծեց ազգային վերածնության ու զարգացման համար:

Կարճ ժամանակամիջոցում Հայաստանը դարձավ կազմա-կերպված պետություն՝ իրեն բնորոշ գրեթե բոլոր հատկա-նիշներով՝ իշխանության մարմիններով, տնտեսական-քաղաքական համակարգով, ազգային բանակով, դիվանագիտական կապերով, պետականության խորհրդանիշերով և այլն:

Պետական կառուցվածքի ու կառավարման տեսակետից Հայաստանը պիտի լիներ դեմոկրատական (ժողովրդավարական) հանրապետություն՝ խորհրդարանի գերակայությամբ, որը ցավոք չհասցրեց իրագործել, դա և կառավարությունը ընկան ՀՅԴ-ի ուղղակի իշխանության ներքո:

Հայաստանի Հանրապետությունը դարձավ աշխարհագրիկ հայության հասարակական-քաղաքական և հոգեւոր-մշակու-թային կյանքի միավորման կենտրոն:

Հանրապետության հասարակական-տնտեսական և կրթամշակութային կյանքը

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց հասարակական-տնտեսական ծանր դրության մեջ: Առաջին համաշխարհային պատերազմի և թուրքական արշավանքի հետեւանքով ավերված ու քայքայված հանրապետության փոքր տարածքում պատասպարվում էին 300 հազարից ավելի գաղթականներ: Մոլեզում էին սովն ու համաճարակային հիվանդությունները, գլուխ էին բարձրացրել անիշխանական երեւոյթները: Ահա այս վիճակը նկատի ունեւր առաջին վարչապետ Հովհ. Քաջագունին, երբ խորհրդարանում երկրի կացությունը բնութագրեց որպէս ,անձեւ քառս և ավերակների կույտ»:

Հայաստանի տնտեսությունը թույլ էր զարգացած: Իզուր չէ, որ այն ժամանակին համարվում էր Ռուսական կայսրության հետամնաց մի երկրամաս: Առաջին համաշխարհային պատերազմի և թուրքական ներխուժման հետեւան-քով առանց այն էլ թույլ տնտեսությունը կազմալուծվել էր: Թուրք-թաթարական շրջափակումների հետեւանքով կտրվել էր արտաքին կապը, չկար ապրանքների կանոնավոր արտահանում և ներմուծում: Բնականաբար անխուսափելի էին սովը և դրան ուղեկից համաճարակային հիվանդությունները՝ տիֆը և խոլերան: 1918-1919 թթ. ձմռանը հանրապետության մեկմիլիոնանոց բնակչության շուրջ կեսը մատնված էր սովի: Արդյունքում՝

ընդամենը մի քանի ամսվա ընթացքում սովը, ցուրտը և համաճարակային հիվանդությունները խլեցին շուրջ 180 հազար մարդու կյանք, որոնց մեծ մասը գաղթականներ էին: Համաճարակ հիվանդությունից մահացավ նաեւ հայ պետական գործիչներից մեկը՝ ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանը:

Ժողովրդի ֆիզիկական գոյությունը մի կերպ պահպանելու համար կառավարությունը հարկադրված ձեռ-նարկեց մի շարք արտակարգ միջոցներ: Կենսականորեն անհրաժեշտ մի շարք մթերքների՝ հացի, բամբակի, շաքարի, աղի, գետնախնձորի և այլնի վաճառքի նկատմամբ սահմանվեց պետական մենաշնորհ: Մի շարք դեպքերում պարզապէս կատարվում էին ունեւոր մարդկանց ունեցվածքի բռնագրավումներ, որպէսզի դրանք բաժանվեին սովյալներին ու անտուններին: Դրսից օգնություն ստանալու նպատակով Ամերիկա մեկնեց Հովհ. Քաջագունին, որին վարչապետի պաշտոնում փոխարինեց Ալեքսանդր Խատիսյանը (1876-1945):

Այդ ծանր վիճակը շարունակվեց մինչ և 1919 թ. մայիս, մինչեւ որ Հայաստան հասցվեց ԱՄՆ-ի օգնությունը՝ 1,3 մլն փութ այուր, 257 հազար փութ ցորեն, ինչպէս նաեւ շաքար, ձեթ, թեյ, կակաո և այլ պարենամթերք: Ամերիկյան այուրը մեղմեց սովը, և ժողովրդի վիճակը փոքր-ինչ բարելավվեց²¹:

Սակայն այդ ձեռնարկները լիովին չէին բավարարում ժողովրդի սննդամթերային պահանջները:

Գաղթականության վիճակը և ներգաղթի խնդիրը

Հանրապետության ներքին կյանքի բարդ խնդիրներից էր գաղթականության և որբերի հարցը: Արեւելյան Հայաստանում էին ապաստանել Մեծ եղեռնից մազապուրծ մոտ 300 հազար արեւմտահայեր: Գաղթականության մի հոսք էլ առաջացավ Ադրբեջանի Հանրապետության տարածքից: Ենթարկվելով թուրք-թաթարական բռնությունների ու կոտորածների՝ տասնյակ հազարավոր հայեր ներգաղթեցին Հայաստան:

Կառավարությունը պետք է դժնդակ պայմաններում հայտնված գաղթականությանը կերակրեր, պատսպարեր, հող և աշխատանք տար: Գաղթականությունը հանրապետության բնակչության սոցիալապէս ամենաանապահով մասն էր: Գաղթական յուրաքանչյուր շնչին օրական տրվում էր կէս ֆունտ (200 գրամ) այուր: Նրանց խնդիրներով զբաղվում էին խնամատարության, պարենավորման և ներքին գործերի նախարարությունները:

Գաղթականության մեջ առավել մեծ հոգածություն էին պահանջում որբ երեխաները: Պաշտոնական տվյալներով Հայաստանում կային 40 հազարից ավելի անտեր ու թափառական որբեր: Նրանց խնամքը իրականացնելու համար հիմնվեցին մի բանի տասնյակ որբանոցներ, որոնցից ամենախոշորը գտնվում էր Ալեքսանդրապոլում:

Պետությունն իր սուղ միջոցներով ի վիճակի չէր հոգալ որբերի խնամքի ծախսերը: Այդ պատճառով որբերին ու գաղթականությանը օգնության ձեռք էին մեկնում արտասահմանյան բարեգործական կազմակերպությունները: Դրան-ցից առավել աչքի ընկավ Ամերիկյան

²¹ - Հեղինակների կոլեգիա, Հայոց Պատմություն, Երեւան 1994, էջ 241-24:

օգնության կոմիտեն (ԱՕԿ): 1919թ. մայիսից Ամերկոմը հիմնականում իր վրա վերցրեց որք երեխաների խնամակալության գործը: Միջոցներ ձեռնարկվեցին որբերին արհեստներ սովորեցնելու, իսկ հասակավոր գաղթականներին՝ աշխատանքով ապահովելու:

Առավել ծանր ու անորոշ էր Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայ գաղթականության վիճակը: Գաղթա-կանության ստվար զանգվածներ կային Վրաստանում, Հյուսիսային Կովկասում, Իրանում, Միջագետքում և այլուր: Արեւմտահայ տարագիրները սպասում էին Հայկական հարցի արդարացի լուծմանը, որպեսզի օր առաջ վերադառնան Երկիր (Արեւմտյան Հայաստան) և շենացնեն իրենց օջախները:

Հայաստանի կառավարությունը որոշ քայլեր ձեռնարկեց արեւմտահայության ներգաղթը կազմակերպելու ուղղու-թյամբ: Ստեղծվեց ներգաղթի հանձնաժողով, Հայաստանում և արտասահմանում կազմակերպվեցին բարեգործական հանգա-նակություններ: Սակայն 1920 թ. աշնանից, երբ Հայկական հարցի հայանպաստ լուծումը փաստորեն ձախողվեց, փակվեց նաև ներգաղթի խնդիրը: Հայրենիքից գրկված հարյուր հազարավոր տարագիր հայեր ստիպված էին համարվելու սփյուռքահայերի շարքերը²²:

Տնտեսության վերականգնմանը և զարգացմանը ուղղված միջոցառումներ

1919 թ. գարնանից, երբ հանրապետության տարածքը զգալիորեն ընդարձակվեց, և ժողովրդի վիճակը փոքր-ինչ կայունացավ, կառավարությունը որոշ ջանքեր գործադրեց տնտեսությունը բարեկարգելու ուղղությամբ:

Վերանորոգվեցին ու գործարկվեցին մի քանի տասնյակ-ների հասնող ձեռնարկություններ՝ կաշվի, օճառի, կոնյակի, սպիրտի, ծխախոտի, հախճապակու, մանածագործական, կաթնամշակման և այլն: Պետականացվեց Շուստովի կոնյակի գործարանը: Մարիդամիշում և Դիլիջանում հիմնվեցին սղոցարաններ, վերսկսվեց Կողբի ու Կաղզվանի աղահանքերի և Ալավերդու ու Չանգեզուրի պղնձահանքերի շահագործումը: Կարգի բերվեցին հաղորդակցության ուղիները, որոշ չափով կանոնավորվեց առ ևտուրը, ընդլայնվեց փոստ-հեռագրային ծառայությունը և այլն:

Կազմվեցին քաղաքաշինական հատակագծեր և էլեկտրա-կայանների կառուցման նախագծեր: Փորձեր արվեցին հայ և օտարերկրացի կապիտալիստներ ներգրավելու Հայաստանի տնտեսության մեջ: Թեև շրջանառության մեջ դրվեց հայկական դրամանիշը, սակայն տնտեսության թույլ զարգացած լինելու պատճառով այն արագ արժեզրկվեց:

Հանրապետությունում վերանորոգվեցին ու կառուցվեցին մի շարք ջրանցքներ: Կատարվեցին ճահճուտների չորացման և աղուտների վերացման աշխատանքներ: Հայթայթվեցին սերմացու ու գյուղգործիքներ և բաժանվեցին գյուղացիներին:

Քանի որ Հայաստանը ագրարային երկիր էր, ուստի երկրագործ գյուղացու համար շատ կարևոր էր հողային

հարցի լուծումը: Կառավարությունը և խորհրդարանը ընդունեցին մի շարք օրենքներ կալվածատիրական բոլոր հողերի բռնագրավ-ման և դրանք անհատույց գյուղացիներին հատկացնելու վերաբերյալ:



Հանրապետության առաջին տարեդարձը, 1919 թ.

Այսպիսով, մեկ-երկու տարում տնտեսության բնագա-վառում նկատելի աշխատանք կատարվեց: Սակայն դրանք միայն առաջին քայլերն էին: Այն նախագծերը, որոնք չհասցրին կենսագործվել, կյանքի կոչվեցին Խորհրդային Հայաստանում²³:

Կրթամշակութային կյանքը

Դրական տեղաշարժեր կատարվեցին մշակութային կյանքում: Հայոց անկախ պետականության վերականգնումը հայրենիք վերադառնալու նպաստավոր պայմաններ ստեղծեց հայ մտավորականության համար: Հայաստան եկան կամ տեղում գործում էին գիտության ու մշակույթի բազում գործիչներ՝ Ալ. Թամանյանը, Թ. Թորամանյանը, Հ. Աբելյանը, Հ. Մանանդյանը, Մ. Աբելյանը, Կ. Աղբալյանը, Լ. Շանթը, Յու. Դամբարյանը, Ստ. Մալխասյանը և շատ ուրիշներ: Նրանք լծվեցին գիտակրթական գործի բարելավմանը:



Հայկական համալսարանի շենքը Ալեքսանդրապոլում

Առաջընթաց ապրեց կրթական գործը: Դպրոցական համակարգը դարձավ երկաստիճան՝ տարրական և

²² - Հեղինակների կոլեգիա, Հայոց Պատմություն, Երևան 1994, էջ 242:

²³ - Հեղինակների կոլեգիա, Հայոց Պատմություն, Երևան 1994, էջ 242-43:

միջնակարգ: Եթե 1918/19 ուստարում Հայաստանն ուներ 130 տարրական դպրոց՝ 11 հազար աշակերտով, ապա 1919/20 ուստարում՝ 450 դպրոց՝ 41 հազար աշակերտով: Հանրապետությունում գործում էր 20 միջնակարգ դպրոց՝ 5000-ից ավելի սովորողներով: 1920թ. հունվարից տարրական դպրոցներում սահմանվեց անվճար կրթություն:

Հայաստանի ազգային-մշակութային կյանքում նշանա-կալի իրադարձություն էր պետական համալսարանի հիմնադրումը: 1920 թ. հունվարին, համալսարանի հանդիսավոր բացման ժամանակ, վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը արտահայտեց հետեւյալ միտքը, որ մենք կործանեցինք բռնության շղթան, իսկ այժմ եկել է ժամանակը փշրելու տգիտության շղթան: Համալսարանի ռեկտոր նշանակվեց նշանավոր իրավագետ, պրոֆեսոր Յու. Ղամբարյանը: Հայաստանի համալսարանի ծնունդը խորհրդանշեց հայ ժողովրդի վերածնունդը:

Համազգային արժեք էր պետական պատկերասրահի, ազգային գրադարանի, հնագիտական, ազգագրական եւ այլ թանգարանների բացումը: Ծրագրվում էր Երեւանում հիմնել կոնսերվատորիա, պետական թատրոն, բժշկական, գյուղա-տնտեսական կրթօջախներ, Ալեքսանդրապոլում՝ գեղարվեստի ուսումնարան, Կարսում՝ ռազմական գիմնազիա եւ այլն:

Այսպիսով, Հայաստանի ներքին տնտեսական եւ մշակութային կյանքում փոփոխությունները ակնբախ էին: Չնայած հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր դրությանը, այնուամենայնիվ, կարճ ժամանակում հնարավոր եղավ դնել տնտեսության հիմքերը, հայացնել հայրենիքը, տեղաշարժեր արձանագրել կրթամշակութային ոլորտում, բացել համալսարան եւ այլն²⁴:

Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը Քաղաքական կուսակցությունները

Հայաստանի հասարակական-տնտեսական ծանր դրությունն իր դրոշմն էր թողնում հասարակական-քաղաքական կյանքի վրա: Այդուհանդերձ նկատվում էր հասարակական կյանքի աշխուժացում: Երեւանը եւ Ալեքսանդրապոլը դարձան հասարակական-քաղաքական կյանքի կենտրոններ: Հանրա-պետությունում լույս էին տեսնում մի քանի տասնյակ անուն պարբերականներ, գործում էին բազմաթիվ հրատա-րակություններ ու տպարաններ: Թերթերն ու ամսագրերը լուսաբանում էին երկրի առօրյան: Կառավարությունը հիմնականում ապահովում էր խոսքի ու մամուլի ազատությունը:

Հանրապետության քաղաքական կյանքի հիմնական դերակատարները կուսակցություններն էին: Հայաստանում գործում էին մի շարք քաղաքական կուսակցություններ: Դրանցից առավել աչքի էին ընկնում Դաշնակցությունը, Հայ ժողովրդական, Հայ (սահմանադրական) ռամկավար, Սոցիալիստ-հեղափոխական (Էսէռ), Սոցիալ-դեմոկրատ (մենշեիկ, բոլշեիկ) կուսակցությունները: Հանրապետությունում շատ չնչին էր Ս. Դ. Հնչակ կուսակցության դերակատարությունը:

Կուսակցությունների կողքին կային հասարակական գանազան կազմակերպություններ ու միություններ՝ արհեստակցական, Կարմիր խաչի, կանանց, աշակերտական, այդ թվում՝ սկաուտական եւ այլն:



Հայաստանի Առաջին Հանրապետության երկրորդ կաբինետի անդամները, 1919թ: Նստած են՝ Ա. Սահակյան, Ալեքսանդր Խատիսյան, գեներալ Քրիստափոր Արարատյան: Կանգնած են՝ Նիկոլ Աղբալյան, Ա. Գյուլխանդանյան, Ս. Արարատյան:

Հանրապետության քաղաքական կյանքի հիմնական դերակատարները կուսակցություններն էին: Հայաստանում գործում էին մի շարք քաղաքական կուսակցություններ: Դրանցից առավել աչքի էին ընկնում Դաշնակցությունը, Հայ ժողովրդական, Հայ (սահմանադրական) ռամկավար, Սոցիալիստ-հեղափոխական (Էսէռ), Սոցիալ-դեմոկրատ (մենշեիկ, բոլշեիկ) կուսակցությունները: Հանրապետությունում շատ չնչին էր Ս. Դ. Հնչակ կուսակցության դերակատարությունը:

Կուսակցությունների կողքին կային հասարակական գանազան կազմակերպություններ ու միություններ՝ արհեստակցական, Կարմիր խաչի, կանանց, աշակերտական, այդ թվում՝ սկաուտական եւ այլն:

Ինչպես արդեն գիտենք, կառավարությունը եւ խորհրդարանը ձեւավորվում էին ժողովրդավարական երկրնե-րին բնորոշ կուսակցական սկզբունքներով: Դաշնակցությունը համարվում էր հանրապետության հիմնական կառավարող կուսակցությունը: Երկրի առջեւ ծառայած բարդ խնդիրները լուծելու համար Դաշնակցության հետ ժամանակավորապես միասնական (կոալիցիոն) կառավարություն կազմեց Հայ ժողովրդական կուսակցությունը: Ռամկավարները արտահայտում էին գերազանցապես հայ գաղթականների շահերը:

1919 թ. փետրվարին Երեւանում կայացավ Արեւմտա-հայերի 2-րդ համագումարը, որը որոշում ընդունեց Միացյալ եւ Անկախ Հայաստան ստեղծելու մասին: Այդ գաղափարը կենսագործելու նպատակով Հայաստանի կառավարությունը անկախության առաջին տարեդարձի օրը՝ 1919 թ. մայիսի 28-ին պաշտոնական հայտարարություն արեց Միացյալ եւ Անկախ Հայաստանի հռչակման մասին: Սակայն այդ հռչակագիրը կուսակցությունների միջեւ առաջ բերեց սուր տարա-ձայնություններ, որովհետեւ ընդունվել էր առանց խորհրդարանի գիտության: Մի շարք կուսակցություններ բողոք արտահայտեցին, իսկ ՀԺԿ-ն հեռացավ կառավարությունից: Դրանով քայքայվեց կոալիցիան: Դաշնակցությունը միայնակ ստանձնեց երկրի կառավարման դերը եւ պատասխանատվությունը:

²⁴ - Հեղինակների կոլեգիա, Հայոց Պատմություն, Երեւան 1994, էջ 244:

1919 թ. կեսերից կառավարության հանդեպ ընդդիմությունը ուժեղացավ: Առավել ընդդիմադիր ու անհաշտ էին Հայաստանի բոլշևիկները: Նրանք առաջնորդվում էին ծայրահեղ հեղափոխական գաղափարներով ու գործելակերպով եւ ձգտում էին դրսի եւ ժողովրդի օգնությամբ, բռնի ուժով գրավել իշխանությունը²⁵:

1920 թ. Մայիսյան ապստամբությունը

Հանրապետությունում գործող որոշ քաղաքական կու-սակցությունները եւ հասարակական կազմակերպությունները, ընդհանուր առմամբ պաշտպանում էին Հայոց անկախ պետականությունը: Իսկ Հայաստանի բոլշևիկները ցանկանում էին իշխանության գլուխ անցնելով Ռուսաստանի օրինակով Հայաստանում եւս խորհրդային կարգեր հաստատել եւ նրա հետ դաշնակցել: 1918 թ. Ստ. Ծահումյանը եւ մի շարք այլ գրծիչներ առաջարկում էին, ի հակակշիռ ստեղծվող բուրժուական հանրապետությունների, առաջ քաշել Անդկով-կասի սովետական անկախ հանրապետությունների լոզունգը:

Խորհրդարանում բոլշևիկ պատգամավոր Ա. Մելիքյանը հանդես էր գալիս կառավարության դեմ եւ մերկացնում դաշնակցականների քաղաքականությունը եւ նշում Հայաստանը Սովետական Ռուսաստանից անջատելու կործանիչ նշանակությունը հայ ժողովրդի համար: Բոլշևիկները հավատում էին, որ հայ ժողովրդի գլուխը եւ փրկության միակ հենարանը կարող էր լինել Սովետական Ռուսաստանը²⁶:

Երկրում տեղի էին ունենում ժողովրդական ելույթներ ու բողոքներ, որոնց դրդապատճառն էին տնտեսական, հասարակական-քաղաքական եւ ազգային հարցերը: Օրինակ՝ Երբ դաշնակցական կառավարությունը իրեն հայտարարեց Միացյալ եւ Անկախ Հայաստանի պետություն, ժողովրդի խիստ բողոքին արժանացավ. ,Անկարելի է լսել այն անմիտ ակտի մասին, որով ներկա կառավարությունը ինքնակոչ կերպով մը հայտարարեց Հայաստանը Միացյալ եւ Անկախ եւ ինքզինքը նշանակեց այդ մեծ Հայաստանի կառավարությունը...»: Բողոքի տակ ստորագրողները պահանջում էին ,ցրել ապօրինի միջոցներով ընտրված Պառլամենտը, նշանակել նոր ընտրություններ, , հրաժարում ներկա կառավարությանէ եւ ,ընտրել նոր կառավարություն օպոզիցիայից²⁷:

1919 թ. հունիսի 17-ին դաշնակցության Արեւելյան բյուրոն ստիպված եղավ ընդունել, որ ,արեւմտահայ մասսաները դժգոհ են այս կառավարությունից եւ չեն կարող հաշտվել այն մտքի հետ, թե այս կառավարությունը միացյալ Հայաստանի կառավարություն է: Նրանք տեսնում են, որ այս կառավարությունը հավասար աչքով չի նայում ռուսահայ եւ տանկահայ գաղթականության վրա, որ ,արեւմտահայը կառավարության մեջ ոչ մի մասնակցություն չունի²⁸:

Դաշնակցական պետական սիստեմը բռնության ու կամայականության վրա հիմնված սիստեմ

էր: Դաշնակցական կառավարությունն ուներ բազմաթիվ նախարարություններ, 40 հազարանոց բանակ, 5000-ից ավելի միլիցիա: Սակայն երկրում անիշխանություն էր, ,... Այն խոսքը, թե ով առավուտյան քնից շուտ վեր կենա, նա է իշխանության տերն ու տնօրենը, այս պարագայում կարելի է հանգիստ խղճով թույլատրել, որ այդ վարկաբեկիչ խոսքը վերագրվի Հայաստանի հանրապետության կառավարությանը,- գրել է ,Աշխատանք թերթը:

Ավագակցությունը, թալանն ու կողոպուտը սիստեմի էր վերածվել: Շատ բնորոշ է այդ առումով Ալեքսանդրապոլի հասարակության ներկայացուցիչների բողոքը կառավարության դեկավարին պատժիչ ջոկատի անօրինությունների, կաշառքների, սուկայի ծեծ ու ճնշումի, ահ ու սարսափի եւ զեղծարարության դեմ²⁹:

Գյուղատնտեսության եւ արդյունաբերության անկումը դաշնակցականների եւ անգլո-ամերիկյան տիրապետության շրջանում ահռելի չափերի հասավ: Բավական է նշել, որ ցանքատարածությունները 1913 թվականի 345,700 հեկտարից 1919 թվականին իջնում է 82,700 հեկտարի: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը կրճատվեց մոտավորապես 6 անգամ³⁰:

«Հ Ֆինանսական վիճակը եւս վկայում էր երկրի քառասյին դրության մասին: Երկրում ստեղծվեց ինֆլացիա: Կառավարությունը հսկայական թվի հասցրեց չեքաշխավորված թղթե դրամի արտադրությունը: 1919 թվականի օգոստոսի 1-ից մինչեւ տարվա վերջը շրջանառության մեջ կար 362 մլն. ռուբլու չեկ: 1920 թվականի հունվարի 1-ից ապրիլի 1-ը բաց թողնվեց 832 մլն. ռուբլի, իսկ ապրիլի 1-ից մինչեւ նոյեմբերի 1-ը՝ 7 մլրդ. 32 մլն. ռուբլի: Խիստ չափով արժեքագրվեց թղթե դրամը:

Այսպես, եթե 1920 թվականի մարտին թուրքական մեկ ոսկե լիրը արժեր 3000 բ. դաշնակցական կառավարության չեկերով, ապա նա բարձրացավ՝

| | |
|--------------------------|-------------------------|
| <i>ապրիլին</i> | -4100 |
| <i>մայիսին</i> | -6700 |
| <i>հունիսին</i> | -6200 |
| <i>հուլիսին</i> | -10000 |
| <i>օգոստոսին</i> | -13000 |
| <i>սեպտեմբերին</i> | -23000 |
| <i>հոկտեմբերին</i> | -30000 |
| <i>նոյեմբերին սկզբին</i> | -90000 |
| <i>նոյեմբերին վերջին</i> | -150000 ³¹ : |

Դարավազյազի եւ Նոր Բայազետի գավառների վիճակն ուսումնասիրելու համար 1919 թվականի նոյեմբերին Խորհրդարանը մի հանձնաժողով է կազմում, որը 1920 թ. հունվարին իր գեկուցագիրն է ներկայացնում Խորհրդարանին, որտեղ ասվում է. ,ընդհանուր առումով պարենավորման վիճակն ավելի քան հուսահատական է: Նոր Բայազետի գավառի 72033 բնակիչներից 29918-ը բացարձակ ջրավորներ են ճանաչված, իսկ 25791-ը, որոնք միջակ վիճակում էին գտնվում, միայն մի քանի շաբաթվա հաց ունեին³²:

Հարկ է ավելացնել, որ 1919 թվականին Հայաստանում գաղթականությունը մեծ թիվ էր կազմում,

²⁵ - Հեղ. կոլեգիա, Հայոց Պատմություն, Երևան 1994, էջ 244-46: *Daily.Am*

²⁶ - ՀժՊ, հ. 7, Երևան 1967, էջ 50:

²⁷ - ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 278, թ. 62-63: (ՀժՊ, հ. 7, էջ 52)

²⁸ - ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 5, գ. 253, թ. 22-23:(ՀժՊ, հ. 7, էջ 52):

²⁹ - ,Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», (փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու), Երևան, 1932, էջ 201:

³⁰ - ՀժՊ, հ. 7, էջ 57:

³¹ - ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4033, ց. 6, գ. 293, կ. 6, թ. 29: (ՀժՊ, հ. 7, էջ 52):

³² - ,Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», (փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու), Երևան, 1932, էջ 127-148:

որոնք ոչ միայն գործազուրկ էին, այլև անօթեւան, մերկ ու քաղցած: Պաշտոնական ոչ լրիվ տվյալների համաձայն գաղթականության թիվը 1919 թ, փետրվարին ըստ շրջանների կազմում էր.

| | |
|------------------|--------------|
| Ախտալում | -23,750 հոգի |
| Էջմիածնում | -42,600 |
| Աշտարակում | -12,880 |
| Նոր բայազետում | -27,923 |
| Միսիանում | -22,890 |
| Ալեքսանդրապոլում | -10,000 |
| Երևանում | -31,700 |
| Դիլիջանում | -12,000 |
| Ղարաբիլիսայում | -9,000 |

Մեծ թվով գաղթականներ կային նաև Հայաստանի մյուս շրջաններում: Գաղթականության ընդհանուր թիվը կազմում էր 263,393 մարդ³³:

Բազմաթիվ եւ բազմաբնույթ հարցեր գոյություն ունեին երկրի գանազան բնագավառներում, երկաթուղում եւ գանազան ձեռնարկություններում աշխատող բանվորների համար, հարատեւ պատերազմական գործողությունը հարեւանների դեմ եւ այլն եւ այլն:

Անգլո-ամերիկյան իմպերիալիստները ամեն տեսակ օգնություն էին ցույց տալիս դաշնակցականների՝ դաժանորեն ճնշելու Հայաստանի բանվորների եւ գյուղացիների պայքարը Սովետական իշխանության հաստատման համար: Այդ նպատակով անգլո-ամերիկյան գաղտնի ծառայությունները Անդրկովկասում եւ Հայաստանում ստեղծել էին իրենց սեփական հետախուզությունները: Անդրկովկասում գտնվող անգլիական օկուպացիոն գործերի հրամանատարությունը 1919 թ. մարտին դաշնակցական կառավարության արտաքին գործերի նախարարին հայտնելով Ալեքսանդրապոլում կոմունիստների աշխատանքի մասին, կարգադրում էր անմիջապես խիստ ճնշող միջոցների դիմել, դադարեցնելու համար այն: Բրիտանական ուժերի հրամանատար գեներալը Անդրկովկասում,- ասվում էր անգլիական հրամանատարության այդ գրության մեջ,- տեղեկություն ունի վստահելի աղբյուրներից, որ Ալեքսանդրապոլում բոլշևիկյան կոմիտե է հաստատված եւ որը որոշ ժամանակ է արդեն, ինչ գործուն պրոպագանդա է անում աշխատավոր դասի, բանակի եւ երկաթուղու բանվորների մեջ³⁴: Այնուհետև անգլիական գեներալը հրամայում էր քյապես կոչված դաշնակցական կառավարության ձեռք առնել ամենախիստ միջոցները՝ ճնշելու կոմունիստների աշխատանքը:

Ամերիկա-անգլիական եւ ֆրանսիական գավթիչները չէի խորշում թալանել սովի ճիրաններում գտնվող հայ ժողովրդին: Այսպես, օրինակ, ֆրանսիական իմպերիալիստները գավթեցին երկրում գտնվող բամբակի չնչին մնացորդները՝ չվճարելով ոչ մի կոպեկ: Հայաստանի բնակչությունից բազմաթիվ բողոքներ էին ստացվում ամերիկացիների կամայականությունների մասին: Բնակչությունը բողոքում էր, որ այսպես կոչված ամերիկյան ,օգնության կոմիտեի՝ ներկայացուցիչները բռնագրավում են անասունները եւ բնակչության վերջին կենսամթերքները: Դաշնակցականները իրենց հակատվետական պայքարում հաագործակցում էին

հակահեղափոխական խմբերի եւ կուսակցությունների հետ³⁵:

Դաշնակցականների տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի բնակչությունը ահաբեկված էր, այսպես կոչված, բազմաթիվ մաուզերիստական խմբերի կողմից, որոնց կողոպտելով ու սպանելով՝ ապրում էին ժողովրդի հաշվին³⁶:

Հասարակական-քաղաքական-տնտեսական այդ վիճակն էր տիրում երկրում, երբ հայկական առաջին պետությունը ավելի քան վեց-դարյա բացակայությունից հետո, չունենալով բավարար փորձառություն ու տնտեսական աղբյուրներ, վարելով արկածախնդրական քաղաքականություն³⁷, մխրճվելով օտարերկրյա գավթիչների գործունեության ոլորտի մեջ՝ ապրում էր ճգնաժամային պահեր:

1919 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին խորհրդակցությունը Երեւանում (Արշավիր Տեր-Ղազարյան, Ս. Կասյան, Ա. Մռավյան, Հ. Յաղոբյան, Ս. Խանոյան, Դ. Դուկասյան եւ մի շարք այլ բոլշևիկներ) ուր ստեղծվեց իրենց ղեկավար կենտրոնը, որը կոչվեց ՌԿ(Բ)Կ Հայաստանի կոմիտե կամ Արմենկոմ, որի կազմում մտան Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Դ. Շահվերդյանը, Ա. Մելիքյանը, Ս. Ալավերդյանը, Դ. Դուկասյանը, Ս. Խանոյանը: 1920 թ. հունվարին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների խորհրդաժողովը որոշեց արտաքին ու ներքին նպաստավոր պայմանների դեպքում նպատամբել եւ գրավել իշխանությունը: Նրանք այդպիսի նպատակավոր իրադարձություն համարեցին 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումը՝ Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի կողմից:

Կարմիր բանակի մուտքը Անդրկովկաս (1920 թ. սկզբին) եւ Ադրբեջանի խորհրդայնացումը ազդանշան հանդիսացան Հայաստանում ապստամբություն սկսելու համար: Ապստամբության կենտրոն դարձավ Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) քաղաքը: Բոլշևիկները որոշեցին 1920 թ. մայիսմեկյան հակակառավարական ցույցերը վերածել զինված ապստամբության: Ապստամբությունը ղեկավարելու համար ստեղծվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե (ՀՌՀԿ): Ապստամբների կողմն անցան հեղափոխական գաղափարներով տարված զինվորականության մի մասը եւ ,Վարդան գորավար՝ զրահագնացքը: Վերջինիս հրամանատար կապիտան Սարգիս Մուսայելյանը նշանակվեց ապստամբական ուժերի ղեկավար:

Այս դեպքերը Հայաստանի իշխանությունների մոտ լուրջ անհանգստություն առաջացրին: Պետության համար ստեղծվեց էլ

³³ - ,Առաջին մասայական հեղափոխական շարժումները Հայաստանում», (փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու), Երևան, 1932, էջ 78:

³⁴ - ՀՀ Պետական Կենտրոնական Արխիվ, ֆ. 67/199, գ. 12. թ. 77-78:

³⁵ - Հ. Էլչիրեկյան, Ա. Հակոբյան, Ուրվագծեր Սով. Հայաստանի Պատմության, Առաջին պրակ, Երևան, 1954, էջ 30-31: Հարկ է նշել, որ Դաշնակցությունը խիստ մխրճված է եղել համաշխարհային մատուսփոնիստական գործունեության եւ անգլո-մերիկյան եւ գերմանական հետախուզական վաղեմի համագործակցության ասպարեզում, որը շարունակվում է մինչ օրս: Այդ համագործակցության՝ գործակալության ոլորտում պիտի քննարկել օրինակ՝ Փետրվարյան խռովությունը, Հայոց եկեղեցու պառակտումը եւ Էջմիածնի թեմերի բռնագրավումը Կիլիկիայի կաթողիկոսության կողմից, որը շարունակվում է մինչ օրս, 1996 թ. Երևանի խռովությունը, Հայաստանի խորհրդարանում 1999 թ. հոկտեմբեր 27-ի ազգակործան ոճրագործությունը որոնց ,սպին գոյություն ունեն անվիճելի փաստեր, եւ շատ այլ օրինակներ: Մենք հանգամանքորեն անդրադարձել ենք եւ կանդորադառնա՞նք հետագա անցուդարձերի կապակցությամբ:

³⁶ - Հ. Էլչիրեկյան, Ա. Հակոբյան, նշվ. աշխ. էջ 35:
³⁷ - Օրինակ դաշնակցականների համագործակցությունը գեներալ Դենիկինի հետ՝ նրան թողնալով իրեն ուղարկում, վերջինս էլ ռազմամթերք էր ապահովում նրանց, առանց խորապես մտածելու ժողովրդի ապահովության եւ հետագա այրուհայրի դեպքերի կանխելու համար, քանի որ շուտով Դենիկինի բանակը ջախջախվեց կարմիր բանակի կողմից (ՀՀ Պետական Կենտր. Արխիվ, ֆ. 68/200, գ. 865, թ. 1):

ավելի վտանգավոր դրություն: Քաղաքական ճգնաժամը հաղթահարելու համար որոշվեց ստեղծել ուժեղ ձեռքի կառավարություն: Մայիսի 4-ին հրաժարական տվեց Ալ. Խատիսյանի կառավարությունը, եւ նրա փոխարեն կազմվեց այսպես կոչված Բյուրո-կառավարություն (Դաշնակցության ղեկավար մարմնի անդամներից): Կարչապետ նշանակվեց Համազասպ Օհանջանյանը (1873-1947): Նորաստեղծ կառավարությունը ձեռնարկեց մի շարք արտակարգ միջոցառումներ: Արգելվեցին գործադուլները եւ ցույցերը: Հիմնվեցին արտակարգ դատարաններ, սահմանվեց մահապատիժ եւ այլն:



Թեև մայիսի 10-ին ՀՈՒՀ-ն Ալեքսանդրապոլում իշխանությունը վերցրեց իր ձեռքը, եւ տապալված հայտարարեց դաշնակցական կառավարությունը եւ երկրում հռչակեց սովետական իշխանություն: Սակայն անվճարական գտնվեց եւ դանդաղկոտություն հանդես բերեց, հարձակման փոխարեն բռնեց պաշտպանողական դիրք, բանակցությունների անցավ եւ պետական ուժերին առիթ տվեց վերակազմավորվելու եւ հարձակման անցնելու, ուստի եւ մի քանի օր անց կառավարական ուժերը Մեպուհի (Արշակ Ներսիսյան) հրամանատարությամբ ստիպեցին ապստամբներին անձնատուր լինել: Ապստամբական բռնկումներ եղան նաև Կարսում, Մարիդամիշում, Նոր Բայազետում, Ղազախ-Շամշադինում եւ այլուր: Այդ ելույթները նույնպես ճնշվեցին: Գնդակահարվեցին ապստամբության ղեկավարներ Ստեփան Ալավերդյանը, Մարգիս Մուսայեյանը, Բագրատ Ղարիբջանյանը, Ղուկաս Ղուկասյանը եւ ուրիշներ:

Դաշնակցական բանակի զեներալ Խաչատուրովը, որը անցել էր ապստամբների կողմը դաշնակցական տեռորիստի գնդակից զոհվեց: Ապստամբության տասնյակ մասնակից ակտիվիստներ բանտարկվեցին: Կասեցվեց Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության գործունեությունը: Բոլշևիկների մի մասն անցավ ընդհատակ, իսկ մյուս մասը հեռացավ Ադրբեջան, որպեսզի այնտեղից նախապատ-րաստեր իշխանությունը գրավելու նոր գործողություններ:



Վ. Վազեղյան



Ս. Մատեյան



Գ. Զոհրայան

Այսպիսով, Մայիսյան ապստամբությունը պարտվեց: Պարտության հիմնական պատճառն այն էր, որ ապստամբ բոլշևիկները հավատացին պետության երկդիմի քաղաքականությանը շուտով հարձակման փոխարեն պաշտպանության դիմեցին, որից պետությունը օգտվելով վերամիավորեց իր ուժերը: Մյուս կողմից ապստամբության ղեկավարները հույսը դրել էին դրսի՝ Կարմիր բանակի օգնության վրա, որը տեղի չունեցավ: Ապստամբությունը ընթացավ անկազմակերպ, անջատ-անջատ, առանց միասնական ղեկավար կենտրոնի³⁸:

Դաշնակցականների խիստ հաշվեհարդար նստեցին բոլշևիկների հետ: Որպես օրինակ՝ 1937 թ. մարտի 17 թվակիրի մի ,Խիստ գաղտնի գեկացագրիքը վկայում է այդ մասին.

ՀԿ(Բ) Կենտկոմի քարտուղար ընկ. Ամատունուն
1920 թ. Կարսում բոլշևիկյան Մայիսյան ապստամբության
ինը բոլշևիկների, Ռազմահեղափոխական կուսիտեի նախագահ
Ղուկաս Ղուկասյանի սպանության գործի կապակցությամբ.
Չեկուցագիր³⁹

17 մարտի 1937 թ.
 Խիստ գաղտնի

Թիվ 18/163

Դատախազությունը հայտնաբերել է կալանավորել է հայտնի դաշնակցական խմբապետներ Երեմ Մխիթարյանին (Շեկ Երեմ), Սահակ Քոչարյանին (Սեւ Սահակ), Մխիթար Պողոսյանին, Այվազ Այվազյանին եւ Աբգար Տոնոյանին, ովքեր մեղադրվում են 1920 թ. Կարսում բոլշևիկյան ապստամբության ղեկավարների գնդակահարության մեջ:

Հայկական ԽՍՀ դատախազ Պ. Թորոսյան⁴⁰
 1929 թ. փետրվարի 27-ի մի գաղտնի գեկուցագիր վերաբերում է կալանավորված Նիկոլայ Կրմենանցին, որը 1921 թ. եղել է դաշնակցական հակահեղափոխության պետ: Նա Սժրեիի Չանգեզուրյան իշխանության ժամանակ Մխիթարի շրջանում մեծ դեր է խաղացել կոմունիստներին հետապնդելու, բանդարկելու, ծեծելու եւ գնդակահարելու գործում⁴¹:

Դաշնակցականների ոճնագործություններ նույնիսկ շարանուկվել են Խորհրդային իշխանության ժամանակ: Օրինակ 1925 թ. հուլիսի 26 լույս 27-ի գիշերը Ներքին Աղջաղապ գյուղում, գյուղխորհրդի քարտուղար Մանուկ Խուշոյանը սպանվել է զլխից ստացած Սահակ Սահկյանի ,Մաուզերե սիստեմի ատրճանակի 3 գնդակներից⁴²:

Այդուհանդերձ, չնայած Մայիսյան ապստամբությունը ճնշվեց, սակայն այն սասանեց կառավարության դիրքերը եւ վիթխարի նշանկություն ունեցավ հետագայում սովետական իշխանության հաստատման համար⁴³:

³⁸ - ՀԺՊ, հ. 7, էջ 83-94:

³⁹ - Հատված գեկուցագրից:

⁴⁰ - ՀՀ ՀԲԿԳ ԿՊԱ, Թ. 1, գ. 17, գ. 84, թ. 31-37: (ՀՅԳ-ը եւ Խորհրդային իշխանությունը՝ Փաստաթղթերի ժողովածու, խ.բագիր պրոֆ. Վ. Ն. Ղազախեցյան, Երևան 1999, էջ 330):

⁴¹ - ՀՀ ՀԲԿԳ ԿՊԱ, Թ. 1, գ. 9, գ. 44, թ. 9: (Նույն տեղում, էջ 161):

⁴² - Դաշնակցական տեռորիստի գործը, Չ. Աշրաֆյանի առաջաբանով, Երևան 1927, էջ 336-345: (ՀՅԳ-ը եւ Խորհրդային իշխանությունը՝ Փաստաթղթերի ժողովածու, խ.բագիր պրոֆ. Վ. Ն. Ղազախեցյան, Երևան 1999, էջ 200-202):

⁴³ - Հեղինակների կոլեգիա, Հայոց պատմություն, Երևան 1994, էջ 246-248:

Հայաստանի Հանրապետություն

Կոմանդոս. Հարկավոր է վերադարձնել հայկական կողմի կորցրած ռազմավարական նշանակության բարձունքները



Հայկական կողմը ռազմավարական նշանակության բարձունքներ է կորցրել եւ հարկավոր է վերադարձնել դրանք: Այս մասին թղթակցի հետ զրույցում հայտարարեց արցախյան պատերազմի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը՝ Կոմանդոսը:

Նրա խոսքով, չձեռնարկվեց այն, ինչ հարկավոր էր: «Իսկ հիմա դա թաքցնելու համար ասում են, որ դրանք այնքան էլ կարելու բարձունքներ չէին: Դրանք մեր կարելու ռազմավարական բարձունքներն են: Հիմա հարկավոր է մտածել դրանք վերադարձնելու մասին, որպեսզի մարդիկ կարողանան հանգիստ ապրել նույն Թալիշում, Մարտակերտում եւ Մատաղիսում: Բնականաբար, հայտարարությունները, որ անում են մեր որոշ պատգամավորներ, ելնում են վերը ասվածից, եւ դա շատ տխուր է»,- ասաց Արկադի Տեր-Թադևոսյանը:

Իսկ ինչ անել՝ այդ բարձունքները վերադարձնելու համար, գեներալ-մայորի խոսքով՝ այդ մասին արդեն մեր Պաշտպանության նախարարությունը եւ ղեկավարությունը պետք է մտածեն:

«Մենք շատ բան կորցրեցինք եւ կկորցնենք այդ բարձունքների պատճառով, որոնք հանձնեցինք հյուսիսում: Թալիշում մարդ չի ապրում: Գնդակոծության տակ է Ղարաբաղի խոշորագույն քաղաքը՝ Մարտակերտը: Բնականաբար, պետք է վերադարձնել բարձունքները, որպեսզի մարդիկ կարողանան հանգիստ վերադառնալ»,- ամփոփեց Կոմանդոսը:

ԼՂՀ փոխվարչապետ. Այս բոլոր տարիներին Արցախը պատրաստվում էր պատերազմի



Այս բոլոր տարիներին Արցախը պատրաստվել է պատերազմի, եւ վատ չի պատրաստվել: Այս մասին հարցազրույցում հայտարարեց ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը:

«Պատրաստվել ենք այնքան, որքան ռեսուրսներն են թույլ տվել»,- ասաց փոխվարչապետը: Որպես օրինակ նա նշեց «Հայաստան» հիմնադրամի միջոցներով կառուցվող Քարվաճառի ճանապարհի կառուցումը: «Եթե պատրաստ չլինեինք, կորուստներն ավելի մեծ կլինեին»,- ընդգծեց Աղաբեկյանը:

Հայտնի են ապրիլյան մարտերի ընթացքում Ադրբեջանի իրական կորուստները



Artsakhpress.am. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ապրիլի սկզբին սանձազերծված լայնամասշտաբ ռազմական գործողություններում Ադրբեջանի կորուստները մինչ վերջերս գնահատվում էին մոտ 180-200 զոհվածներ, այդ թվում՝ մոտ 30 հատուկ ջոկատայիններ, երկու ուղղաթիռ, երեք տանկ եւ երկու անօդաչու թռչող սարք:

Սակայն OSTKRAFT վերլուծական կենտրոնի աղբյուրների կողմից բերվող փակ տվյալներով՝ Ադրբեջանի իրական կորուստը կազմել է գրեթե 800 մարդ:

Ինչպես հաղորդում է OSTKRAFT-ը համոզմունք է հայտնում, որ հենց կորուստների այդ չափն է Ադրբեջանի ղեկավարությանը հարկադրել կանգնեցնել ագրեսիան եւ վերադառնալ բանակցությունների սեղան: «Հաշվի առնելով այդ տվյալները՝ խորապես չհիմնավորված են երեւում Ռուսաստանում Ադրբեջանի դեսպան Փոլադ Բյուլբյույոյիի այն հայտարարությունը, թե «Բաքուն պատրաստ է ԼՂ-ի խնդիրը լուծել ռազմական ճանապարհով», քանի որ ԼՂ-ի խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու համար Ադրբեջանը ոչ ուժեր, ոչ էլ միջոցներ չունի», -նշում է վերլուծական կենտրոնը՝ ընդգծելով, որ միակ բանը, որ Թուրքիայի օգտին իր չնտածված գործողություններով հրահրել է Ադրբեջանը, դա Հայաստանի կողմից ԼՂ-ի հնարավոր ճանաչումն է:

OSTKRAFT վերլուծական կենտրոնը հիշեցնում է, որ ապրիլի սկզբին ղարաբաղյան հակամարտության գոտում լուրջ մարտական բախումներ են տեղի ունեցել Ադրբեջանի ՉՈւ եւ ԼՂ-ի միջեւ, ինչի համար են Հայաստանում, եւ ԼՂ-ում Ադրբեջանի զինված ուժերին մեղադրել են շփման գծի հարավային, հարավ-արեւելյան եւ հյուսիս-արեւելյան ուղղություններով հարձակում գործելու մեջ: Ադրբեջանը մինչ այժմ չի հրապարակել ապրիլի սկզբին ԼՂՀ-ի դեմ իր ագրեսիայի արդյունքում կրած կորուստի իրական չափը:

Meydan TV-ն իր հետազոտությունների արդյունքներով հայտնել է, որ ադրբեջանական կողմի կորուստը կազմում է 101 զինձառայող եւ միաժամանակ նշել, որ այդ թիվը կարող է շատ ավելի մեծ լինել: Միջազգային Bellingcat վերլուծական խումբը հայտնել էր, որ ապրիլի 1-5-ին Ադրբեջանի կորուստն, իր «զոհված զնահատականներով», նվազագույնը 400 զինձառայող է:

Հիշեցնենք, որ ԼՂՀ ՊԲ տվյալներով՝ ապրիլի 1-5-ին ԼՂՀ դեմ ռազմական սադրանքին հայկական կողմի ջախջախիչ հակահարվածի արդյունքում Ադրբեջանը կորցրել է 2 ուղղաթիռ, 24 տանկ, 6 զրահապատ մեքենա, 12 անօդաչու

թոշոյ սարք, 1 ինժեներական մեքենա, 1 SOU-1Ա հրանետ, 1 ՀՄՄ, 1 «Գրադ» ՀԿՌՀ: Մարտական գործողությունների ընթացքում ադրբեջանական զինուժը տվել է ավելի քան 500 կորուստ, մոտ 2000 վիրավոր:

«Այլևս ոչ ոք չկա, որի վրա հույս դնենք. մենք պետք է զենք արտադրենք». Կոմանդոս



Արցախյան ազատամարտի հերոս, գեներալ-մայոր Արկաղի Տեր-Թադևոսյանը դրական է գնահատում այն փաստը, որ այս պահին օրակարգում ՀՀ կողմից Արցախի ճանաչման հարցն է: «Այդպիսի տեսակետ ունի մեր ղեկավարությունը, ճիշտ են անում, որ քննարկում են այդ հարցը: Բայց մենք ունենք նաև Մինսկի խումբ, պետք է այդ երկու աշխատանքը համատեղել: Ես կողմ եմ, որ այս հարցի մասին խոսվի, բայց կոնկրետ որոշումը պետք է համաձայնեցնել Մինսկի խմբի հետ: Դա նրա համար, որ բանակցությունների հարցը չխախտվի, այդ օրգանիզմն աշխատի», - «Ա1+»-ի հետ գրույցում ասաց նա: Մի կողմից էլ հերոսը շեշտում է՝ ես քաղաքական գործիչ չեմ և չեմ ուզում մտնել այդ հարցերի մեջ:

ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը երեկ տեսակետ էր հայտնել, որ մենք չենք կարող զենք արտադրել, քանի որ այդ դեպքում մեր քթին կխփեն («Հիմա ենթադրենք մի հատ զենք ենք թողարկել, մենք շուկա ունենք: Չունենք: Ուրեմն պիտի դուրս բերենք, իսկ դրսում մեր քթին այնպես կխփեն: Միջազգային զենքի շուկան կյանքի ու մահվան կռիվ է, եւ ամեն մի քոստո երկիր չի կարող մտնել այնտեղ», - ասել էր Ռադիկ Մարտիրոսյանը):

Ի՞նչ տեսակետ ունի պարոն Տեր-Թադևոսյանն այս մասին. «Առաջին օրվանից ասում ենք, որ մենք խաղաղ ժողովուրդ ենք, մեզ տվեք գումար և ամեն ինչ կանենք: Մեր ազգը շատ տաղանդավոր է, ինձ մոտ խումբ է աշխատում, բացի այդ՝ գայիս են մարդիկ, և առանց գիտական կրթության՝ առաջարկում են իրենց օգնությունը: Եվ ասում են, թե ինչպես կարող ենք զենք արտադրել: Կարծում եմ՝ մենք պետք է զենք արտադրենք, անհրաժեշտ է դա: Թուրքիան զենք արտադրում է, Պակիստանն արտադրում է, Ուկրաինան, Ռուսաստանն օգնում են Ադրբեջանին: Իսկ մեզ ո՞վ է օգնում: Մենք պետք է ինքներս մեզ օգնենք, այլևս ոչ ոք չկա, որի վրա հույս դնենք»:

Գեներալ-մայորը շարունակում է աշխատանքը տարբեր երկրներից ժամանած գեներալների հետ: «Ուզում ենք օգտակար լինենք բանակին, չքննադատենք, այլ կոնկրետ գործով զբաղվենք», - շեշտեց նա:

Չի կարելի պաշտպանվել, պետք է հարձակվել, հաղթանակը հարձակման մեջ է. Արկաղի Տեր-Թադևոսյան (Կոմանդոս)



nyut.am-ը գրում է. «Արցախն անցել է որպես պետություն ճանաչվելու սահմանված բոլոր փուլերը, բայց դեռևս ճանաչում չի ստացել միջազգային կառույցների կամ պետությունների կողմից: Ես զինվորական մարդ եմ, այդ հարցի մեջ չեմ խորանում, մասնագիտական կարծիք չունեմ, թող դրանով իրավասու մարդիկ զբաղվեն, բայց իմ կարծիքը հստակ է՝ ես գտնում եմ, որ Հայաստանն ու Արցախը մեկ պետություն պետք է լինեն: Մենք բոլորս հայ ենք, իրար կողքի ենք ապրում, մեր միջև սահմաններ չպետք է լինեն. մեզ երկու նախագահ, երկու վարչապետ, չորս կամ չորս հարյուր հատ մեքենա պետք չէ», - այսօր մեզ հետ գրույցում ասաց Արցախի հերոս, ՀՀ պաշտպանության նախկին փոխնախարար, գեներալ-մայոր Արկաղի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս)՝ անդրադառնալով ՀՀ-ի կողմից Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին օրենսդրական նախաձեռնությանը: Ա. Տեր-Թադևոսյանի խոսքով, մեր թուլությունն այն է, որ մոռացել էինք, որ թշնամի ունենք և մեր պարտականություններով չէինք զբաղվում, և խոսքը ոչ թե բանակի, այլ ժողովրդի մասին է: Գեներալ-մայորը շեշտեց, որ, եթե օրինակ, սովորած լինեինք 2011-ին Ալ-Քաիդայի կողմից հրատարակված ԱԹՍ-ներից պաշտպանվելու 22 միջոցներից գոնե կեսը, ապա դրանց պատճառով 6-7 գոն չէինք տա: «Հիմա շատ գործ կա անելու, թերություններ էլ կան, բայց այս պահին ոչ թե պետք է նստենք, թերությունները գտնենք, այլ ամեն մեկս մեր գործը լավ անենք», - ասաց Կոմանդոսը՝ տեղեկացնելով, որ իր կոչին հետևելով՝ շատ պաշտոնաթող գեներալներ և ռազմական փորձագետներ են ժամանել Հայաստան, որոնց հետ միասին փորձելու են օգտակար գործ անել բանակի, պետության համար: Նա չցանկացավ մանրամասնել, թե քանիսն են արձագանքել իր կոչին և գործընթացն ինչ փուլում է գտնվում, միայն ասաց, որ չափից դուրս շատ մարդ է ուզում օգտակար լինել ընդհանուր գործին. «Մեզ համար այս ամենը շոու չէ: Պետք է մոտ ժամանակներս պետական մարմինների հետ հանդիպենք, քննարկենք ծրագրերը, և միասնական ուժերով ճիշտ և օգտակար քայլեր անենք», - շեշտեց նա: Կոմանդոսը չի ընդունում այն միտքը, որ մենք փայլուն հաղթանակ ենք տարել ապրիլյան պատերազմում. ճիշտ է, կանգնեցրել ենք թշնամուն, ձախողել ենք նրա պլանները, բայց դա դեռ բավարար չէ: «Մենք վերլուծել ենք սխալները, դասեր ենք քաղել և հիմա արդեն պատրաստ ենք հարձակման. պետք է կտրենք նրանց և առաջ գնանք: Սիրում ենք ասել՝

նժողեհական ենք, խելոք ազգ ենք, բայց միշտ մի բան մոռանում ենք՝ ուժն է ծնունդ իրավունք»,- ասաց նա և, անդրադառնալով այն խոսակցություններին, որ զինվորականների մոտ դժգոհություն կա, որ քաղաքական վերնախավը կրակի դադարեցման մասին որոշում կայացրեց, նշեց. «Ես եղել եմ Ղարաբաղում, այնտեղ տարբեր կարծիքներ կան: Ես մի բան գիտեմ՝ չի կարելի պաշտպանվել, պետք է հարձակվել. հաղթանակը հարձակման մեջ է»:

Կոմանդոսը համոզված է, որ թուրքերին հիմնական պատասխանը տվել են առաջնագծում կանգնած զինվորները, որոնք ոչ միայն բանակում են կռվել սովորել, այլև այդ գիտելիքը ստացել են իրենց հաղթանակած հայրերի ու պապերի դաստիարակության միջոցով. «Մեր այդ տղաների շնորհիվ է, որ թուրքերը չկարողացան իրենց ծրագիրն իրագործել, իսկ նրանք ուզում էին արագ հարձակման միջոցով կոտրել մեզ՝ հիմք ընդունելով այն տեսակետը, որ հարձակվողը սովորաբար մեծ հաղթանակ է տանում, սակայն մեր տղաների ճիշտ գործողությունների շնորհիվ Ադրբեջանը ոչ մի հաղթանակ էլ չունեցավ»,- ասաց նա՝ հավելելով, որ պետք չէ մոռանալ, որ թշնամին լավ սովորեցնողներ ունի, լավ գենք է տալիս իր զինվորին, և պետք է միշտ պատրաստ լինել և պատրաստ լինել ոչ թե պաշտպանվելու, այլ հարձակվելու. «Նրանք կարծում են՝ հայերը չեն կրակելու իրենց վրա, բայց թե քեզ խփում են, պետք է նույն կերպ պատասխանել»:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ առաջնագծում հիմնականում անապահով ընտանիքների երեխաներն են կանգնած, Ա. Տեր-Թադևոսյանն ասաց, որ այդ հարցում մեղադրում է այն մարդկանց, որոնք կարծում են, որ իրենց երեխաներն ավելի տաղանդավոր են և արժանի են մեքենա վարելու միայն:

Թուրք ոսկերիչները ՌԴ պատժամիջոցներից խուսափելու համար տեղափոխվում են Հայաստան. HaberVaktim



ՌԴ-ի օդանավը Սիրիայում խոցելուց հետո պատժամիջոցների առաջ կանգնած թուրք ոսկերիչներն իրենց գործի միակ փրկությունը տեսնում են Հայաստան եւ Իրան տեղափոխվելով:

Թուրքական HaberVaktim կայքի փոխանցմամբ՝ Ստամբուլի Փակ շուկայի (Քափալըշարը) ոսկերիչների ամենօրյա խոսակցությունների թեման է ռուսական պատժամիջոցներից խուսափելու համար Իրան եւ Հայաստան տեղափոխվելը:

Նշվում է, որ ռուսական կողմը թուրքական ոսկիների համար սահմանել է 42 տոկոս մաքս եւ լրացուցիչ

դժվարություններ, որն էլ ստիպել է թուրք ոսկերիչներին այլընտրանք փնտրել ռուսական շուկա մտնելու համար:

Թուրք ոսկերիչների մի մասն արդեն Իրան է մեկնել՝ տեղացիների հետ համատեղ ընկերություններ հիմնել, մի մասն էլ՝ հիմնականում ստամբուլահայեր, Հայաստան է Նշվում է, որ Հայաստանի շուկան նախընտրած թուրք ոսկերիչները հաշվի են առել տեղի էժան աշխատուժն ու ՌԴ ու հետխորհրդային մյուս երկրներ ոսկի արտահանելու հեռանկարները:

Նշվում է, որ Ստամբուլի Փակ շուկայում արդեն որոշ ոսկու խանութներ փակվել են, որոնց սեփականատերերը, ըստ պնդումների տեղափոխվել են Հայաստան:

Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի հայտարարությունը. Նախագիծ



Արիւյան պատերազմի բանավոր պայմանավորվածության արդյունքում զինադադարի ռեժիմի անցնելուց հետո Արցախի հանրությունը ԼՂՀ Ազգային Ժողով էր մտցրել մի հայտարարության նախագիծ, որով հնարավորինս կկանխվեր Մարտակերտի շրջանում օրեր շարունակ տեղի ունեցող պատերազմը: Դա արվել է օրենքին համապատասխան, այսինքն, նախագիծն ուղարկվել էր իրեն ընդդիմադիր հռչակած «Ազգային վերածնունդ» կուսակցության նախագահ, ԱԺ պատգամավոր Հայկ Խանուսյանին, որը մի քանի օր անց պատասխանեց, որ նախագիծը ներկայացված է պառլամենտի խմբակցությունների քննարկմանը, եւ պետք է հրավիրվի նիստ, որի ընթացքում հայտարարությունը պետք է հրապարակվի:

Սակայն, ինչ-ինչ պատճառներով, Ազգային Ժողովը այդպես էլ նիստ չհրավիրեց, պատճառաբանելով, որ պատգամավորների մի մասը գտնվում է առաջնագծում (չնայած, Արցախում բոլորը գիտեն, որ առաջնագծում առաջին օրվանից մինչ այսօր գտնվում է միայն պատգամավոր Վիտայի Բալասանյանը, իսկ մնացածը կատարում են սուրհանդակների դերը): Հաջորդ պատգամավորը, որի միջոցով նախագիծը պետք է մտներ ԱԺ, դա «Շարժում-88» կուսակցության նախագահ Էդուարդ Աղաբեկյանն է, որն ընդհանրապես չպատասխանեց, թե ինչ է ձեռնարկել այդ ուղղությամբ:

Առաջարկ արվեց կառավարության ղեկավար Արայիկ Հարությունյանին, որը նաեւ «Ազատ Հայրենիք» կուսակցության ղեկավարն է, որն էլ իր հերթին պառլամենտում ամենամեծ խմբակցությունն ունի: Կառավարությունից հայտնեցին, որ ԼՂՀ ԱԺ ձայնը ներկա պահին ընդհանրապես ոչ մի դեր չի կարող խաղալ, քանի որ մեր պատգամավորների ձայները ընդհանուր առմամբ լուրջ չեն ընդունվում...

Հասարակությանը այլ ելք չի մնում, քան դիմել լրատվամիջոցներին ու հրապարակել այդ

հայտարարության նախագիծը: Քանի որ հասարակության մի մասը այժմ առաջնագծում է, մեզ իրավունք ենք վերապահում խոսել նրա անունից:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԶԱՐԱՄՅԱՆ

Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի հայտարարությունը. Նախագիծ

Ապրիլի 2-5 Ադրբեջանը նոր ագրեսիա է նախաձեռնել Արցախի Հանրապետության դեմ, որի հետևանքով խախտվել է մեր երկրի Մահմանադրությամբ ամրագրված պետական սահմանը, եւ տուժել են ինչպես կանոնավոր բանակի զինծառայողներ, այնպես էլ խաղաղ բնակիչներ: Բացի այդ, Ադրբեջանի զինված ուժերը խախտել են միջազգային նորմերով պատերազմ վարելու բազմաթիվ դրույթներ, ինչի հետևանքով Թալիշ գյուղի երեք բնակչի դիակները վանդալիզմի են ենթարկվել: Խոշտանգումների եւ անարգանքի են ենթարկվել նաեւ մեր բանակի զորքի ընկած զինծառայողները, ինչի մասին ասված է Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի տասնութ էջանոց զեկույցում:

Ադրբեջանի կողմից իրականացված նոր ագրեսիան եւս մեկ անգամ ցույց տվեց, որ Ադրբեջանը երբեք միայնակ չի դիմում պատերազմի, մինչեւ չի ունենում համապատասխան «հրահանգներ» եւ «թույլտվություն», ընդ որում տարբեր առյուծներից կամ երկրներից:

Տարիներ շարունակ մենք ականատեսն ենք եղել եւ այսօր էլ ականատեսն ենք, որ Ադրբեջանը սրում է իրավիճակը սահմանագծում տարբեր հանդիպումների, համաժողովների, նիստերի նախօրեին եւ երբեք չի թաքցրել, որ դա իր այսպես կոչված «ռազմական դիվանագիտությունն» է:

Ինչպես հայտնի է, 2016 թ. հունվարի 26-ին ԵՄԽԿ-ն մերժեց բրիտանացի պատգամավոր Ռոբերտ Վալտերի կողմից պատրաստված «Բռնությունների մակարդակի ան՝ Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի այլ գրավյալ տարածքներում» բանաձեռը, որի համաձայն, հայկական ուժերը պետք է դուրս գան իրենց հսկողության տակ գտնվող տարածքներից:

Նույն օրը Վեհաժողովն ընդունեց մեկ այլ՝ «Ադրբեջանի միջսահմանային բնակչությունը միտումնավոր զրկված է ջրից» բանաձեռը, որը ներկայացրել էր բռնիացի պատգամավոր Միլիցա Մարկովիչը: Համաձայն բանաձեռի, հայկական ուժերը արգելափակել են ադրբեջանցիների մուտքը դեպի Արցախի Հանրապետության Սարսանգի ջրամբարը:

Ըստ Վեհաժողովի ընդունած բանաձեռի երրորդ կետի, Վեհաժողովը համարում է, որ կանխամտածված արհեստական էկոլոգիական ճգնաժամի ստեղծումը պետք է դիտարկել որպես «ագրեսիա շրջակա միջավայրի միջոցով» (environmental aggression) եւ ընկալվում է որպես մեկ երկրի թշնամական ակտ մյուսի նկատմամբ, որի նպատակն է ստեղծել բնապահպանական աղետի գոտի եւ անհնար դարձնել բնակչության բնականոն կյանքը:

Բանաձի չորրորդ կետով «Վեհաժողովը ափսոսանք է հայտնում, որ Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի եւ հարակից այլ տարածքների օկուպացիան նմանատիպ մարդաիրական եւ բնապահպանական խնդիրներ է ստեղծում Դաշտային Ղարաբաղի տափաստաններում ապրող Ադրբեջանի քաղաքացիների համար»:

Բանաձեռի յոթերորդ կետով «Վեհաժողովը խստորեն դատապարտում է Հայաստանի եւ հայկական իշխանությունների խորհրդարանական պատվիրակության

համագործակցության բացակայությունը այս զեկույցի նախապատրաստման գործընթացում»:

Նշենք նաեւ, որ ընդունված հակահայկական բանաձեռն ողջ կամ գրեթե ողջ կազմով կողմ են քվեարկել Ադրբեջանը, Թուրքիան, Վրաստանը, Ուկրաինան, Մերթիան: Ողջ կազմով դեմ են քվեարկել Հայաստանը, Շվեդիան, Շվեյցարիան: Զվեները կիսվել են Ֆրանսիայի, Գերմանիայի, Հունաստանի, Իտալիայի պատգամավորների մոտ:

Քվեարկության արդյունքում 98 կողմ, 71 դեմ ու 40 ձեռնպահ հարաբերակցությամբ հակահայկական բանաձեռը ընդունվել է:

Հաշվի առնելով վերը նշվածը, Արցախի Հանրապետության Ազգային Ժողովը հայտարարում է.

– Արցախի իշխանությունները բազմաթիվ անգամ են առաջարկել Ադրբեջանին՝ բանակցել դեմ առ դեմ բանաձեռում նշված Սարսանգի ջրամբարի ջրի օգտագործման շուրջ, սակայն մեր հարեւան երկիրը կտրականապես հրաժարվում է որեւէ բանակցություններ վարել Արցախի Հանրապետության հետ: Բացի այդ, Ադրբեջանի սահմանամերձ բնակավայրերի բնակչությունը տարիներ շարունակ հանգիստ օգտվում է ջրամբարի ջրից, եւ հայկական ուժերը երբեք չեն խոչընդոտել խաղաղ բնակչության բնականոն կյանքին: Այդ իսկ պատճառով ԵՄԽԿ մեղադրանքը՝ հայկական կողմից արհեստական էկոլոգիական ճգնաժամի ստեղծման մեջ, համարում ենք անհիմն եւ Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից ապրիլյան ագրեսիայի հնարավոր աջակցություն պարունակող:

Ինչ վերաբերվում է Հայաստանի եւ հայկական իշխանությունների խորհրդարանական պատվիրակության համագործակցության բացակայությանը այս զեկույցի նախապատրաստման գործընթացում, ապա մենք հայտարարում ենք, որ այս կետը ի հայտ է բերում այն հանգամանքը, որ ԵՄԽԿ-ն կիրառում է երկակի ստանդարտներ: Սարսանգի ջրամբարը գտնվում է Արցախի Հանրապետության տարածքում, իսկ Արցախի Հանրապետությունը ԵՄԽԿ-ում չունի խորհրդարանական պատվիրակություն, որը պետք է համագործակցի նման զեկույցների նախապատրաստման գործընթացում:

Ադրբեջանը չի կարող դիմել ՄԱԿ-ին՝ 1994-ի հրադադարի պայմանագրի չեղարկման համար. ԱԳՆ. Tert.am



Ադրբեջանը չի կարող դիմել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ 1994թ.-ի հրադադարի մասին պայմանագրի չեղարկման համար: Այս մասին Tert.am-ի հետ զրույցում նշել է ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Շավարշ Քոչարյանը:

«Նման բան գոյություն չունի, որ ՄԱԿ-ը չեղարկի պայմանագիրը: Հակառակը: ՄԱԿ-ի անդամ պետությունը պարտավոր է հարգել միջազգային պարտավորությունը: Դա ընդամենը փորձ է ձեռքբազատվել միջազգային պարտավորությունից: Ադրբեջանին ձեռք չի տալիս 94թ.-ի

հրադադարի պայմանագիրը, որովհետև այնտեղ կա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստորագրությունը, ինչը նշանակում է, որ Ադրբեջանն առնվազն ընդունել է ԼՂ-ն որպես հակամարտության կողմ»,- շեշտեց Շավարշ Բոչարյանը:

Հիշեցնենք, որ ՀՀ ԱԳՆ-ի տարածած հաղորդագրության համաձայն՝ Ադրբեջանը նամակ էր ուղարկել ՄԱԿ-ին՝ հրադադարի մասին պայմանագրի չեղարկման պահանջով: Հարցին, թե հնարավոր է, որ Ադրբեջանը շրջանառության մեջ է ուզում դնել հրադադարի մասին նոր պայմանագիր, դրա համար է ուզում չեղարկել 94թ.-ի կնքվածը, Շավարշ Բոչարյանը պատասխանեց. «Որևէ այլ պայմանագիր չկա: Ադրբեջանը հղում է անում բանավոր պայմանավորվածության վրա, բայց դա պայմանագիր չէ (նկատի ունի Մոսկվայում քառօրյա պատերազմից հետո հրադադարի մասին ձեռք բերված համաձայնությունը- խմբ.): Դա ընդամենը պայմանավորվածություն էր կապված նրա հետ, որ վերականգնվի 94թ.-ի խախտված ու կրակի դադարեցման մասին ռեժիմը»:

Իսկ կարծիքներին, որ Ռուսաստանն իր ակտիվությամբ փորձում է Մինսկի խմբի աշխատանքը ստվերել, Շավարշ Բոչարյանն արձագանքեց այսպես. «Այո, 94թ.-ի պայմանագիրը հրադադարի մասին կնքվել է Ռուսաստանի միջնորդությամբ: Սա բնական է, քանի որ Ռուսաստանն այս տարածաշրջանը միշտ ընկալում է որպես իր ազդեցության գոտի»:

Փորձագետ. ԼՂՀ-ն Հայաստանին միավորելու լուրջ իրավական հիմքեր կան



Հայաստանը պետք է աշխարհին հայտարարի, որ լեռնի-ստալինյան հանցագործությունները չեն կարող հիմք լինել Հարավային Կովկասի համար, քանի որ բազմաթիվ օրինակները ցույց են տվել, որ դրանք հիմք չեն դարձել այլ երկրների համար: Թղթակցի հետ զրույցում անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հարցին՝ այս մասին հայտարարեց «Մոդուս Վիվենդի» վերլուծակա կենտրոնի ղեկավար, փորձագետ Արա Պասայանը:

Նա հիշեցրեց, որ Հայաստանի կառավարությունում Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման մասին օրինագիծ է քննարկվել: «Ես ինքս երբեք ԼՂՀ-ի ճանաչման կողմնակից չեմ եղել, քանի որ դա մեզ խնդիրների առջև կկանգնեցնի, օրինակ՝ քաղաքացիության հարցի: Ես միշտ հանդես եմ եկել Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միավորելու օգտին»,- նշեց Արա Պասայանը՝ ընդգծելով, որ դրա համար իրավական լուրջ հիմքեր կան, մասնավորապես, 1920 թվականի փետրվարի 24-ի Ազգերի Լիգայի զեկույց-առաջարկը, որի համաձայն՝ այդ ամբողջ տարածքը Հայաստանի տարածք է ճանաչվել:

«Նետուաբար՝ մենք պետք է Հայաստանի գրավյալ տարածքների հարց բարձրացնենք: 1921 թվականին Խորհրդային Կարմիր բանակը գրավեց այդ տարածքը եւ հանձնեց մեկ այլ վարչական միավորի: 1991 թվականին այդ ռեժիմը փլուզվեց, սխալները շտկվեցին, խորհրդային

գործերը դուրս բերվեցին Արևելյան Եվրոպայից, մասնատված երկրները միավորվեցին, երկրները, որոնք անկախ չէին, անկախություն ձեռք բերեցին: Այսինքն՝ լեռնի-ստալինյան համակարգը փլուզվեց: Հիմա, հայտնի չէ ինչու, ցանկանում են այդ համակարգը վերականգնել Հարավային Կովկասում՝ հայերի հանդեպ, դա անընդունելի է»,- ընդգծեց Արա Պասայանը:

Հայաստանը, ըստ Պասայանի, պետք է միջազգային հանրությանը խնդրի սատարել երկրի տարածքներն ազատագրելու հարցում, որոնք շարունակում են Ադրբեջանի կողմից բռնագավթված մնալ:

«Նախիջևեանն ու Դաշտային Ղարաբաղը մինչև հիմա բռնագավթված են: Լեռնային Ղարաբաղը դե-յուրե միշտ Հայաստանի տարածք է եղել, մենք պարզապես ազատագրել ենք այդ տարածքի փոքրիկ մասը»,- հավելեց Արա Պասայանը:

ԼՂՀ ՊԲ զինվորների կողմից հայտնաբերվածը մ.թ. առաջին դարի դամբարաններ են. հնագետ



Մայիսի 5-ին Արցախի արևելյան շրջանում ԼՂՀ Պաշտպանության բանակի զինվորների կողմից ինժեներական աշխատանքներ կատարելու ժամանակ հայտնաբերված անտիկ շրջանի դամբարանադաշտում սալարկղային դամբարաններ են, հավանական է մ.թ. առաջին դարով թվագրությունը: Այս մասին Այս Facebook-ի իր էջում տեղեկացնում է հնագետ, Արցախում Տիգրանակերտի արշավախմբի ղեկավար Համլետ Պետրոսյանը:

Ավելի վաղ հայտնվել է, որ ԼՂՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչության «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Դիաննա Միրիջանյանը «Արցախայրես»-ի հետ զրույցում նշել էր, որ ինժեներական աշխատանքներ կատարելու ժամանակ հայտնաբերվել են անտիկ դարաշրջանի 2 դամբարանադաշտ, որտեղ գտնվել են 2 ամբողջական գտածո՝ եռատերև սափոր ու գավաթ, ավսեի 4 բեկոր:

«Գտածոներն այս պահին ԼՂՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչությունում են և մաքրման աշխատանքներ են տարվում, որպեսզի ֆոնդավորենք»,- ասել էր Դ. Միրիջանյանը և հավելել, որ տեղանքում առաջիկայում կսկսվեն ուսումնասիրության աշխատանքներ:

Մայրո Էդիկ Մալոյանն ու 6 մարտիկները ադրբեջանցիների 150-հոգանոց խմբից հետ են վերցրել դիրքը

Մայրո Էդիկ Մալոյանն իր մի քանի մարտիկների հետ մարտի է դուրս եկել հակառակորդի 150-հոգանոց խմբի դեմ ու կարողացել վերադարձնել գրավված մարտական դիրքը:

Ապրիլի 2-ի գիշերը ՊԲ N գործառնախի հրաձգային գումարտակի հրամանատար Էդիկ Մալոյանին տեղեկացրել են, որ հակառակորդը հարձակում է գործել: Էդիկն ու իր 6 մարտիկները, որ պետք է հետ բերեին գրավված դիրքերից մեկը, չեն պատկերացրել, որ հակառակորդն այդքան մեծաքանակ է: Երբ մոտեցել են դիրքին, հասկացել են, որ գործ ունեն հակառակորդի 150 հոգանոց խմբի հետ, սակայն վերադառնալու որոշում չեն կայացրել, որոշել են մնալ ու մարտ մղել: Հակառակորդի հետ մեկուկես ժամ փոխհրաձգություն է տեղի ունեցել իրարից 30 մետր հեռավորության վրա: Էդիկն ու իր մարտիկները շրջանցել են դիրքը, հարվածել են աչ թեւից ու անակնկալի բերել հակառակորդին: Նրանց գրոհից խուճապի են մատնվել, նահանջել: Էդիկին ու իր մարտիկներին հաջողվել է հետ բերել դիրքը:



Այդ դիրքում նախքան Էդիկի ու իր մարտիկների հասնելը հակառակորդի հետ մարտ է մղել կապիտան Արմենակ Ուրֆանյանի ղեկավարած վաշտը՝ փոքրաթիվ զինվորներով: Այդ դիրքը պաշտպանելիս արկի պայթյունից զոհվել են կապիտան Ուրֆանյանն ու շարքային Քյարամ Սյոյանը, շարքային Անդրանիկ Չոհրաբյանը, Ռոբերտ Աբաջյանը: Ռոբերտ Աբաջյանը մինչև հնարավոր վերջին պահը մարտ է մղել եւ վերջում իրեն ու հակառակորդի մի քանի զինվորների պայթեցրել նոնակով՝ չհանձնվելով նրանց:

Կյանքից հեռացել է կոմպոզիտոր, ջութակահար Յուրի Գևորգյանը



Կյանքից հեռացել է կոմպոզիտոր, ջութակահար Յուրի Գևորգյանը: Յուրի Գևորգյանը հեղինակ է երաժշտաբեմական, սիմֆոնիկ, կամերային-գործիքային, վոկալ երկերի: Ստեղծագործությունների ցանկ՝ 3 օպերա՝ «Խարույկ», «Վերք Հայաստանի», «Տառո» 3 երաժշտական կատակերգություն Միմֆոնիա Միմֆոնիետա

Կոնցերտ շրթհարմոնի կամ սաքսոֆոնի և կամերային նվագախմբի համար 3 պիես կամերային նվագախմբի համար. Ադոթք, Վալս, Լեռնցիների պարը 4 պիես սաքսոֆոնների կվարտետի համար «Կերպարներ» Պիեսներ այտ-սաքսոֆոնի և դաշնամուրի համար (հրատարակվել են Լոնդոնում) 2 կանտատ (հրատարակվել են Մոսկվայում) Մանկական և պատանեկան պիեսների ժողովածուներ դաշնամուրի և ջութակի համար (հրատարակվել են Վիենայում և Երևանում) 2 սոնատ թավջութակի համար Մանկական և էստրադային երգեր 2 ռոմանս սուպրանոյի և դաշնամուրի համար Վ. Տերյանի խոսքերով և այլն: Յուրի Գևորգյանը Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ էր, Հայաստանի Պետական Մանկավարժական Համալսարանի պրոֆեսոր:

Արցախի նախագահը շքանշաններ է շնորհել խիզախ զինձառայողներին



Արցախի նախագահը շքանշաններ է շնորհել խիզախ զինձառայողներին: ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանն իր էջում ներկայացրել է այդ զինձառայողների անունները եւ նրանց կատարած սխրանքները:

- ԼԴՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով
1. ՊԲ N գործառնախի 2-րդ ՀԳՄ հակատանկային դասակի ՀՏԿՀ «Փագոտ» ջոկի հրամանատար, սերժանտ Հովհաննիսյան Ռաֆայել Գևորգի (ծնվ. 1995թ., Ծիրակի մարզ գ. Ախուրյան, կրթությունը՝ միջնակարգ-մասնագիտական, 2014/1 գորակոչ, Ախուրյանի ԶԿ, հասցեն՝ Ծիրակի մարզ գ. Ախուրյան, Խոնանց թաղ. 40 տուն) - 4 ՀՎ ՀԴԿ-ից «Փագոտ» հակատանկային համալիրից խոցել է հակառակորդի 2 տանկ:
 2. ՊԲ N գործառնախի 2-րդ տանկային վաշտի ավագ նշանառու-օպերատոր, եֆրեյտոր Սահակյան Սամվել Մաղաթելի - ս.թ. ապրիլի 2-5-ը N ՊԾ NN 153-170 մարտական դիրքերի համար ծավալված մարտական գործողությունների ժամանակ տանկի անձնակազմով ոչնչացրել է հակառակորդի 2 տանկ:
 3. ՊԲ N գործառնախի 2 տանկային վաշտի մեխանիկ-վարորդ, եֆրեյտոր Խաչատրյան Գևորգ Մարտիկի - ս.թ. ապրիլի 2-5-ը N ՊԾ NN 153-170 մարտական դիրքերի համար ծավալված մարտական գործողությունների ժամանակ տանկի անձնակազմով ոչնչացրել է հակառակորդի 2 տանկ:
 4. ՊԲ N գործառնախի 3-րդ հրաձգային գումարտակի ԴԶՀ ջոկի ավագ հրաձիգ-գեներալային, շարքային Մանուկյան Գևորգ Հովհաննեսի - 2016թ. ապրիլի 2-ին գտնվելով ՊԲ N

զ/մ 3 ՀԳ-մ ՀԴԿ-ում, «Իգլա» ԴԶՀՀ-ով ոչնչացրել է մեր դիրքերը գրոհող հակառակորդի մարտական ուղղաթիռը:

1. ԴՀ «Արիության համար» մեդալով

5. ՊԲ N գորամասի 4-րդ հրաձգային գումարտակի հրամանատար, մայոր Մալոյան Էդիկ Մկրտչի - 2016թ. ապրիլի 2-ին 5 հոգուց բաղկացած խմբով գրոհել և հետ է գրավել հակառակորդի կողմից գրադեցված ՊԲ N գ/մ N 116 մարտական դիրքը, որի ժամանակ դիպուկ կրակոցներով ոչնչացրել է հակառակորդի կենդանի ուժը և ստիպել նրան նահանջել ելման դիրքերը:

6. ՊԲ N գորամասի 1-ին ՀՎ հրամանատար, ավագ լեյտենանտ Վարդանյան Սասուն Արեգի - 1 ՀՎ ՀԴԿ-ից ԴՇԿ գնդացրից ոչնչացրել է հակառակորդի 4 զինձառայողների, որոնք բարձրանում էին դեպի Գյուլիստանի հետևի բլուրը:

7. ՊԲ N գորամասի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Մխիթարյան Նիկոլայ Բորիսի - կատարելով ճշգրիտ հաշվարկներ, բարձր մասնագիտական ունակություններով դեկավարել է ենթակա ստորաբաժանումները հասցնելով հակառակորդին ահեղի վնասներ:

8. ՊԲ N գորամասի 2-րդ Տ-72 տանկային վաշտի 2-րդ դասակի հրամանատար, լեյտենանտ Սիմոնյան Անդրանիկ Վահանի - 2016թ. ապրիլի 2-5-ը N ՊԾ մարտական դիրքերի համար ծավալված մարտական գործողությունների ժամանակ ոչնչացրել է հակառակորդի կենդանի ուժ:

9. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հետախույզ-վարորդ, շարքային (Պ) Սարգսյան Հակոբ Գրիգորի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ NN 169-170 մարտական դիրքերի հետ գրավմանը, NN 150-156 մարտական դիրքերում ընթացող պաշտպանական մարտերին, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ:

10. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հատուկ նշանակության 1-ին խմբի 1-ին ջոկի հետախույզ-դիպուկահար, սերժանտ (Պ) Բաղդյան Վահրամ Մպարտակի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ NN 169-170 մարտական դիրքերի հետ գրավմանը, NN 150-156 մարտական դիրքերում ընթացող պաշտպանական մարտերին, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ:

11. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հատուկ նշանակության 2-րդ խմբի 1-ին ջոկի հրամանատար-խմբի հրամանատարի տեղակալ, ավագ սերժանտ (Պ) Մակրդումյան Վալերի Լավրենտի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ NN 169-170 մարտական դիրքերի հետ գրավմանը, NN 150-156 մարտական դիրքերում ընթացող պաշտպանական մարտերին, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ:

12. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հատուկ նշանակության 2-րդ խմբի 1-ին ջոկի հետախույզ-դիպուկահար, շարքային (Պ) Թավադյան Հարություն Մեղգոյի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ NN 169-170 մարտական դիրքերի հետ գրավմանը, NN 150-156 մարտական դիրքերում ընթացող պաշտպանական մարտերին, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ:

13. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հատուկ նշանակության 3-րդ խմբի 1-ին ջոկի հրամանատար-խմբի հրամանատարի տեղակալ, ավագ սերժանտ (Պ) Ավանեսյան Արսեն Ռոմանի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ NN 169-170 մարտական դիրքերի հետ գրավմանը, NN 150-156 մարտական դիրքերում ընթացող

պաշտպանական մարտերին, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ:

14. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հատուկ նշանակության 3-րդ խմբի 1-ին ջոկի հետախույզ-դիպուկահար, եֆրեյտոր (Պ) Հովհաննիսյան Արմեն Վալերիի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ NN 169-170 մարտական դիրքերի հետ գրավմանը, NN 150-156 մարտական դիրքերում ընթացող պաշտպանական մարտերին, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ:

15. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հատուկ նշանակության 4 խմբի 1 ջոկի հրամանատար-խմբի հրամանատարի տեղակալ, սերժանտ (Պ) Ղուկասյան Սեդրակ Ալեքսեյի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ NN 169-170 մարտական դիրքերի հետ գրավմանը, NN 150-156 մարտական դիրքերում ընթացող պաշտպանական մարտերին, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ:

16. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հատուկ նշանակության 4-րդ խմբի 1-ին ջոկի հետախույզ-ռադիոհեռախոսավար շարքային (Պ) Մամունց Մամվել Մամունի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ NN 169-170 մարտական դիրքերի հետ գրավմանը, NN 150-156 մարտական դիրքերում ընթացող պաշտպանական մարտերին, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ:

17. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հատուկ նշանակության վաշտի հրամանատարի տեղակալ, ավագ լեյտենանտ Աբրահամյան Կիմ Էդուարդի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ NN 169-170 մարտական դիրքերի հետ գրավմանը, NN 150-156 մարտական դիրքերում ընթացող պաշտպանական մարտերին, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ: Մարտերի ժամանակ ստացել է հրազենային և բեկորային վիրավորումներ:

18. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հատուկ նշանակության 2 խմբի հրամանատար, կապիտան Ավթանդիլյան Հովհաննես Փաշայի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ NN 169-170 մարտական դիրքերի հետ գրավմանը, NN 150-156 մարտական դիրքերում ընթացող պաշտպանական մարտերին, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ: Մարտերի ժամանակ ստացել է հրազենային և բեկորային վիրավորումներ:

19. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հատուկ նշանակության 3 խմբի 1 ջոկի հետախույզ, շարքային (Պ) Ղազարյան Վիլի Ալեքսանդրի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ NN 169-170 մարտական դիրքերի հետ գրավմանը, NN 150-156 մարտական դիրքերում ընթացող պաշտպանական մարտերին, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ: Մարտերի ժամանակ ստացել է հրազենային և բեկորային վիրավորումներ:

20. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հատուկ նշանակության 1 խմբի հրամանատար, կապիտան Իսրայելյան Վարդան Մամվելի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ 116 մարտական դիրքի հետ գրավմանը, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ:

21. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հատուկ նշանակության 1 խմբի 1 ջոկի հրամանատար-խմբի հրամանատարի տեղակալ, ավագ սերժանտ (Պ) Մարգարյան Ալեքսեյ Աշոտի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ N 116 մարտական դիրքի հետ գրավմանը, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ:

22. ՊԲ N գ/մ 120-մ ԱՄ հրամանատար, կապիտան Մարտիրոսյան Սեդրակ Մուրադի - ս.թ. ապրիլի 3-ին N114

մ/դիրքի մատույցներում նրա ղեկավարած մարտկոցը շարքից հանել է հակառակորդի 1 միավոր տեխնիկա և պատճառել կենդանի ուժի կորուստներ:

23. ՊԲ N գորամասի 1-ին տանկային վաշտի 2 տանկային դասակի 4 տանկի մեխանիկ-վարորդ, շարքային Գրեյան Արթուր Նորիկի - ա.թ. ապրիլի 3-ին N114 մ/դիրքի մատույցներում դիպուկ կրակոցով շարքից հանել է 1 միավոր հակառակորդի տանկ:

24. ՊԲ N գորամասի 1-ին տանկային վաշտի 1 տանկային դասակի 2 տանկի հրամանատար, սերժանտ Աբրահամյան Արագած Վասիլի - ա.թ. ապրիլի 3-ին N114 մ/դիրքի մատույցներում դիպուկ կրակոցով շարքից հանել է 1 միավոր հակառակորդի տանկ:

25. ՊԲ N գորամասի ՀխՎ 2 դասակի հրամանատար, լեյտենանտ Հակոբյան Գագիկ Կամոյի - ա.թ. ապրիլի 2-ին N ՊԾ պահպանության տեղամասի N116 մ/դիրքի ազատագրման համար ծավալված մարտական գործողությունների ժամանակ խմբի կազմով հակառակորդին հասցրել է կենդանի ուժի զգալի կորուստներ՝ թողնելով միջդիրքային տարածքում մոտավորապես 40 դիակ և հետ շարտել ելման դիրքեր:

26. ՊԲ N գորամասի հետախուզության պետ, կապիտան Հովասապիյան Յուրի Հրանտի - ա.թ. ապրիլի 2-ին N ՊԾ պահպանության տեղամասի N116 մ/դիրքի ազատագրման համար ծավալված մարտական գործողությունների ժամանակ խմբի կազմով հակառակորդին հասցրել է կենդանի ուժի զգալի կորուստներ՝ թողնելով միջդիրքային տարածքում մոտավորապես 40 դիակ և հետ շարտել ելման դիրքեր:

27. ՊԲ N գորամասի 2 ՀԳՎ 4 ՀՎ 2 ՀԳ 3 ՀՋ հրամանատար, կրտսեր սերժանտ Թովմասյան Մուշեղ Ռադիկի - ակտիվ մասնակցություն է ունեցել ա.թ. ապրիլի 2-ին N ՊԾ N 116 մարտական դիրքի պաշտպանության և ազատագրման գործողությունների ժամանակ: 4 ՀՎ հրամանատար, կապիտան Ա.Ուրֆանյանի զոհվելուց հետո, շարունակել է մարտ մղել հարձակման անցած հակառակորդի գերազանցող ուժերի դեմ, նրան պատճառելով կենդանի ուժի զգալի կորուստներ: Չինամթերքը սպառվելուց հետո, կազմակերպված նահանջել է մարտական դիրքի խորքը և այնտեղից օգնության հասած ուժերի կազմում անցել հակագրոհի, նպաստելով առաջնային գծի վերականգնմանը: Մարտերի ժամանակ ցուցաբերել է խիզախություն և արիություն:

28. ՊԲ N գորամասի 2 ՀԳՎ 4 ՀՎ 2 ՀԳ 3 ՀՋ նռնակաձիգ, շարքային Գալստյան Էդգար Հովհաննեսի - ակտիվ մասնակցություն է ունեցել ա.թ. ապրիլի 2-ին N ՊԾ N 116 մարտական դիրքի պաշտպանության և ազատագրման գործողությունների ժամանակ: 4 ՀՎ հրամանատար, կապիտան Ա.Ուրֆանյանի զոհվելուց հետո, շարունակել է մարտ մղել հարձակման անցած հակառակորդի գերազանցող ուժերի դեմ, նրան պատճառելով կենդանի ուժի զգալի կորուստներ: Չինամթերքը սպառվելուց հետո, կազմակերպված նահանջել է մարտական դիրքի խորքը և այնտեղից օգնության հասած ուժերի կազմում անցել հակագրոհի, նպաստելով առաջնային գծի վերականգնմանը: Մարտերի ժամանակ ցուցաբերել է խիզախություն և արիություն:

29. ՊԲ N գորամասի 2 ՀԳՎ 4 ՀՎ 2 ՀԳ 3 ՀՋ գնդացրորդ, շարքային Պապանյան Տիգրան Աշոտի - ակտիվ մասնակցություն է ունեցել ա.թ. ապրիլի 2-ին N ՊԾ N 116 մարտական դիրքի պաշտպանության և ազատագրման գործողությունների ժամանակ: 4 ՀՎ հրամանատար, կապիտան Ա.Ուրֆանյանի զոհվելուց հետո, շարունակել է մարտ մղել հարձակման անցած հակառակորդի

գերազանցող ուժերի դեմ, նրան պատճառելով կենդանի ուժի զգալի կորուստներ: Չինամթերքը սպառվելուց հետո, կազմակերպված նահանջել է մարտական դիրքի խորքը և այնտեղից օգնության հասած ուժերի կազմում անցել հակագրոհի, նպաստելով առաջնային գծի վերականգնմանը: Մարտերի ժամանակ ցուցաբերել է խիզախություն և արիություն:

30. ՊԲ N գորամասի 120 մմ ԱԳՆ հրամանատար, փոխգնդապետ Մարկոսյան Արմեն Վահագնի - ա.թ. ապրիլի 2-5-ը հմտորեն ղեկավարել է դիվիզիոնի կրակը, որի արդյունքում հասցվել է կրակային խոցում հակառակորդի հարձակման անցած հետևակային ստորաբաժանումներին, կրակային միջոցների առաջխաղացման երթուղիներում, ծավալման բնագծերում, կենտրոնացման շրջաններում, ելման դիրքերում, դրանով իսկ ձախողել հակառակորդի գերազանցող ուժերի հարձակումը: Կրակային աջակցություն է ցուցաբերել Թալիշ գյուղի շրջանում գտնվող յուրային զորքերին պաշտպանության գործում:

31. ՊԲ N գորամասի ԿՄ-19 հրետանային մարտկոցի դասակի հրամանատար-ՄԱՍ, լեյտենանտ Վարդանյան Վահագն Արայիկի - ա.թ. ապրիլի 2-5-ը հմտորեն ղեկավարել է հրետանային դասակի կրակը, որի արդյունքում հասցվել է կրակային խոցում հակառակորդի հարձակման անցած հետևակային ստորաբաժանումներին, կրակային միջոցների առաջխաղացման երթուղիներում, ծավալման բնագծերում, կենտրոնացման շրջաններում, ելման դիրքերում, դրանով իսկ ձախողել հակառակորդի գերազանցող ուժերի հարձակումը: Կրակային աջակցություն է ցուցաբերել Թալիշ գյուղի շրջանում գտնվող յուրային զորքերին պաշտպանության գործում: Հակառակորդի ուժերի և միջոցների խոցման գործում ցուցաբերել է բարձր վարպետություն:

32. N գորամասի 4 ՀԳՎ ՀխԳ 1 ջոկի հրամանատար, շարքային (Պ) Սաղաթեյան Անտոն Մանվելի - ա.թ. ապրիլի 2-5-ը N ՊԾ NN 153-170 մարտական դիրքերի ծավալված մարտական գործողությունների ժամանակ մշտապես հետախուզել է հակառակորդի տեղանքը, ցուցաբերելով արիություն, թույլ չտալով հակառակորդի ներթափանցումը պաշտպանության խորքը:

33. ՊԲ N գորամասի 4 ՀՏԳՆ 12 մարտկոցի 1 դասակի 1 համալիրի ավագ օպերատոր, սերժանտ Պետրոսյան Մարատ Ալբերտի - 2016թ. ապրիլի 2-4-ը ՊԲ N գ/մ NN 112-117 մարտական դիրքերի համար ծավալված մարտական գործողությունների ժամանակ «Ֆագոտ» հակատանկային միջոցով ոչնչացրել է հակառակորդի 5 տանկ և 1 միավոր ՀՄԵ:

34. ՊԲ N գորամասի 4 ՀԳՎ 11 ՀՎ 2 ՀԳ 2 ՀՋ նռնակաձիգ, շարքային Մալիսայան Նարեկ Սիրեկանի - 2016թ. ապրիլի 2-ին ՊԲ N գ/մ պաշտպանության տեղամասում ծավալված մարտական գործողությունների ժամանակ N148 մարտական դիրքից ՁՀՆ-7-ով ոչնչացրել է մեր դիրքերը գրոհող հակառակորդի մարտական ուղղաթիռը:

35. ՊԲ N գորամասի հասուկ նշանակության վաշտի 1 խորքային հետախուզական խմբի հրամանատար, ավագ լեյտենանտ Ավետիսյան Լևոն Արմենակի - ա.թ. ապրիլի 2-ին ակտիվորեն մասնակցել է ՊԲ N գ/մ NN112-118 մ/դիրքերի հատվածում ծավալված մարտական գործողություններին, հակառակորդին պատճառելով կենդանի ուժի զգալի կորուստներ:

36. ՊԲ N գորամասի 2Ա-36 ՀՀԳՆ հրամանատար, փոխգնդապետ Մաթևոսյան Մարատ Ալեքսանդրի - 2016թ. ապրիլի 2-5-ը ՊԲ երկու գ/մ-երի պաշտպանության տեղամասերում հմտորեն ղեկավարել է հրետանային դիվիզիոնի կրակը, որի արդյունքում հասցվել է կրակային

խոցում հակառակորդի ռեակտիվ հրետանային և ականանետային ստորաբաժանումներին, հարձակման անցած մոտոհրաձգային և տանկային ստորաբաժանումներին, կրակային միջոցների առաջխաղացման երթուղիներում, ծավալման բնագծերում, կենտրոնացման շրջաններում, ելման դիրքերում, հրամանատարական և հրամանատարադիտարկման կետերին, դրանով իսկ կազմալուծել հակառակորդի ղեկավարման համակարգը, նվաճել կրակային առավելություն և ձախողել հակառակորդի գերազանցող ուժերի հարձակումը

37. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի 4-րդ խմբի հրամանատար, ավագ լեյտենանտ Թոփչյան Լևոն Հրայրի - ս.թ. ապրիլի 2-ին ակտիվորեն մասնակցել է ՊԲ N գ/մ NN112-118 մ/դիրքերի հատվածում ծավալված մարտական գործողություններին, հակառակորդին պատճառելով կենդանի ուժի զգալի կորուստներ

38. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի 4 խորքային հետախուզության խմբի I ջոկի հրամանատար-խմբի հրամանատարի տեղակալ, ավագ սերժանտ (Պ) Բաբայան Սևակ Ռոմիկի - ս.թ. ապրիլի 2-ին ակտիվորեն մասնակցել է ՊԲ N գ/մ NN112-118 մ/դիրքերի հատվածում ծավալված մարտական գործողություններին, հակառակորդին պատճառելով կենդանի ուժի զգալի կորուստներ

39. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի 1-ին հատուկ նշանակության խմբի 1ին ջոկի հետախույզ՝ շարքային (Պ) Սարգսյան Սեյրան Յակովի - ս.թ. ապրիլի 2-ին ակտիվորեն մասնակցել է ՊԲ N գ/մ NN112-118 մ/դիրքերի հատվածում ծավալված մարտական գործողություններին, հակառակորդին պատճառելով կենդանի ուժի զգալի կորուստներ

40. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի 1-ի խմբի 2-րդ ջոկի հետախույզ-դիպուկահար՝ շարքային (Պ) Հակոբյան Գևորգ Գարիկի - ս.թ. ապրիլի 2-ին ակտիվորեն մասնակցել է ՊԲ N գ/մ NN112-118 մ/դիրքերի հատվածում ծավալված մարտական գործողություններին, հակառակորդին պատճառելով կենդանի ուժի զգալի կորուստներ

41. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի 1 խմբի 2 ջոկի հետախույզ՝ շարքային (Պ) Գրիգորյան Ռուդոլֆ Միրիկի - ս.թ. ապրիլի 2-ին ակտիվորեն մասնակցել է ՊԲ N գ/մ NN112-118 մ/դիրքերի հատվածում ծավալված մարտական գործողություններին, հակառակորդին պատճառելով կենդանի ուժի զգալի կորուստներ

42. ՊԲ N գորամասի ՏՎ 1 ՏԴ մեխանիկ-վարորդ, շարքային Սարիբեկյան Աշոտ Կարենի - ս.թ. ապրիլի 4-ին N ՊԾ NN153-170 մ/դիրքերի համար ծավալված մարտական գործողությունների ժամանակ, լինելով տանկի նշանառու, ցուցաբերել է անձնական արիություն և խիզախություն, ոչնչացրել է անձնական արիություն և խիզախություն, ոչնչացրել է անձնական արիություն և խիզախություն, ոչնչացրել է հակառակորդի 2 միավոր տանկ և 1 միավոր ՀՄՄ-1

43. ՊԲ N գորամասի ՏՎ 1 ՏԴ տանկի նշանառու-օպերատոր, շարքային Հայրապետյան Ռոմիկ Սևակի - ս.թ. ապրիլի 4-ին N ՊԾ NN153-170 մ/դիրքերի համար ծավալված մարտական գործողությունների ժամանակ, լինելով տանկի նշանառու, ցուցաբերել է անձնական արիություն և խիզախություն, ոչնչացրել է հակառակորդի 2 միավոր տանկ և 1 միավոր ՀՄՄ-1

44. ՊԲ N գորամասի 2 ՀԳ մ 4 ՀՎ 1 ՀԴ դիպուկահար, շարքային Երեմյան Սերգեյ Ստեփանի -- N148 մ/դիրքից ոչնչացրել է հակառակորդի 3 դիվերսանտի, այդ թվում՝ 1 սպայի:

ԼԴՀ «Մարտական ծառայություն» մեդալով
45. ՊԲ N գորամասի ուսումնական կենտրոնի ուսումնամարտական մեքենաների վաշտի դասակի հրամանատար, լեյտենանտ Պետրոսյան Լևոն Արշալույսի - 2016թ. ապրիլի 2-5-ը N ՊԾ մարտական դիրքերի համար ծավալված մարտական գործողությունների ժամանակ կազմակերպել է տանկային գրոհ՝ NN 169-170 մարտական դիրքերի ուղղությամբ, հմուտ գործողություններով նպաստել է N170 մ/դիրքի հետ գրավմանը և առաջնային գծի վերականգնմանը, հակառակորդին պատճառելով կենդանի ուժի զգալի կորուստներ:

46. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հատուկ նշանակության I խմբի I ջոկի ավագ հետախույզ-գնդացրորդ, կրտսեր սերժանտ (Պ) Դարիբյան Արթուր Մերգեյի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ NN 169-170 մարտական դիրքերի հետ գրավմանը, NN 150-156 մարտական դիրքերում ընթացող պաշտպանական մարտերին, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ:

47. ՊԲ N գորամասի հատուկ նշանակության վաշտի հատուկ նշանակության I խմբի 2 ջոկի ավագ հետախույզ-գնդացրորդ, շարքային (Պ) Առուստամյան Նվեր Համետի - ակտիվորեն մասնակցել է N ՊԾ N 116 մարտական դիրքի հետգրավմանը, հակառակորդին հասցնելով մարդկային կորուստներ:

48. ՊԲ N գորամասի ԴՈՒԿ ուսումնամարտական մեքենաների դասակի տանկի հրամա-նա-տար, կրտսեր սերժանտ Մկրտչյան Անդրանիկ Չավենի - ս.թ. 2-5-ը N ՊԾ NN 169-170 մարտական դիրքերի գրավման ժամանակ ոչնչացրել է հակառակորդի կենդանի ուժը, NN 169-170 մարտական դիրքերի ուղղությամբ, հմուտ գործողություններով նպաստել է N170 մ/դիրքի հետ գրավմանը և առաջնային գծի վերականգնմանը, հակառակորդին պատճառելով կենդանի ուժի զգալի կորուստներ:

49. ՊԲ N գորամասի 2 ՀԳ մ ՀԻԴ 2 ջոկի գնդացրորդ, շարքային Բաղդասարյան Հրայր Գևունի - ս.թ. ապրիլի 2-ին ժամը 01:45-ի սահմաններում, N170 մ/դիրքի ուղղությամբ հակառակորդի ԴՀՆ ներթափանցելու փորձ կատարելու ժամանակ մարտնչել է դիրքի պաշտպանության համար, ստիպելով հակառակորդին նահանջել ելման դիրքեր: Այնուհետև հակառակորդի ինտենսիվ ականանետային հրետակածությունից հետո, ժամը 05:00-ի սահմաններում, անհավասար մարտի է բռնվել հակառակորդի գերակշիռ ուժերի դեմ և ծանր վիրավորվել:

50. ՊԲ N գորամասի ԴՈՒԿ ուսումնամարտական մեքենաների դասակի մեխանիկ-վարորդ, Վարդանյան Հարություն Վարդանի -- ս.թ. ապրիլի 2-5-ը N ՊԾ NN 169-170 մարտական դիրքերի գրավման ժամանակ ոչնչացրել է հակառակորդի կենդանի ուժը, NN 169-170 մարտական դիրքերի ուղղությամբ, հմուտ գործողություններով նպաստել է N170 մ/դիրքի հետ գրավմանը և առաջնային գծի վերականգնմանը:

Միայն Ղարաբաղի հյուսիսային հատվածում 7 ք/կմ տարածքային կորուստ ենք ունեցել. Սեֆիյան

Միայն հյուսիսային հատվածում մենք ունենք 7 ք/կմ կորուստ ենք ունեցել: Այս մասին, այսօր՝ մամուլի ասուլիսի ժամանակ նշել է «Շուշիի առանձնակի գումարտակի ազատամարտիկների միավորում» հասարակական

կազմակերպության (ՇԱԳԱՄ) նախագահ Ժիրայր Մեֆիլյանը:



«Այրիկյան դեպքերի առաջին օրերից բոլորս նկատեցինք, որ մենք ունեցել ենք դիրքային կորուստներ, հիշում ենք՝ այդ օրերին, երբ բարձրաձայնվում էր, որ պետք է անմիջապես կորցվածը առնվազն հետ վերցվի, գործող ռեժիմի պարագլուխները տարբեր մակարդակներով խոսում էին եւ փորձում արդարանալ՝ ասելով, որ ընդամենը մի քանի հարյուր մետր քառակուսի ունենք կորցրած՝ 200 մետր հյուսիսից, 300 քառ մետր հարավից:

Ծիծաղելի չափերի մասին էր խոսակցությունը: Մենք առաջին օրվանից տեղեկացված էինք՝ ինչ էր տեղի ունենում առաջնագծում, օրեր անց մենք արդեն ճշտել էինք, թե մեր կորուստն ինչ չափի է: Ոչ մեկա չէր սպասում, որ մենք ունեցել ենք տարածքային այդքան մեծ կորուստներ: Այս շաբաթների ընթացքում մենք հորդորել ենք ՊՆ-ին՝ անձամբ Արծրուն Հովհաննիսյանին, որ մեր ժողովրդին իրականությունը ներկայացնեն: Որովհետև այն, ինչ իրականում կա, աշխարհի համար պարզ է, հակառակորդի համար եւս պարզ է, միակ անտեղյակը իրականությունից մեր ժողովուրդն է: Մենք հորդորել ենք նրանց, որ լավ կլինե՛ր՝ ճշմարտությունն իրենք ասեն՝ միաժամանակ զգուշացնելով, որ եթե երկար լուռ մնան, մենք ենք ասելու իրականությունը»,- ասել է նա:

Մեֆիլյանը նշել է, որ իր տեղեկություններով՝ հյուսիսարևելյան հատվածի՝ Թավիշի ուղղությամբ, մեր կորստի իրական չափը. «Ցավալիին այն է, որ միայն հյուսիսային հատվածում մենք ունենք 7 մլն մետր քառակուսի կորուստ, այսինքն՝ 7 կմ քառակուսիի մասին է խոսքը: Ումի՛ց են թաքցնում այս իրականությունը: Եթե այս վիճակը մենք շարունակենք հանդուրժել, այսինքն՝ առնվազն մեր կորցրած դիրքերը հետ չբերենք, մեր նահատակների գոհոդությունն այս քաղաքական դեկավարությունը կարծես ուզում է շուրջ լցնել: Այստեղ մեղքը բանակինը չէ, բանակն ամեն օր սպասում է: Մեր մարտունակ ստորաբաժանումները հերթ են կանգնած, թե ով պետք է այդ գործողությունն կատարի, որը շատ հեշտ է մեզ համար: Ինչքան ուշացնում ենք, այնքան դժվարանալու է մեր գործը»:

Արցախի համար արտահերթ հեռուստամարաթոնի ժամանակ ավելի քան 1 մլն դոլար է հավաքվել

«Հայաստան» համահայկական հիմնադրամը նախօրեին ԱՄՆ-ում արտահերթ հեռուստամարաթոն է կազմակերպել, որի ընթացքում Արցախին օգնության համար 1 մլն 102 հազար 357 դոլար է հավաքվել: Այս մասին տեղեկացանք հիմնադրամի ֆեյսբուքյան էջից:



Արտահերթ հեռուստամարաթոնի նպատակն էր՝ գումար հավաքել Արցախի տարբեր շրջաններում քառօրյա պատերազմում վնասված տները վերանորոգելու, ինչպես նաև բնակչությանը օգնություն ցուցաբերելու համար:

Վիեննայում մեկնարկել է Սերժ Սարգսյանի եւ Ֆեդերիկա Մոգերինիի հանդիպումը



Մայիսի 16-ին Վիեննայում մեկնարկել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը ԵՄ բարձր ներկայացուցիչ, ԵՀ փոխնախագահ Ֆեդերիկա Մոգերինիի հետ: Այս մասին Twitter-ում գրել է Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Վլադիմիր Հակոբյանը: Հիշեցնենք, որ Վիեննայում ծրագրվում է նաև Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ԱԳ նախարարների՝ Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի, Ֆրանսիայի ԱԳ նախարար Ժան-Մարկ Էյրոյի եւ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրիի հետ:

Քերի եւ Սարգսյան. ԼՂ հակամարտությունը ռազմական լուծում չունի

Աշխատանքային այցով Ավստրիայի Հանրապետությունում գտնվող նախագահ Սերժ Սարգսյանն այսօր Վիեննայում հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրիի հետ:

Կողմերը քննարկել են ա.թ. ապրիլի սկզբին ԼՂ հակամարտության գոտում հրադադարի կոպիտ խախտման հետևանքով ստեղծված իրավիճակից դուրս գալու հնարավորությունները: Կարևորելով ՄԽ համանախագահողների մայիսի տասներկուսի հայտարարությունը՝ Նախագահ Սերժ Սարգսյանը նշել է, որ բանակցային գործընթացի վերականգնման համար անհրաժեշտ է ապահովել 1994թ. զինադադարի մասին եւ 1995թ. զինադադարի ամրապնդման մասին համաձայնագրերի լիարժեք իրականացումը, ինչպես նաև զինադադարի խախտումների հետաքննության մեխանիզմի շուտափույթ ներդրումը: Ընդգծելով փաստը,

որ ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների արտաքին գործերի նախարարներն են նախաձեռնել ներկայիս հանդիպումը:



Հանրապետության նախագահը հույս է հայտնել, որ նրանք նույնպիսի հետևողականությամբ իրենց հասցեական դիրքորոշումներով ու հստակ քայլերով կնպաստեն բանակցությունների վերսկսման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Կողմերը եւս մեկ անգամ վերահաստատել են, որ ԼՂ հակամարտությունը ռազմական լուծում չունի, եւ անհրաժեշտ է հիմնարար սկզբունքների հիման վրա գտնել փոխընդունելի լուծման մեխանիզմներ:

Մանրամասներ Սերժ Սարգսյանի եւ Իլիամ Ալիեւի հանդիպումից

Վիեննայում մայիսի 16-ի երեկոյան Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլիամ Ալիեւը մասնակցել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների արտաքին գործերի նախարարների նախաձեռնությամբ եւ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Բերիի, ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի, Ֆրանսիայի եվրոպական հարցերով պետքարտուղար Արլեն Դեզիրի մասնակցությամբ տեղի ունեցած քննարկմանը: Հանդիպմանը մասնակցել են երկու երկրների արտաքին գործերի նախարարներ Էդվարդ Նալբանդյանը եւ Էլմար Մամեդյարովը, դեսպաններ Իգոր Պոպովը (Ռուսաստան), Ջեյմս Ուորլիքը (ԱՄՆ), Պիեռ Անդրիոն (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջել Կասպրչիկը:



Քննարկվել են ԼՂ հակամարտության գոտում ս.թ. ապրիլի սկզբին զինադադարի կոպիտ խախտման հետևանքով ստեղծված լարված իրավիճակը եւ դրանից դուրս գալու ուղիները: Համանախագահող երկրների ներկայացուցիչները պնդել են 1994թ. զինադադարի եւ 1995թ. զինադադարի ամրապնդման մասին համաձայնագրերի անշեղ իրագործման անհրաժեշտությունը:

Համաձայնություն է ձեռք բերվել քայլեր ձեռնարկելու դրանց իրականացման մշտադիտարկման եւ միջադեպերի հետաքննության մեխանիզմի ներդրման, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի թիմի կարողությունների ավելացման, հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի հնարավոր վերսկսման ուղղությամբ:

Լավրով. Կողմերը պայմանավորվել են Ղարաբաղում հրադադարին հետեւել 1994-95 թ.թ. համաձայնագրի ձեւաչափում



Հայ եւ ադրբեջանցի բանակցողները տրամադրված են փոխզիջումներ գտնելու հարցում: Ըստ **SWU**-ի, Վիեննայում կայացած հանդիպման արդյունքներով այս մասին հայտարարել է Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը:

Նրա խոսքով, Ավստրիայի մայրաքաղաքում դարաբաղյան հակամարտության շուրջ բանակցությունների մասնակիցները պայմանավորվել են տարածաշրջանում հրադադարի յեժիմը պահպանել 1994-1995 թվականների համաձայնությունների ձեւաչափում:

Ռուսաստանի ԱԳՆ ղեկավարն ընդգծել է, որ իրենք հիմքեր ուներ ենթադրելու, որ հայ եւ ադրբեջանցի բանակցողները տրամադրված են փոխզիջումների ձեւակերպմանը: «Մենք կնպաստենք դրան», - ասել է նա:

Լավրովը նաեւ տեղեկացրել է, որ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել այն մասին, որ «հունիսին Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները կհամաձայնեցնեն հաջորդ հանդիպման վայրն ու ժամկետը, որի ընթացքում կշարունակվի դարաբաղյան հիմնախնդրի վերջնական կարգավորման չափանիշների համաձայնեցման ուղղությամբ աշխատանքը»:

Ղարաբաղի խնդիրը չի կարող լուծվել բանակցությունների միջոցով. Արա Պապյան



Ադրբեջանը չի լուծում դարաբաղյան խնդիրը. Ադրբեջանը դրել է Հայաստանի քաղաքական, տնտեսական եւ բարոյական ոչնչացման հարցը: Այս մասին մայիսի 16-ին՝ մամուլի ասուլիսի ժամանակ, ասել է «Մոդուս Վիվենդի» վերլուծական կենտրոնի ղեկավար, փորձագետ Արա Պապյանը:

Նրա խոսքով այստեղ Ղարաբաղի հարցը ընդամենն առիթ է Ադրբեջանի այդ նպատակի համար: «Ալկնհայտ է, որ


Դարաբաղի խնդիրը չի կարող լուծվել բանակցությունների միջոցով: Ադրբեջանը դնում է այդ ամբողջ տարածքից հայկական զորքերի դուրսբերման հարցը: Հետևաբար, խնդիրը շատ պարզ է՝ կամ մենք կոչնչացնենք Ադրբեջանին կամ Ադրբեջանը՝ մեզ», - նշել է Պապյանը:

ԼՂ անկախությունը ճանաչելու օրինագիծը ԱԺ նստաշրջանի օրակարգում չընդգրկվեց



Ազգային ժողովի պատգամավորներ Չարուհի Փոստանջյանի և Հրանտ Բագրատյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին» օրենքի նախագիծն այսօր՝ մայիսի 16-ին, չընդգրկվեց խորհրդարանի ընթացիկ նստաշրջանի օրակարգում: Թղթակիցը հայտնում է, որ ԱԺ այսօրվա նիստի ժամանակ օրինագիծը նստաշրջանի օրակարգում ընդգրկելու օգտին քվեարկեց ընդամենը 12 պատգամավոր, մնացած պատգամավորները չմասնակցեցին քվեարկությանը: Կողմ քվեարկեցին ՀՅԴ պատգամավորները և «Ժառանգության» որոշ պատգամավորներ: Ավելի վաղ հայտնվել էր, որ այսօր ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովում «Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին» պատգամավորներ Չարուհի Փոստանջյանի և Հրանտ Բագրատյանի հեղինակած օրինագիծը դրական եզրակացություն չի ստացել: Հանձնաժողովում նախագծին կողմ է քվեարկել միայն Թեւան Պողոսյանը, դեմ՝ ՀՀԿ-ից Համլետ Հարությունյանը, մնացած անդամները չեն մասնակցել քվեարկությանը:

Դարաբաղում լարվածության անը կարող է վերածել Ադրբեջանի և Հայաստանի միջև պատերազմի. Ծթայնմայեր



Որքան ավելի է շարունակվում Լեռնային Դարաբաղում հակամարտությունը, որքան ավելի ինտենսիվ կերպով են զինվում դրա կողմերը, այնքան մեծանում է նոր լարվածության վտանգը, ներառյալ Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմը: Այդ մասին մայիսի 16-ին Վիեննայում Մինսկի խմբի հանդիպումից առաջ հայտնել է

ԳԴՀ-ի արտգործնախարար Ֆրանկ Վալտեր Ծթայնմայերը:

«Շփման գծի երկայնքով կատաղի մարտերը վեց շաբաթ առաջ ցույց են տալիս, որ բազմամյա ստատուս քվին երկարաժամկետ հեռանկարում սնանկ է: Որքան ավելի է շարունակվում հակամարտությունը, որքան ավելի են զինվում նրա կողմերը, այնքան մեծանում է Հայաստանի և Ադրբեջանի միջև նոր լարման, նույնիսկ պատերազմի ռիսկը», — ասված է Գերմանիայի ԱԳՆ մամուլի հաղորդագրության մեջ:

Ծթայնմայերի խոսքով, ԵԱՀԿ-ն կարելու էր դեր է խաղում հակամարտության հանգուցալուծման գործում: «Ֆրանսիան, Ռուսաստանը և ԱՄՆ-ն երկար տարիների ընթացքում, որպես Մինսկի խմբի համանախագահներ, փորձել են համակարգել հրադադարը և քաղաքական գործընթացի վերսկսումը (դրա մասին որոշումը): Գերմանիան, որպես ԵԱՀԿ-ի նախագահ, աջակցում է դրան», — հավելել է նա:

«Մեր կարծիքով, նպատակը պիտի լինի հաստատել և ամրապնդել հրադադարի ռեժիմը շփման գծում, համաձայնեցնել վստահության ամրապնդման միջոցները և բանակցային գործընթաց սկսել: Դա որոշ ժամանակ կխլի, մեկ օրում որոշում չի լինի», — ասել է նախարարը, հայտնում է «ՌԻԱ Նովոստին»:

Մայիսի 16-ի երեկոյան Վիեննայում տեղի կունենան ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի բանակցությունները Լեռնային Դարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ, Ռուսաստանի, Ֆրանսիայի արտգործնախարարների և ԱՄՆ-ի պետքարտուղարի մասնակցությամբ:

ԼՂՀ ԱԳՆ հայտարարությունը. Կիսում ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների դիրքորոշումը



ԼՂՀ ԱԳՆ-ն հայտարարություն է տարածել՝ մեկնաբանելով Վիեննայում կայացած հանդիպումը:

«Դրական ենք գնահատում մայիսի 16-ին Վիեննայում կայացած Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը՝ ԱՄՆ պետքարտուղարի, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի և Ֆրանսիայի Եվրոպական հարցերով պետքարտուղարի մասնակցությամբ և աջակցություն ենք հայտնում հանդիպման ընթացքում ձեռք բերված համաձայնությանը միջադեպերի հետաքննությունների անցկացման ԵԱՀԿ մեխանիզմի շուրջ աշխատանքներն ավարտելու և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակն ընդլայնելու, ինչպես նաև ԿԽՄԿ հովանու ներքո անհայտ կորածների մասին տեղեկատվության փոխանակումը շարունակելու վերաբերյալ:

Մենք նաև կիսում ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների դիրքորոշումը, որոնք քացառում են հակամարտությունը ռազմական

ճանապարհով լուծելու ցանկացած հնարավորություն էլ պնդում 1994 թ. և 1995 թ. հրադադարի մասին համաձայնագրերի պահպանման անհրաժեշտությունը: Նշված համաձայնագրերը, որոնք վերջ դրեցին լայնածավալ ռազմական գործողություններին և այդպիսով հնարավորություն ստեղծեցին՝ որոնելու ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղիները, կնքվել են բանակցություններին բոլոր երեք կողմերի՝ Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի լիարժեք մասնակցության շնորհիվ: Կարգավորման գործընթացի տրամաբանությունը պահանջում է հակամարտության վերջնական հանգուցալուծմանը հասնելու համար վերականգնել բանակցությունները հենց նշված եռակողմ ձևաչափով»,- ասվում է հայտարարությունում:

Պատրաստ են ստանձնել Արցախի տարածքային ամբողջականությունը վերականգնելու գործը. Սեֆիյան



Պատրաստ են ստանձնել Արցախի տարածքային ամբողջականությունը վերականգնելու գործը: Այս մասին հայտարարություն է տարածել «Հիմնադիր խորհրդարանի» անդամ, «Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար Ժիրայր Սեֆիյանը: Հայտարարությունում, մասնավորապես, ասվում է. «Մերժ Մարգայանը մայիսի 17-ի իր հայտնի հարցազրույցում պաշտոնապես հաստատեց, որ, ինքը, որպես Արցախի անվտանգությունը երաշխավորելու պարտականություն ստանձնած Հայաստանի Հանրապետության Նախագահի և այդ պարտականությունը ռազմական առումով իրականացնելուն կոչված Չինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնները զբաղեցնող անձ, հրաժարվում է կատարել Ադրբեջանի ապրիլյան ագրեսիայի հետևանքով խախտված Արցախի տարածքային ամբողջականությունը վերականգնելու պարտականությունը, քանի որ դա կարող է հանգեցնել զինձառայողների զոհվելուն, ինքը, որպես Չինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնը զբաղեցնող անձ, դեմ չէ, որ յուրաքանչյուր ոք կամավոր կերպով ստանձնի Արցախի տարածքային ամբողջականությունը վերականգնելու գործի ռազմական պատասխանատվությունը: Ես՝ Ժիրայր Սեֆիյանս, հաշվի առնելով վերոհիշյալը, հայտարարում եմ, որ պատրաստ եմ իմ և իմ նախագահությանը գործող՝ «Շուշիի առանձնակի գումարտակի ազատամարտիկների միավորում» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ ցուցակագրվող կամավորների ուժերով ստանձնելու Արցախի տարածքային ամբողջականությունը վերականգնելու գործի ռազմական պատասխանատվությունը, այդ նպատակով կոչ եմ անում ՀՀ քաղաքացիներին, արտերկրաբնակ հայությանը, ինչպես

ևս և Հայկական բանակի սպաներին, ենթասպաներին և զինվորներին՝ կամավորագրվել Արցախի տարածքային ամբողջականությունը իմ հրամանատարությամբ վերականգնելու ռազմական գործողություններին մասնակցելու համար:

ԵՖՏԻՎ ղեկավարը հերթական ադրբեջանամետ հայտարարությունն է արել



ԵՖՏԻՎ միջազգային հեղինակավոր կազմակերպության ղեկավարը, որն առաջ էլ էր հայտնի դարաբաղյան հակամարտության վերաբերյալ իր ոչ անկողմնակալ դիրքորոշումով, հերթական ադրբեջանամետ հայտարարությունն է արել: «Ազերի փրես» գործակալությունը հայտնում է, որ Սանկտ Պետերբուրգում կայացել է Ադրբեջանի Միլի Մեջլիսի նախագահ Օգտայ Ասադովի ու ԵՖՏԻՎ նախագահ Պեդրո Ազրամունտի հանդիպումը: Բացի ամենայնից՝ Պեդրո Ազրամունտը ասել է. «ԵՖՏԻՎ-ի ու անձամբ իմ դիրքորոշումն այն է, որ հայ-ադրբեջանական ու առասարակ բոլոր հակամարտությունները պետք է կարգավորվեն տարածքային ամբողջականության շրջանակում: Այս դիրքորոշման համար ես հայկական կողմի ու նույնիսկ որոշ խորհրդարանականների կոշտ քննդատություններին եմ արժանացել, որոնք իմ մասին բավականին կոպիտ են արտահայտվել: Սակայն դա ինձ համար ոչ մի նշանակություն չունի: Չէ՛ որ ես վստահ եմ որ իմ դիրքորոշումն արդարացի է: Ինձ համար հիմնական հարցը հակամարտության շուտափույթ կարգավորումն է, ու ես դրա համար կգործադրեմ բոլոր ջանքերը»:

Վովա Վարդանով. Այդ 700-800 հեկտարը մեծ մարտավարական և օպերատիվ նշանակություն ունեն



Օգտագործվող տարածքները, որոնք հիմա հայկական կողմի ձեռքում չեն, հյուսիսում և հարավում կազմում են 20 և 30 հեկտար: Այդ մասին մայիսի 25-ի մամուլի ասուլիսին հայտնել է դարաբաղյան պատերազմի մասնակից, Կենտրոնական հրամանատարության հետախույզ, հետախույզների հատուկ նշանակության դիվիզիայի հիմնադիր և հրամանատար Վովա

Վարդանովը՝ պարզաբանելով, որ խոսքը խրամատների գոտու մասին է:

Նրա խոսքով այդ տարածքները հակառակորդի ձեռքում են ժամանակավորապես: «Մենք դրանք չենք կորցրել: Մենք դրանք կկորցնենք միայն այն ժամանակ, երբ համակերպվենք այդ մտքի հետ: Այդ մտքի հետ համակերպվել չի կարելի», - ասել է Վարդանովը:

Այն 700-800 հեկտարը, որոնց մասին շատ են խոսում, խրամատների միջև չեզոք գոտին է: «Իհարկե դրանք կարելուր մետրեր են: Բնականաբար մի դիրքը չի կարող կարելուր ռազմավարական նշանակություն ունենալ, բայց դա միանշանակ հսկայական մարտավարական է օպերատիվ նշանակություն ունի, քանի որ նրանք տեսնում են Թախ զյուրի ուղղությամբ թիկունքի մեր դիրքերը: Մարտավարական տեսակետից նրանք կարող են ոչնչացնել մեր տասնյակ զինձառայողներին», - ասել է Վովա Վարդանովը:

Նախկին հետախույզ, Պատերազմը կավարտվի միայն Բաքվի կամ Երևանի կատարյալ ջախջախման դեպքում



Որքան էլ խաղաղ համաձայնագրեր կնքվեն, մինչև Բաքուն կամ Երևանը կատարյալ ջախջախում չսպրեն, պատերազմը չի ավարտվի: Այդ մասին մայիսի 25-ի մամուլի ասուլիսին հայտնել է դարաբաղյան պատերազմի մասնակից, Կենտրոնական հրամանատարության հետախույզ, հետախույզների հատուկ նշանակության դիվիզիայի հիմնադիր և հրամանատար Վովա Վարդանովը:

Բաքվի տապալման դեպքում նոր պետություններ կտեղծվեն: «Երևանի տապալման դեպքում մեզ սպասում է ցեղասպանություն և տարագրություն: Ինձ թվում է, նաև այդ պատճառով է, որ մեր զինվորականներն ավելի լավ են կռվում», - նշել է Վարդանովը:

Արցախի Հանրապետության ԱԳՆ հայտարարությունը տարածվել է ՄԱԿ-ի ԱԽՈՒՄ և Գլխավոր ասամբլեայում



Ադրբեջանի կեղծիքների վերաբերյալ Արցախի Հանրապետության ԱԳՆ հայտարարությունը տարածվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում և Անվտանգության խորհրդում: Այս մասին Twitter-ի իր էջում գրել է ՀՀ արտաքին գործերի նախարարության մամուլի քարտուղար Տիգրան Բալայանը:

Հիշենք, որ մայիսի 20-ին Արցախի Հանրապետության ԱԳՆ-ն հայտարարություն էր տարածել, որտեղ ասվում էր. «Մայիսի 17-ին Ադրբեջանի ԱԳՆ-ն հանդես է եկել հերթական մտացածին հայտարարություններով՝ ապրիլի 2-5 մարտական գործողությունների ընթացքում արգելված ռազմամթերքի, մասնավորապես, սպիտակ ֆոսֆոր պարունակող արկերի ենթադրյալ կիրառման վերաբերյալ: Ծարունակելով միջազգային հանրությանն ապատեղեկացնելու ավանդական արշավը՝ Ադրբեջանը չի խորշում դիմել կեղծիքների և բացահայտ մեթոդայությունների: Իր քարոզական գործողություններին կշիռ հաղորդելու նպատակով ադրբեջանական կողմը փորձում է դրանց մեջ ներքաշել նաև Ադրբեջանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներին ու ռազմական կցորդներին:

Կեղծարարությունն ու իրականության խեղաթյուրումը վաղուց արդեն կանոնավոր բնույթ են ձեռք բերել և դարձել Ադրբեջանի արտաքին քաղաքականության անբաժան մասը: Դեռևս 1992 թ. ադրբեջանական կողմը հանդես էր գալիս քիմիական զենքի ենթադրյալ կիրառման մասին համանման մեղադրանքներով, որոնք այն ժամանակ հերքվեցին ՄԱԿ-ի հատուկ փաստահավաք առաքելության կողմից: ՄԱԿ-ի փորձագետների հետևությունների ու եզրակացությունների հիման վրա, որոնք ներկայացված են ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1992 թ. հուլիսի 24-ի S/24344 թվակիր փաստաթղթում, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը հաստատեց, որ «խմբին չի ներկայացվել քիմիական զենքի կիրառման փաստը հաստատող որևէ ապացույց»:

Հաջորդած տարիներին ադրբեջանական կողմը հանդես է եկել նույնքան անհեթեթ և չհաստատված մեղադրանքներով 1993 թվականին Ադրբեջանի դեմ միջուկային զենքի կիրառման և ԼՂՀ-ում միջուկային թափոնների թաղման (ԵՄԽՎ 2002 թ. մայիսի 7-ի N 9444 փաստաթուղթ), Հայաստանն ու ԼՂՀ-ն բակտերիոլոգիական զենքի բազայի վերածման (ԵՄԽՎ 2002 թ. հունվարի 31-ի N 9336 փաստաթուղթ), թմրամիջոցների աճեցման ու արտադրության և այլնի վերաբերյալ: Ընդ որում, ադրբեջանական կողմը վկայակոչում էր գոյություն չունեցող գիտական հանդեսներ, զեկույցներ, կազմակերպություններ և լաբորատորիաներ:

Վերակենդանացնելով հին հերյուրանքները՝ Ադրբեջանը ոչ միայն փորձում է արդարացնել ուժի կիրառման և 1994-1995 թթ. հրադադարի մասին համաձայնագրերի լիակատար ու անշեղ պահպանումից (ինչը պնդում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները) հրաժարվելու իր քաղաքականությունը, այլև նպատակ է հետապնդում շեղել ուշադրությունը ԼՂՀ զինձառայողների ու խաղաղ բնակչության նկատմամբ ադրբեջանական բանակի իրագործած իրական ռազմական հանցագործություններից:

Այս կապակցությամբ կոչ ենք անում միջազգային հանրությանը՝ առավելագույնս քննադատաբար մոտենալ ադրբեջանական կողմի այդօրինակ մերկապարանոց պնդումներին:

ԼՂՀ-ն իր հերթին պատրաստ է ընդունել հատուկ դիտորդական առաքելություն՝ տեղում բոլոր փաստերն ուսումնասիրելու և ապրիլի 2-5 Ադրբեջանի կողմից սանձազերծված ագրեսիայի հանգամանքներն ու դրա ընթացքում իրագործված միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի խախտումները հետաքննելու համար»:

Հայկական ընկերությունը պետական սահմանների շուրջօրյա տեսահսկման սարք է արտադրել



Գիտահետազոտական և փորձարարական կոնստրուկտորական աշխատանքներ իրականացնող հայկական «Աստրոմափա» ընկերությունը պետական սահմանների շուրջօրյա տեսահսկման սարք է ստեղծել:

«Պահանջարկը հաշվի առնելով մենք նախագծել ենք սարքը՝ ռազմական ստանդարտներին համապատասխան: Եվ ցերեկվա համար է, եւ գիշերվա: Ջերմադիտակը մարդկանց ինֆրակարմիր տիրույթում արձակած ճառագայթման հիման վրա կառուցում է ջերմային պատկեր: Բացի այդ՝ մեր սարքը նաև կատարում է անընդհատ տեսագրում ռեալ ժամանակում», գրույցում ասաց ընկերության տնօրեն Արամ Եղիզարյանը՝ նշելով, որ սարքը կարող է մարդկանց՝ հայտնաբերել և ճանաչել տարբեր հեռավորություններից կախված տեսախցիկի տեսակից:

Սարքը, տնօրենի խոսքով, ոչնչով չի զիջում արտասահմանյան նման սարքերին, ավելին՝ առավելություններ ունի. «Նույն տեսախցիկով, նույն ֆունկցիոնով արտասահմանյան սարքը երկու անգամ ավելի թանկ է, բացի այդ՝ մենք գտնվում ենք Հայաստանում, իր անսարքությունները անհամամետ շատ արագ կարող ենք վերականգնել որեւէ խնդրի դեպքում»:

Պաշտպանության նախարարությունը հետաքրքրված է «Աստրոմափա» ընկերության արտադրանքով: ՕԳ-2 դիտարկման-տեսագրման օպտիկա-էլեկտրոնային համակարգը նախարարությունում ցուցադրվել է մեկ ամիս առաջ:

«Ես եմ առաջարկել, ինձ հրավիրել են, ցուցադրել եմ, իրենց հետաքրքրել է: Բայց կարգ կա, որին պետք է հետևեն: Պետք է համեմատություններ անեն, նոր որոշեն, թե որն են գնում: Հիմա որոշում են՝ գնեն, թե ոչ», - ասաց Արամ Եղիզարյանը:

Ամերիկացի զեներալը հանդիպումներ է ունեցել Հայաստանի ՊՆ-ում



Մայիսի 23-ին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն ընդունել է Եվրոպայում ԱՄՆ ցամաքային զորքերի հրամանատար, զեներալ-լեյտենանտ Ֆրեդերիկ

/Բեն/ Հոդջեսի եւ ԱՄՆ Կանգասի նահանգի Ադյուտանտ գեներալ, զեներալ-մայոր Լի Թաֆանելլիի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Ռիչարդ Միլսի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Եվրոպայում ԱՄՆ ցամաքային զորքերի եւ Կանգասի նահանգի հետ համագործակցությանն առնչվող հարցեր: ՀՀ պաշտպանության նախարարը կարեւորել է համագործակցության շրջանակներում իրականացվող մի շարք նախագծերը, մասնավորապես՝ փոխգործակցելիության մակարդակի բարձրացման նպատակներով համատեղ վարժանքներ, պրոֆեսիոնալ սերժանտական համակարգի պատրաստում, միջազգային խաղաղապահ առաքելություններին աջակցելու նպատակով Հայաստանի ստանձնած հանձնառությամբ բժշկական եւ ինքնաշեն պայթուցիկ սարքերի հայտնաբերման եւ վնասագերծման մասնագիտացված ստորաբաժանումների պատրաստում եւ այլն:

Գեներալ-լեյտենանտ Հոդջեսը շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ նշել է, որ ուրախ է Երեւանում անձամբ լինելու եւ համագործակցության զարգացման ուղղությամբ քննարկումների ունենալու համար, հատկապես, որ այս տարի արդեն հնարավորություն է ունեցել տեսնելու ՀՀ ՉՈՒ ռազմաբժշկական անձնակազմի տպավորիչ մասնակցությունը Գեմանիայի Հոհենֆելս քաղաքում Եվրոպայում ԱՄՆ ցամաքային զորքերի «Միաձուլված Մուր» զորավարժությանը:

Հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել զարգացնել Եվրոպայում ԱՄՆ ցամաքային զորքերի եւ Կանգասի Ազգային Գվարդիայի համագործակցությունը Հայաստանի հետ՝ ինչպես երկկողմ ձեւաչափով, այնպես էլ տարածաշրջանում այլ գործընկերների հետ՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում, ինչպիսիք են խաղաղապահ գործողությունները եւ ՆԱՏՕ-ի «Օպերատիվ կարողությունների հայեցակարգ» ծրագիրը:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման շուրջ քննարկումների ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարը ներկայացրել է ապրիլի սկզբին ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի սանձազերծած մարտական գործողությունների, ինչպես նաև դարաբաղա-ադրբեջանական հակամարտ գորքերի շփման գծում տիրող ներկայիս իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն:

Ամերիկյան կողմը հայտնել է իր մտահոգությունը Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած բռնությունների զարգացման ժամանակ կողմերի կրած մարդկային կորուստների կապակցությամբ, նշել, որ հավատարիմ է ԵԱՀԿ խմբի գործընթացի միջոցով համակարտության խաղաղ կարգավորմանը:

Այցի ընթացքում ամերիկյան պատվիրակությունը մասնակցել է մարշալ Համագասպ Բաբաջանյանի արձանի բացման արարողությանը:

Թաքցնելու բան չկա, եղել է զորքերի որոշակի տեղաշարժ. Սեյրան Օհանյան


Թաքցնելու բան չկա, եղել է զորքերի որոշակի տեղաշարժ: Այս մասին այսօր՝ մայիսի 23-ին, լրագրողների հետ զրույցում ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը՝ պատասխանելով հարցին, թե Վահրամ Բաղդասարյանի հայտարարությունը, որ 800 հեկտարն ամայի տարածք է, նշանակու՞մ է, որ մեր զինվորները կռվել են մի տարածքի համար, որի մասին պետք է մոռանանք:

«Մարտական գործողությունների ժամանակ լինում է գորքերի տեղաշարժ: Պաշտպանության բանակի ողջ անձնակազմն իր առջև դրված խնդիրը կատարել է: Թաքցնելու բան չկա, եղել է գորքերի որոշակի տեղաշարժ, որն այսօր գտնվում է ՊԲ ողջ անձնակազմի, տվյալ հատվածներում գտնվող ստորաբաժանումների վերահսկողության ներքո: Այդ տարածքներն ամրագրված են ԼՂՀ տարածքներում եւ կարծում եմ, որ բանակցային գործընթացում համապատասխան ընթացք կտրվի, որը կվերաբերվի նաև այս տարածքներին»,- ասաց Սեյրան Օհանյանը:

Հարցին՝ մենք պետք է մոռանա՞նք այդ տարածքների մասին, ինչպես Վահրամ Բաղդասարյանն է ասել, նախարարը նշեց. «Ինչպես մենք չենք մոռանում մեր պատմական տարածքները, այդպես էլ այդ տարածքները չենք կարող մոռանալ: Դրա համար մենք ստեղծել ենք այնպիսի դիրքային պաշտպանություն, որ վերահսկողությունը ազդեցության, նախաձեռնողականության առումով Պաշտպանության բանակի անձնակազմի ձեռքերում է»:

Հիշեցնենք, որ մայիսի 20-ին խորհրդարանական ճեպագրույցների ժամանակ ԱԺ ՀՀԿ խմբակցության ղեկավար Վահրամ Բաղդասարյանը մասնավորապես հայտարարել էր. «Հարկավոր է ավելի խորամիտ լինել, հետևանքների մասին մտածել, ոչ թե այն հողը, որն ընդհանրապես որել է ռազմավարական նշանակություն չունեցող, չմշակվող, ամայի տարածք էր, որի մասին ընդհանուր առմամբ մենք երկար ենք խոսել եւ դեռ պետք է շարունակենք խոսել: Ինձ թվում է՝ պետք չէ ծանրանալ այդ խնդրի վրա»:

Հայագետ. Հայաստանը պետք է հասնի Ադրբեջանի վանդալիզմի միջազգային ճանաչմանը



Հայաստանի պետական քաղաքականության մեջ գոյություն չունի Նախիջեւանի հարց: Այդ մասին մայիսի 27-ին հայտնել է հայագետ, Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ Արգամ Այվազյանը:

Նրա խոսքով, Ղարաբաղյան շարժման սկզբնական փուլում Նախիջեւանի հարցը քննարկվում էր, բայց դրանից հետո Հայաստանի իշխանությունների համար արդեն հետաքրքրություն չի ներկայացնում: Նախիջեւանում, ընդգծել է հայագետը, ոչնչացվել է ավելի քան 27 հազար հայկական հուշարձան: «Հայաստանը երբեք հետևողական չի եղել միջազգային մակարդակում եւ չի կարողացել հասնել Ադրբեջանի այդ վանդալիզմի դատապարտմանը», - նշել է Այվազյանը:

Փորձագետ. Անհրաժեշտ է բարձրացնել Ադրբեջանի հայերի գույքային իրավունքների հարցերը

Անհրաժեշտ է հասնել Ադրբեջանի հայերի գույքային իրավունքների ճանաչմանը: Այդ մասին մայիսի 27-ին լրագրողների հետ հանդիպմանը հայտնել է «Մոդուս Վեվեդի» վերլուծական կենտրոնի ղեկավար Արա Պապյանը:

Ադրբեջանը, նրա խոսքով, տապես հայկական կողմին մեղադրում է իրենց գոյություն չունեցող հուշարձանների ոչնչացման համար: «Մենք պետք է բարձրացնենք Ադրբեջանի հայերի գույքային իրավունքների ճանաչման հարցը: Մյուս կողմից, մենք պետք է փաստեր բերենք, թե ինչու Ադրբեջանի հայերը չեն կարող վերադառնալ իրենց տներ: Եթե նրանք հանկարծ հայտնվեն այնտեղ, նրանց կսպանեն», - ընդգծել է Պապյանը: Երբ մենք խոսում ենք բանակցությունների մասին, շարունակել է նա, պետք է նկատի ունենանք ոչ միայն Լեռնային Ղարաբաղի հարցը: «Միջազգային հարաբերություններում հարցը գոյություն ունի միայն եթե այն բարձրացնում են եւ դժգոհություն են հայտնում», - նկատել է Արա Պապյանը:

Դավիթ Բաբայան. Ադրբեջանը փորձում է թաքցնել Ղարաբաղի բնակչության թունավորման բազմաթիվ փաստերը



Ադրբեջանը փորձում է թաքցնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության թունավորման բազմաթիվ փաստերը: Այս մասին Երևանում լրագրողների հետ զրույցում մայիսի 27-ին հայտնել է ԼՂՀ նախագահի մամուլի քարտուղար Դավիթ Բաբայանը:

Նրա խոսքով, Ադրբեջանը բազմիցս փորձել է քիմիական նյութեր օգտագործել Լեռնային Ղարաբաղի բնակչության դեմ: «Դա եղել է նաև խորհրդային տարիներին, երբ Հեյդար Ալիևը իշխանության եկավ: Նրանք թունավորում էին Ստեփանակերտի ջրային պաշարները, դրա համար էլ Ղարաբաղը, որը 1970-ին աշխատում առաջին տեղն էր զբաղեցնում երկարակեցության մակարդակով ու վերջին տեղը՝ քաղցկեղով հիվանդացության մակարդակով, 1989-ին առաջին տեղն էր զբաղեցրել հիվանդացության մակարդակով», - նշել է Բաբայանը: Բացի դրանից շարունակել է նա, 1990-ին նրանք թունավորել են Ստեփանակերտի ջրամատակարարման ամբողջ ցանցը, ինչի հետևանքով բնակչության 1/3-րդը ջրից զրկվել էր: «Շատերը հիվանդանոցում էին հայտնվել: Նույնն է կատարվել նաև Ծուշիի շրջանում: Երբ նրանք խոսում են Քարվաճառում հայկական ԱԷԿ-ի թափոնների մասին (իհարկե դա այդպես չէ), մենք հասկանում ենք, որ դա

կարող է հիմք դառնալ, որ եթե աստված մի արասցե նրանք ինչ -որ կերպ կարողանան ազդեցություն ունենալ այդ տարածքի վրա, ապա պարտադիր կթունավորեն գետերը, այսինքն ամբողջ Հայաստանին «ցեղասպանության» կենթարկեն»,- հավելել է Դավիթ Բաբայանը:

Բաբայան. Ադրբեջանում միջազգային միջոցառումների կազմակերպումը խայտառակություն է



ԼՂՀ ու Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում իրավիճակը ավելի համգիստ է 2014-ին տիրող իրավիճակի համեմատ: Այս մասին լրագրողների հետ զրույցում մայիսի 27-ին հայտնել է ԼՂՀ նախագահի քարտուղար Դավիթ Բաբայանը «Հայաստան» համահայկական հիմնադրամի տեղական մարմինների ու հոգեբարձուների 25-րդ համատեղ նիստի շրջանակում:

Նրա խոսքով ներկա իրավիճակը չի կարելի համեմատել քառօրյա պատերազմի ժամանակ տիրող իրավիճակի հետ, քանի որ ապրիլին լայնածավալ ռազմական գործողություններ էին: «Կրակոցներ կան, կան հրադադարի խախտումներ, բայց քանակական ու որակական տեսակետից չի կարելի համեմատել այն իրավիճակի հետ, որը տիրում է վերջին երկու տարիներին»,- շեշտեց Բաբայանը:

Անդրադառնալով Ադրբեջանում միջազգային մակարդակի միջոցառումներին, նա նշեց «Հարցն այն է, որ մենք խայտառակություն ենք համարում նմանատիպ միջոցառումների կազմակերպումը: Մենք բազմիցս հայտնել ենք, որ նման քաղաքականությամբ միջազգային համայնքը ու մի շարք քաղաքակիրթ պետություններ թեւավորում են ագրեսորին: Երբ պետության մեջ, որը փակում է «Ազատություն» ռադիոկայանի գրասենյակը, ԵԱՀԿ գրասենյակը, որտեղ Բուդապեշտում հայ սպային կացնով սպանած մարդասպանին ազգային հերոսի կոչում են տալիս, որտեղ ազգային հերոս են դառնում այն մարդիկ, որոնք խոշտանգում են մարմինները, ցուցադրում գլխատված տարեց մարդկանց, անցնում են Առաջին համաեվրոպական խաղեր, ՄԱԿ քաղաքակրթությունների ֆորում, դա պարզապես խայտառակություն է»: Դրանից, արձանագրեց Դավիթ Բաբայանը, Ադրբեջանը թեւավորվում է, սկսում է ագրեսիվ քաղաքականություն է վարել: Այդ միջոցառումների անցկացման ժամանակ, շարունակեց նա, Ադրբեջանը իրեն գուսպ է պահում, իսկ հետո ամեն ինչ փոխվում է: «Դա դոպինգ է տալիս ագրեսորին ու հանցագործին, իսկ հետո արդեն դժվար է լինում նրան զսպել: Քառօրյա իրադարձությունները նույնպես նման քաղաքականության հետեւանքն էին: Ավելին, որոշակի պետությունների ներկայացուցիչներ հայտարարում են, որ Ադրբեջանը քաղաքակրթությունների ու հանդուրժողականության հայրենիք է: Մենք դեմ ենք, որ միջազգային համայնքը նման քայլեր կատարի: Մա որոշ իմաստով լակմուսե թուղթ է»,- ասել է Դավիթ Բաբայանը՝

հավելելով, որ մի օր ահաբեկիչները կգան նրանց տուն, ովքեր նրանց աջակցում են:

Երուսաղեմի միացյալ հանձնախումբը ԼՂՀ բանակի համար բուժաբարավորումներ է ձեռք բերել



Հանրապետության պաշտպանական կարիքների բավարարմանը միտված բարեգործական նախաձեռնությամբ են հանդես եկել Երուսաղեմի միացյալ հանձնախմբի անդամները, որոնք կենտրոնացնելով տեղի հայ համայնքի ներուժը պաշտպանության բանակի համար ձեռք են բերել դեղորայք եւ բժշկական սարքավորումներ, զինծառայողների համար նախատեսված անհատական դեղատուփեր:

ԼՂՀ ՊԲ-ից հայտնում են, որ այսօր՝ մայիսի 27-ին միացյալ հանձնախմբի ներկայացուցիչներին ընդունել է ԼՂՀ ՊՆ, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականյանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են հանձնախմբի կողմից ՊԲ-ին ուղղված ծրագրային հետագա նախաձեռնություններին վերաբերող հարցեր: Այնուհետև միացյալ հանձնախմբի անդամներն այցելել են Ստեփանակերտի զինվորական հոսպիտալ, տրամադրել դեղորայք եւ բուժաբարավորումներ, շփվել վիրավոր եւ առողջական այլ խնդիրներ ունեցող զինծառայողների հետ: Հյուրերը նաեւ շնորհակալություն են հայտնել բուժանձնակազմին ապրիլյան իրադարձությունների ժամանակ մասնագիտական պարտքը բարձր մակարդակով կատարելու համար եւ հավաստիացրել, որ այսուհետ եւս պատրաստ են հանդես գալու նման նախաձեռնություններով: Միացյալ հանձնախմբի անդամները նույն առաքելությամբ այցելել են նաեւ բանակային առաջնագիծ:

Կոմանդոսը՝ Սամվել Բաբայանի վերադարձի մասին. Խնդիրները հարկավոր է միասնական լուծել



Այնքան էլ հասկանալի չէ, թե վերադարձից հետո ինչպես է հանդես գալիս ԼՂՀ պաշտպանության նախկին նախարար, գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայանը, որպես ռազմական, թե՛ քաղաքական գործիչ: Այս մասին թղթակցի

հետ գրույցում հայտարարեց արցախյան պատերազմի հերոս, գեներալ-մայոր Արկաղի Տեր-Թադևոսյանը՝ Կոմանդոսը:

Նրա խոսքով, նա մի քանի տարի բացակայում էր, իսկ հիմա հայտնվեց: «Ես շատ լավ գիտեմ Սամվել Բաբայանին, հարգում եմ նրա գործունեությունը: Մարդը ցանկացավ ինչ-որ բան անել, բայց մի ասացվածք կա. «Դաշտում միայնակ մարդը զինվոր չէ»: Խնդիրները հարկավոր է միասնական լուծել: Մա քաղաքացիական պատերազմ չէ: Եթե Սամվել Բաբայանը ցանկանար ինչ-որ բան անել, կգար, ծրագրային հայտարարություն կաներ, ինչ-որ մեկի հետ կխորհրդակցեր», - հավելեց Կոմանդոսը:

Հիշեցնենք, որ «Սամվել Բաբայան. վերադարձ» քաղաքացիական նախաձեռնության ներկայացուցիչները մայիսի 23-ին հայտարարություն են տարածել, որում նշվում է. «Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակի հիմնադիր, ԼՂՀ պաշտպանության նախկին նախարար, գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայանը Հայաստան է վերադարձել: Սամվել Բաբայանի փորձն ու ունակությունները կարող են անգնահատելի դեր ունենալ նաև այսօր»: Սամվել Բաբայանը վերջին շրջանում Մոսկվայում էր:

Երևան ժամանելուց հետո նա առայժմ մեկ հարցազրույց է տվել, որում մտահոգիչ է կոչել ապրիլյան իրադարձություններից հետո ստեղծված իրավիճակը: «Մի քանի օր անց ես կմեկնեմ Ղարաբաղ, քանի որ հենց այնտեղ եմ տեսնում իմ վերադարձի գլխավոր առաքելությունը», - հայտարարել է նա:

Ըստ աղբյուրի՝ գյուղի հայկական անվանումը Մերկեիլ է: Թուրքիայի Հանրապետության հոշակումից հետո սույն գյուղի անունը եւս թուրքացվում է եւ նախ վերածվում Միվզելիքի, ապա՝ դառնում Աչքբջյունէյ:



Գյուղի Սուրբ Փրկիչ հայկական եկեղեցին կառուցվել է 1139 թվականին, իսկ 1867 (1870) թ.՝ վերականգնվել կարինցի (երգրում) Կարապետ աղա Մուրադյանի և նրա բարեգործ տիկնոջ՝ Հուրիսայի միջոցներով: Մինչև 1915 թ. Յեղասպանությունը եկեղեցու հարևանությամբ գործել է նաև հայկական դպրոց:

Աղբյուրի համաձայն՝ գյուղում մինչ օրս հավատում են, որ լուսնոտությամբ տառապող հիվանդներին հնարավոր է բուժել սույն եկեղեցու գտնվող անկողնում:

Թուրքիայում գանձագողերը հայկական գերեզման են պղծել

Արևմտյան Հայաստան

Թուրքիայի Համշենում դագաղներով ակցիա են իրականացրել

Թուրքիայի Ռիզե նահանգի Չամլիհեմշինի (Համշեն) շրջանի բնակիչներն իրենց բողոքը հետաքրքիր ձևով են իրականացրել:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Ռիզեի Չամլիհեմշինում բնությունը պահպանելու նպատակով 1997-ին շրջանը ընդգրկվել է հատուկ պահպանության գոտիների ցանկի մեջ: Հենց այս հանգամանքը շրջանի բնակիչներին մեծ գլխացավանք է պատճառել, ինչի դեմ էլ տեղի է ունեցել դագաղներով ակցիան:

Ակցիայի մասնակիցները նշել են, որ իրենց բնակավայրը պահպանության գոտի լինելու պատճառով իրենք չեն կարողանում ոչ տուն, ոչ էլ խանութ վերանորոգել կամ գերեզման փորել: Բնակիչները բողոքել են, որ արդեն հոգնել են դատական գործերից, որոնց հետևանքով արդեն 50 հոգի հայտնվել է բանտում:

Բնակիչները ակցիայի ժամանակ դագաղների վրա գրել են «պահպանության գոտի» եւ նետել գետը:



Թուրքիայի Մուշի հայկական գերեզմանները կրկին ենթարկվել են գանձագողերի հարձակումներին:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Սասունի, Բիթլիսի, Մուշի, Վան եւ մյուս հայկական բնակավայրերի հայերի միության նախագահ Ազիզ Դադջըն Մուշում միաբողոքներին ցույց է տվել գանձագողերի կողմից պղծված հայկական գերեզմանները:

Ազիզ Դադջըն նշել է, որ գանձագողերը պղծել են հայկական տասնյակ գերեզմաններ՝ հանգուցյալների ոսկորները շաղ տալով շրջակայքում:

Նա շեշտել է, որ այդ հարցով արդեն դիմել է Մշակույթի եւ տուրիզմի նախարարություն եւ կազմվել է համապատասխան արձանագրություն: «Բացի այդ գերեզմանների վերականգնման հարցով էլ դիմել Մշակույթի եւ տուրիզմի նախարարություն», -ասել է Ազիզ Դադջըն՝ կոչ անելով գանձագողերին անտեղի չպղծել հայերի գերեզմանները, քանի որ հայերը հանգուցյալների հետ ոսկիներ չեն դնում:

Թուրքիայում ավերվել է Քդիի վերջին հայկական եկեղեցին

Թուրքիայի Քդի գավառի Աչքբջյունէյ (Միվզելիք) գյուղի Սուրբ Փրկիչ հայկական եկեղեցին լրջորեն վնասվել է անցյալ տարվա դեկտեմբերին տեղի ունեցած երկրաշարժից:

Ինչպես տեղեկացնում է Akunq.net-ը, 2015 թ. դեկտեմբերի 3-ին 5.5 մագնիտուտ ուժգնությամբ երկրաշարժից տուժել են նաև հիշյալ գյուղի 35 տներ:

Գերսիմի հայկական ժայռ-եկեղեցին ավերվում է



Թուրքիայի Թունջեյի նահանգի (Գերսիմ) Մազգիրթի շրջանում գտնվող հայկական պատմական ժայռ-եկեղեցին մեծ վնաս է կրել զանձագողերի պատճառով: Այս մասին հաղորդում է Akunq.net-ը:

Ըստ աղբյուրի՝ 5 մ բարձրություն և երկու փոքր պատուհաններ ունեցող սույն եկեղեցին ներկա պահին զանձագողերի թիրախն է հանդիսանում: Եկեղեցու վիճակը ողբալի է: Խորանը եւս քանդված է:

Նշվում է, որ Թուրքիայի մյուս բազմաթիվ պատմական եկեղեցիների նման, այս եկեղեցին նույնպես մեծ ավերածությունների է ենթարկվում զանձագողերի կողմից:

Հայերին սպառնացած թուրք ազգայնական գործիչը ազատագրվման է դատապարտվել



Թուրքիայի քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության կողմից պատգամավոր ընտրված Կարո Փայլանը դատական շահել է ազգայնամոլական «Իդեալիստական օջախներ»-ի Կարսի կառույցի ղեկավար Թուգա Ադրգյուզեյի դեմ ներկայացրած հայքը:

Թուրքական CNNturk-ի փոխանցմամբ՝ թուրքական դատարանը Թուգա Ադրգյուզեյին դատապարտել է 6 ամիս ազատազրկման եւ 11 հազար 240 լիրա տուգանքի՝ «Ժողովրդի նկատմամբ թշնամանք ու ատելություն սերմանելու, նվաստացնելու» մեղադրանքներով: Դատարանը հաշվի է առել, որ Թուգա Ադրգյուզեյը նախկինում դատապարտված չի եղել եւ հետաձգել է պատժի կիրառումը:

Նշենք, որ Հայոց նախկին մայրաքաղաք Անիում հայ երաժիշտ Տիգրան Համայանի համերգից հետո ազգայնամոլ Թուգա Ադրգյուզեյը սպառնացել էր հայերին՝ ասելով հետևյալը. «Հիմա Կարսի փողոցներում հայերի դրսի դուրս գա՛նք»:

Այս հայտարարությունից հետո Կարո Փայլանը Կարսում աշխատող 10 փաստաբանների միջոցով Կարսի հանրապետական դատախազությունում հայց է ներկայացրել «Իդեալիստական օջախներ»-ի Կարսի կառույցի ղեկավար Թուգա Ադրգյուզեյի դեմ:

Միյուռք

Սամվել Կարապետյանի թանկարժեք զբոսանավը Թուրքիայի ափերին է խարխսխ գցել



Ռուսաստանաբնակ հայ միլիարդատեր Սամվել Կարապետյանին պատկանող Ace թանկարժեք զբոսանավն ու ուղեկցող եւս մեկ նավ խարխսխ են գցել Թուրքիայի Մարմարիս հանագտավայրի ափերին:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Մարմարիսի ափերին խարխսխ գցած հայ միլիարդատերի զբոսանավը բոլորի ուշադրության կենտրոնում է հայտնվել: Նշվում է, թե հայտնի չէ, թե ովքեր են գտնվում զբոսանավի մեջ:

ԱՄՆ Հայկական Համագումարը կոչ է անում 15 մլն դոլար տրամադրել ՀՀ-ին՝ սիրիացի փախստականների համար



Ամերիկայի Հայկական Համագումարը ԱՄՆ կառավարությանը կոչ է անում Հայաստանին 15 մլն դոլար տրամադրել սիրիացի փախստականների օգնության համար: Հայ դատի հանձնախմբի կոչը հնչել է Թուրքիայում սիրիացի փախստականների օգնության հետ կապված խարդախությունները բացահայտելու ֆոնին:

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID), հաշվի առնելով Թուրքիայում կաշառակերության փորձը, դադարեցրել է փախստականներին հումանիտար օգնության ծրագրերին մասնակցող 14 իրավաբանական անձանց եւ անհատների գործունեությունը:

«Հաշվի առնելով վերջին զարգացումները Ամերիկայի Հայկական Համագումարը նորից կոչ է անում 15 մլն դոլար օգնություն մատակարարել Հայաստանին փախստականների օգնության ծրագրերի

շրջանակներում»,- ասել է Ամերիկայի Հայկական Համագումարի գործադիր տնօրեն Բրայան Արդունին: Նա ամերիկահայերին կոչ է արել դիմել Կոնգրեսին եւ իրենց ձայնը լսելի դարձնել կարիքավորներին օգնելու գործում:

«USAID-ի հետաքննությունը հայտնաբերել է մատակարարների առետրային ցանց, որոնք կեղծել են օգնության դիմումները, կաշառակերության սխեմաներ կազմել Սիրիա հումանիտար օգնության մատակարարումներին ձեռք գցելու համար»,- ասված է հայտարարության մեջ:

Պատերազմի եւ խաղաղության լուսաբանման ինստիտուտը (IWPR) հայտնել էր, որ Հայաստանը փախստականների ինտեգրման եւ պետության կողմից ջերմ ընդունելության առաջացած բացառիկ օրինակ է: Ամերիկայի Հայկական Համագումարը կոչ է անում ԱՄՆ կառավարությանը ուսումնասիրել Հայաստանին սիրիացի փախստականների օգնության համար 15 մլն դոլար տրամադրելու հարցը:

Մարգար Եսայանը Թուրքիայի իշխող կուսակցության ղեկավար կազմում է ընդգրկվել



Թուրքիայում մայիսի 22-ին իշխող «Արդարություն եւ զարգացում» (AKP) կուսակցության արտահերթ համագումարում կուսակցության ղեկավար կազմում լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել:

Թուրքական Cumhuriyet-ի փոխանցմամբ՝ AKP-ի ղեկավար կազմը համարվող MKYK-ի կազմում են ընդգրկվել Էրդողանին հաճելի գործիչներ, այդ թվում իր գործունեությամբ նախագահ Էրդողանին իր հավատարմությունը ցույց տված հայ պատգամավոր Մարգար Եսայանը:

Նշենք, որ AKP-ի արտահերթ համագումարում կուսակցության նախագահ է ընտրվել միակ թեկնածու, Տրանսպորտի եւ կապի նախարար Բինալի Յըլդըրըմը, ով առաջիկայում կնշանակվի վարչապետ եւ կկազմավորի նոր կառավարություն:

Միջազգային

Չախարովան Թուրքիայի իշխանություններին հիշեցրել է Օսմանյան կայսրության ճակատագրի մասին

Թուրքիայի իշխանությունները երագում են վերականգնել Օսմանյան կայսրությունը, սակայն մոռանում են դրա ճակատագրի մասին: Նման տեսակետ է հայտնել

Ռուսաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Չախարովան izvestia.ru- ին տված հարցազրույցում:

«Այնպիսի տպավորություն է, որ նա (Թուրքիայի կառավարությունը) ուզում է վերականգնել Օսմանյան կայսրության երբեմնի հզորությունը: Համենայն դեպս նրա ժամանակակից քաղաքականության բոլոր բաղադրիչները տեղավորվում են հենց այդ պատկերի մեջ: Իսկ թե ինչ վախճան է ունեցել Օսմանյան կայսրությունը՝ բոլորս գիտենք»,- ասել է Չախարովան:



Դիվանագետը նշել է, որ Ռուսաստանը բոլոր հնարավոր միջոցներով փորձել է բանակցային սեղանի շուրջ կարգավորել Անկարայի հետ տարաձայնությունները, սակայն ամեն ինչ ձախողում են Թուրքիայի գործադիր իշխանությունները, որոնց Մոսկվան «չսպից երկար է հանդուրժել»: «Ինչ թրեք էլ վերցնենք՝ Դրիմ, Սիրիա, փախստականներ, ահաբեկչություն, ազգային հարց եւ այլն՝ ամենուրեք մենք տեսնում ենք թուրքական ղեկավարության ամբողջովին ապակառուցողական դերը»- արձանագրել է նա:

Ընդ որում Չախարովան կարծիք է հայտնել, որ մոտ ժամանակներս չարժե ակնկալել Անկարայի դիրքորոշման փոփոխություն, քանի որ Թուրքիայի իշխանությունները «լարում են իրավիճակը»: Միևնույն ժամանակ Մոսկվան, նրա խոսքով կառուցողական է տրամադրված: «Մենք իդեալական չենք, բայց մենք պատրաստ ենք աշխատել ու աշխատում ենք այն հարցերի շուրջ, որոնք առաջացնում են միջազգային համայնքի մտահոգությունը: Մենք բացատրում ենք մեր դիրքորոշումը: Մենք դրա համար օգտագործում ենք բոլոր օրինական մեթոդները », - ամփոփել է ԱԳՆ ներկայացուցիչը:

Reuters. Ղարաբաղի խնդիրը միջազգային հանրությանը մտահոգում է մասամբ խողովակաշարերի պատճառով



Մայիսի 17-ին՝ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտության վերաբերյալ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների միջև ձեռք բերված պայմանավորվածությունից մի քանի ժամ անց

շվեդական գծում Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի զինծառայողներ են զոհվել, գրում է Reuters գործակալությունը:

Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների հանդիպումը Վիեննայում առաջինն էր մարտական գործողությունների վերսկսումից հետո, գրում է գործակալությունը՝ հավելելով, որ ապրիլին տասնյակ զինվորներ են զոհվել, իսկ հարեւանների միջև հարաբերությունները ավելի են վատացել, քան եղել են տարիներ շարունակ:

Գործակալությունը մեջբերում է Լեռնային Ղարաբաղի ՊՆ-ի հաղորդագրությունը, որի համաձայն հայ զինծառայող է զոհվել Ադրբեջանի կողմից հրաձգության հետեւանքով: Նաեւ նշում է, որ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Զերին առանձին բանակցություններ է ունեցել երկու երկրների առաջնորդների հետ: «Հակամարտությունը միջազգային համայնքին մտահոգում է մասամբ որովհետեւ այն կարող է ապակայունացնել իրավիճակը մի տարաշաշտի մասում, որը միջանցքի դեր է կատարում համաշխարհային շուկաներ նվաճելու ու գազ մատակարարող խողովակաշարերի համար», - ասվում է հոդվածում:

Յեղասպանության հարցում Գերմանիայի ԱԳ նախարարի բառերը գայրացուցիչ են. Բունդեսթագի պատգամավոր



Չայրացուցիչ է, որ Գերմանիայի արտգործնախարար Ֆրանկ Վայթեր Ծթայնմայերը թույլ է տալիս Թուրքիայի նախագահ Էրդողանի կողմից ճշման ենթարկվել: Այս մասին ասել է Գերմանիայի Բունդեսթագի «Ձախեր» խմբակցության պատգամավոր Ուլլա Յելփրեն թղթակցի խնդրանքով մեկնաբանելով Ծթայնմայերի այն հայտարարությունը, թե ինքը բավական հոռետեսորեն է տրամադրված Բունդեսթագում ցեղասպանության բանաձեւի ընդունման հարցում:

«Չայրացուցիչ է, որ նման բան է ասում սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչը: Միանշանակ է, որ նա իրեն թույլ է տալիս Էրդողանի ճշման տակ մնալ: Հունիսի 2-ին ցեղասպանության մասին բանաձեւի քննարկումներում մենք միանշանակ հարձակում կգործենք Ծթայնմայերի դեմ այդ պատճառով», - ասել է Ուլլա Յելփրեն:

Հասարակական

Լեւոն Տեր-Պետրոսյան. Ղարաբաղի անկախության ճանաչման հարցի շուրջ. iLur.am

Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հոդված է հրատարակել iLur.am կայքում:

«Կասկածից վեր է, որ միջազգային հանրությունը վաղ թե ուշ ճանաչելու է Ղարաբաղի անկախությունը: Այսպիսի համոզում արտահայտելու հիմք է ծառայում այն պարագան, որ աշխարհը, հանձինս Մինսկի խմբի համանախագահության եւ անձամբ Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահների, արդեն իսկ ճանաչել է հանրաքվեի միջոցով ինքնորոշվելու Ղարաբաղի ժողովրդի իրավունքը: Այս կապակցությամբ ես ուշադրություն եմ ուզում հրավիրել ԱՄՆ Պետդեպի փոխխոսնակ Մարկ Թոմերի ս.թ. մայիսի 5-ին արած հետեւյալ հայտարարության վրա. «Միացյալ Նահանգները, միջազգային հանրության մնացյալ անդամների հետ միասին, չի ճանաչում Լեռնային Ղարաբաղը: Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը որոշվելու է համընդգրկուն կարգավորման կոնտեքստում»: Բսկ համընդգրկուն կարգավորում ասվածը ոչ այլ ինչ է, եթե ոչ Մինսկի խմբի համանախագահության կողմից Մադրիդյան սկզբունքների հիման վրա մշակված պլանը, որում եւ ամրագրված է հանրաքվեի միջոցով Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման, այն է՝ անկախ պետություն ստեղծելու իրավունքը:



Ուստի Հայաստանն իր գործողություններով (խոսքը մասնավորապես Ղարաբաղը միակողմանիորեն ճանաչելու գաղափարի մասին է) ոչ թե պետք է շեղվի կարգավորման ընդհանուր տրամաբանությունից, այլ ընդհակառակը, ամբողջապես ներգրավվի Մինսկի խմբի բանակցային գործընթացում եւ կառուցողաբար ձգտի հասնել իր նպատակին, քանի որ, ինչպես արդեն նշվեց, այդ գործընթացի օրակարգում քննարկվող փաստաթուղթը պարունակում է Ղարաբաղի անկախության ձեռքբերման անհրաժեշտ իրավական հիմքերը: Այս առումով գնահատելի եմ համարում, որ Հայաստանի իշխանությունները, Ղարաբաղի ղեկավարության համամտությամբ, ողջամտորեն խուսափեցին որոշ խորհրդարանականների անհաշվենկատ նախաձեռնությունը տուրք տալու գայթակղությունից: Միակողմանի ճանաչումը, եթե այն ապահովագրված չէ միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի) կամ գերտերություններից մեկ-երկուսի աջակցությամբ, հղի է

անկանխատեսելի ու աղետալի հետեւանքներով, որոնք այնքան ակնհայտ են, որ հարկ չկա անգամ թվարկելու: Ազգային փոքրամասնությունների անկախացման բոլոր հաջողված դեպքերը (Էրիտրեա, Արեւելյան Թիմոր, Կոսովո, Հարավային Սուդան, Արիւն, Աբխազիա, Հարավային Օսեթիա) տեղի են ունեցել բացառապէս այդպիսի աջակցության առկայության շնորհիվ: Հետեւաբար, քանի դեռ Հայաստանը գուրկ է միջազգային կազմակերպությունների կամ թեկուզ մեկ գերտերության աջակցությունից, պետք է գերծ մնալ Ղարաբաղի անկախությունը միակողմանիորեն ճանաչելու խելահեղ մտքից:

Կարգավորման գործընթացում հաջողության հասնելու համար, բացի Մադրիդյան սկզբունքներում ամրագրված ինքնորոշման հանրաքվեի գաղափարի հետապնդումից, հայկական դիվանագիտությունը պարտավոր է օգտագործել նաև Ղարաբաղի անկախության անհրաժեշտության հիմնավորման չափազանց կարեւոր մի այլ կովան: Խոսքը վերաբերում է միջազգային իրավունքի բնագավառում վերջին տասնամյակների ընթացքում ակտիվորեն մշակվող, այսպէս կոչված, «անջատում հանուն փրկության» (remedial secession) դոկտրինին, որի էությունը հետեւյալն է: Երբ որեւէ պետություն, իշխանությունների մակարդակով ռասայական, ազգային, կրոնական եւ այլատյացության հողի վրա սիստեմատիկաբար ռոտահարում է իր կազմում գտնվող էթնո-տերիտորիալ փոքրամասնության քաղաքացիական իրավունքները, դիմում բռնությունների, սպառնում բնաջնջմամբ կամ տեղահանությամբ, ապա միջազգային հանրությունը, այլեւս անհնարին համարելով տվյալ ժողովուրդների համակեցությունը, պարտավոր է հարկադրաբար, հանուն փոքրամասնության գոյության պահպանման, անջատել նրա զբաղեցրած տարածքը տվյալ պետությունից:

Ի դեպ, այս կովանը ժամանակին օգտագործվել է հայկական դիվանագիտության կողմից: Դեռեւս ԵԱՀԿ 1996 թվականի իսաբոնյան գագաթնաժողովում ունեցած իմ ելույթում ես, մասնավորապէս, ասել եմ հետեւյալը. «Այս գագաթնաժողովում, մեզ թվում է, Ադրբեջանը փորձում է խախտել բանակցային գործընթացի բոլորի կողմից ընդունված տրամաբանությունը: Մեր խորին համոզմամբ՝ ղարաբաղյան հիմնախնդիրը Ադրբեջանի կողմից առաջարկված սկզբունքների հիման վրա լուծելու դեպքում, Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա կախված կլինի ցեղասպանության կամ բռնի տեղահանության մշտական սպառնալիքը: Սումգայիթի (1988 թ. փետրվար), Կիրովաբադի (1988 թ. նոյեմբեր) եւ Բաքվի (1990 թ. հունվար) հակահայկական ջարդերի, ինչպէս նաև Ղարաբաղի 24 հայկական գյուղերի բնակչության տեղահանության (1991 թ. մայիս – հունիս) փորձը ամենայն ակներեւությամբ ցույց է տալիս, որ Ադրբեջանը, չնայած բոլոր հավաստիացումներին, չի կարող Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգության երաշխիքներ ապահովել: Ուստի, մենք այն կարծիքին ենք, որ նոր ողբերգության բացառման միակ հնարավորությունը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարգումն է» (Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երևան 2006, էջ 549): Ամիսներ անց այս միտքը շատ ավելի հստակ եւ արտահայտել եմ ֆրանսիական «Պոլիտիկ Էնտերնասիոնալ» հանդեսին տված հարցազրույցում. «Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի պաշտպանությունը բխում է ոչ թե պարզ ազգային ամբիցիայից, այլ այն հստակ գիտակցությունից, որ (Լիսաբոնում) առաջարկված լուծման դեպքում Ղարաբաղի հայության գլխին մշտապէս

կախված է լինելու ցեղասպանության վտանգը: Հայ ժողովուրդն այս դարում արդեն մեկ անգամ ենթարկվել է ցեղասպանության: Երկրորդ ցեղասպանությունն նա չի հանդուրժի» ("Politique internationale", No. 75, 1997. հայերեն թարգմանությունը՝ Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երևան 2006, էջ 552): «Remedial secession» սկզբունքի կիրառման փաստարկն ընդգրկվել է նաև Միջազգային Ճգնաժամային Խմբի (ICG) Ղարաբաղյան հակամարտությանը նվիրված 2005 թվականի զեկույցում, խմբի վերլուծաբան Լեւոն Չուրաբյանի պնդմամբ: Ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցում «անջատում հանուն փրկության» դոկտրինի կիրառման կարեւորությունն այնքան մեծ է, որ հայկական կողմի դիվանագիտությունն իրավունք չունի այն անտեսել: Բարեբախտաբար, մենք ունենք միջազգային իրավունքի մի հրաշալի մասնագետ, որը տարիներ շարունակ տարբեր ֆորումներում զբաղվում է տվյալ դոկտրինի մշակման աշխատանքներով եւ մեծ հեղինակություն է վայելում այդ ֆորումներում: Դա ֆրանսահայ հայտնի փաստաբան Բաֆֆի Գալֆայանն է, որը վերջերս ինձ գրած անձնական նամակում պատրաստակամություն է հայտնել, համապատասխան մասնագետների ուղեկցությամբ, գալ Երևան եւ ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակիցների հետ միասին ձեռնարկել Ղարաբաղի բնակչության նկատմամբ ադրբեջանական իշխանությունների կողմից տասնյակ տարիներ շարունակ կիրառված մարդու իրավունքների ռոտահարումներին, բռնի տեղահանություններին, պատերազմական գործողություններին վերաբերող մի ծանրակշիռ թղթածրարի պատրաստմանը՝ այն միջազգային ատյաններում ընդհուպ մինչեւ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում ներկայացնելու համար: Վստահ եմ, որ ՀՀ ԱԳ-ն սիրահոժար կերպով կօգտվի այս պատեհությունից:

Կես ժամվա ընթացքում դիրքերը հետ վերցրեցինք. Սամվել Կարապետյան. Hetq.am



Ներկա դրությամբ հրադադարն Ադրբեջանին ձեռնառն է, 4 օրվա ընթացքում այդքան զոհ են տվել, նրանք խելքի չեն գա երկար ժամանակ: Այս մասին «Հետքին» տված հարցազրույցում նշել է ԼՂ՝ պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-մայոր Սամվել Կարապետյանը:

Պարոն գեներալ, ի՞նչ էր կատարվում ապրիլի 2-ին, Գուք որտե՞ղ էիք:
Գիշերվա ժամը 3.30-ի կողմերը, երբ շտաբի օպերատիվ հերթապահը գանգեց (դա երկրորդ գանգն էր), ես արդեն պատրաստվում էի դուրս գալ: Մեքենան սպասում էր: Ինձ

մոտ զգացողություն կար, որ սա հերթական դիվերսիոն գործողությունը չէ: Մեքենայի մեջ, նոր տեղեկություններ ստանալուց հետո, հասկացա, որ պատերազմ է: Ներկայանալով բանակի հրամանատարին՝ իրավիճակի շուրջ որոշ պարզաբանումներ կատարելուց հետո առաջարկեցի մեկնել հյուսիս՝ Մարտակերտի ուղղությամբ, քանի որ այնտեղ լուրջ վտանգ կար: Երբ հասա Մարտակերտ եւ հրամանատարական կետը զբաղեցրի, տղաները կարծես թե չէին զգում, որ առջեւում լուրջ առնակատում է սպասվում... Այդ ընթացքում հակառակորդի հրետանին արդեն սկսեց աշխատել Մարտակերտի ուղղությամբ: 30 րոպե հետո զեկուցում են, որ հակառակորդը մտել է 116 եւ 118 դիրքեր: Չորամասի հրամանատարը, իր տրամադրության տակ եղած ուժերը վերցնելով, իսկույն մեկնում է գործողության վայր, իսկ հրետանու պետի առաջ խնդիր դնում կրակ բացել այդ դիրքերի վրա: Արդեն հայտնի էր, որ մենք այնտեղ գոհեր ունենք, տղաները հետ չեն քաշվել, կռվել են մինչեւ վերջ: Միայն մեկ հոգի էր կենդանի մնացել, որը վաշտի հրամանատարի հրամանով զնացել էր դիրքից 300 մ հեռավորության վրա գտնվող պահեստավայրից զինամթերք բերելու: Բայց երբ նա հետ է վերադարձել, դիրքերն արդեն հակառակորդի կողմից գրավված էին: Գալով հրամանատարական կետ՝ նա վերադասին զեկուցում է ստեղծված իրավիճակի մասին: Տեղում որոշում ենք կայացնում հրետանային կրակի օժանդակությամբ եւ տանկային վաշտի ներգրավմամբ անցնել հակադրոհի: Կես ժամվա ընթացքում դիրքերը հետ ենք վերցնում: Միայն այդ մարտում հակառակորդը, տալով մոտ 4 տասնյակ զոհ, որից 28-ը մնացել էր մեր հսկողության տակ գտնվող դիրքում, փախուստի է դիմում եւ թաքնվում մեր դիրքերից 250 մետր հեռավորությամբ գտնվող իրենց խրամատում: Չորամասը պահպանությունից անցնում է մարտական պաշտպանության: Դրանից հետո նրանք սկսում են հրետակոծել Մարտակերտը:

Ճեղք այդ հատվածում նրանք նորից հարձակում ծավալեցին:

Պարզ էր, որ նրանք նոր հարձակում են սկսելու այդ ուղղությամբ: Որոշ ժամանակ անց մերոնք զեկուցեցին, որ հակառակորդի տանկային գումարտակը շարժվում է 4-րդ եւ 5-րդ պաշտպանական շրջանների հատման հատվածի՝ Մեյսուլանի ուղղությամբ: Դրանց առաջխաղացումը կանգնեցնելու համար մեր հրետանին սկսեց աշխատել: Տեսնել էր պետը, թե ինչպես էին խոցվում հակառակորդի դիրքերն ու գրահատեխնիկան: Պաշտպանական գործողությունները հաջող էին ընթանում նաեւ մարտագծի հյուսիսային ուղղությամբ: Չնայած Թալիշի հատվածում մերոնք սկսել էին հետ վերցնել կորցրած դիրքերը, բայց ադրբեջանցիները հայտարարում էին, որ Թալիշը, Մատաղիսը եւ Մեյսուլանը վերցված են: Որ Թալիշի եւ Մեյսուլանի ուղղությամբ, իրոք, մարտեր էին ընթանում, դա արդեն մեզ հայտնի էր: Բայց սհա Մատաղիսի մասին լսելով՝ մենք կռահեցինք, որ թշնամին մտադրություն ունի գրոհել նաեւ Մատաղիսը: Դրանից ելնելով՝ մենք զեկուցեցինք բանակի հրամանատարին, որը որոշում ընդունեց ուժեղացնել 5-րդ ՊԾ-ի ձախ թեւի դիրքերի պաշտպանությունը՝ այնտեղ տեղափոխելով հակատանկային միջոցներ: Այս քայլով ամբողջությամբ փակվեց հակառակորդի առաջխաղացման հնարավորությունը Մատաղիսի ուղղությամբ:

Ապրիլյան պատերազմը ի՞նչ դասեր տվեց մեզ: Ճատ գոհեր ենք տվել, իհարկե,բայց այդ գոհերի գնով նաեւ դասեր ենք ստացել:

Հակառակորդը մեզանից ութ անգամ ավելի զոհ է տվել: Նվազագույնը 800-1000 կորուստ է ունեցել նա: Իսկ վիրավորների թիվն անհամեմատ շատ էր: Հակառակորդը շատ էր վստահ իր ուժերի վրա, կարծում էր՝ կմտնի, կմոռթի եւ կանցնի առաջ: Բայց մեր երեխեքը մինչեւ վերջ կանգնել եւ պաշտպանել են իրենց դիրքերը, մենք գիտեինք, որ մեր զինվորներն այդպիսին են: Միշտ էլ ասել ենք, որ այս սերունդը մեզանից շատ է անելու: Այն, ինչ մենք 1992-94թթ. արել ենք, իրենք ապացուցեցին, որ կարող են իրենց սխրանքներով ու կատարածով մեզ գերազանցել, մեզնից ավելին անել...

Իսկ ինչո՞ւ էր դա բացատրում:

Իրենց ծնողներից է գալիս, մեր երեխեքն են, չէ... Ոչ թե պատերազմ, այլ իրենց ծնողներից են լսել մեր երեխեք պատերազմի մասին: 1994-ից ընդամենը 22 տարի է անցել, իսկ այսօր առաջնագծում արդեն մեր երեխեքն են ծառայում: Նրանք ոչ թե ինչ-որ գիրք են կարդացել եւ դրանից իմացել մեր պատերազմի պատմությունը, այլ իրենց ծնողներից: Այդ տղաների մեջ իր ժողովրդին պաշտպանելու զգացումը կա, եւ դրանով ամեն ինչ ասված է:

Այս պատերազմը նաեւ մեր թերությունները բացեց, տեսանք, թե ինչպիսի բացթողումներ ունենք, եւ հիմա դրանք պետք է արագ վերացնենք: Կարելի է ասել, որ այդ չորս օրը մեզ համար լուրջ փորձաշրջան էր: Ճիշտ է՝ մեծ թվով գոհեր ենք տվել, բայց փրկել ենք բազում կյանքեր, ազգի կյանքն ենք փրկել: Այսօր պարտավոր ենք արագ ու նպատակալից աշխատել բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ:

Իսկ այդ թերությունները վերացնելու համար ինչ-որ բան արվո՞ւմ է հիմա:

Այո: Նշված բոլոր թերությունները գտնվում են նախագահի եւ բանակի հրամանատարի ուշադրության կենտրոնում, եւ դրանց վերացման ուղղությամբ իրականացվում են համապատասխան աշխատանքներ: Միեւնույն ժամանակ կուզեի նշել, որ այդ ամենով հանդերձ՝ դա ոչ միայն պաշտպանության բանակի խնդիրն է, այլ մեր պետության, մեր ազգի խնդիրն է...

Ո՞րն է, ըստ Ձեզ, հակառակորդին զսպելու ամենաարդյունավետ ձևը:

Հակառակորդին միշտ պետք է ուժ ցույց տանք, եթե նա հետեւակի մարտական մեքենա է հանում, մենք պետք է տանկ հանենք, եթե նա հրանոթով է խփում, մենք «Գրադով» պիտի խփենք... Նախաձեռնությունը մենք միշտ պետք է մեր ձեռքերում պահենք...

Մեր սպառազինությունը, կարծես թե, քիչ է հակառակորդից, այո՞:

Իրականում շնորհիվ իր հնարավորությունների՝ հակառակորդն ունի ավելի շատ սպառազինություն, քան մենք: Սակայն, մարտի ելքը որոշողը միայն սպառազինությունը չէ... Ապացույցը ոչ միայն դարբասայան առաջին պատերազմի արդյունքն է, այլ նաեւ ապրիլին տեղի ունեցած առնակատումը, որի ընթացքն ընդհատվեց ադրբեջանական կողմի խնդրանքով: Ճարունակվելու դեպքում մեկ անգամ եւս կհամոզվեինք, որ պատերազմի հաջող ելքը որոշում է լավ զինվորը... Իսկ մենք այդ առումով խնդիր չունենք:

Եթե համեմատելու լինենք, իրենց առավելությունը ո՞րն է, եւ մե՞րը որն է: Փորձենք համեմատել:

Իրենց մոտ առավելությունը զենքի տեսակներն են եղել: Բայց, ինչպես ասացի, ունենալ զենքի տեսակներ, դեռեւս չի նշանակում հաջողություն ունենալ: Ինչ վերաբերում է այս առճակատման ընթացքում ունեցած մեր առավելություններին, ապա, ըստ իս, դրանք երեքն էին՝ հայ զինվորը, լավ հրետանին եւ բանակի հրամանատարի ճիշտ ու ժամանակին կայացրած որոշումները:

Ըստ Ձեզ՝ ո՞րն էր ապրիլյան պատերազմում հայ զինվորին բնութագրող գլխավոր հատկանիշը:

Ես այս պատերազմի ժամանակ գրեթե ամեն ինչ տեսել եմ, բայց առավել խորը մի բան է մնացել իմ հիշողության մեջ: Տեսել եմ, թե ինչպես գոհված զինվորին վազելով բերում են, դնում շտապօգնության մեքենայի մեջ, ընկերը գալիս է ճակատը համբուրում ու վազելով նորից հետ գնում դիրքը պահելու: Առաջին պատերազմում չեմ տեսել նման բան, բայց հիմա դա տեսել եմ: Դրանից այն կողմ էլ ոչ մի բան չկա: Երբ ընկերոջն են կորցրել, նրանք իրենց ընկերոջ տեղն էլ են կռվել:

Բայց մենք չենք կարողացել ժամանակին այդ տղաների մասին հոգալ, գնահատել, ինչոր բան տալ: Երբ նրանց մասին նյույժ ենք պատրաստում, պարզվում է՝ նրանց մեծ մասը աղքատ են, անտուն, ծնողները աշխատանք չունեն:

Դարաբաղում պատերազմում գոհվածները, վիրավորների ընտանիքները պետության ուշադրության կենտրոնում են, բնակարանով հիմնականում ապահովված են: Չեմ ասում՝ ինչեր ենք արել, բայց նվազագույնն ապահովված է:

Երկու կողմի սխալների մասին խոսենք:

Իրենց սխալն այն է, որ մտածել են, որ իրենք ուժեղ են եւ կարող են մեզ ջարդել: Իրենց առաջին սխալը դա է եղել: Իրենք իրենց զենքերին նայելով, իրենց գումարների նայելով՝ ասել են միանգամից, կարճ ժամանակում կարող ենք մեր հարցերը լուծել: Մեր սխալները մենք գիտենք եւ դրանք վերացնելու ենք:

Իսկ իրենց զինատեսակներից ամենաշատ վնասը ի՞նչն է տվել, անօդաչուները (կամ իկաձեները):

Դրանք իրենք հիմնականում օգտագործել են ամսի 4-ին, երբ տեսել են, որ իրենց վիճակը լրջանում է: Սլսել են «կամիկաձե», «Սփայք» հրթիռներ օգտագործել, որոնք 2-ին, 3-ին չէին օգտագործել: Տեսել են, որ իրավիճակը փոխվում է, արդեն սլսել են դրանք օգտագործել: Առաջին անգամ պատերազմում կամիկաձե են օգտագործել, 20 հատ անօդաչու ենք խփել, 14-ը մեր ձեռքում է դրանցից, 6-ը չեզոք գոտում է ընկած:

Իսկ ի՞նչ էր կարծում՝ հակառակորդը կսկսի ռազմական գործողություններ:

Ներկա դրությամբ չեմ կարծում: Հրադադարն իրենց ձեռնտու է: 4 օրվա ընթացքում այդքան զոհ են տվել, նրանք խելքի չեն գա երկար ժամանակ:



Գերուժի խաղը

Վահիկ Բաղդասարյան

ՃԱՆԱԶՆԵԼ ՉԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՉԽՐԱՏ, ԻՄԱՆԱԿ ԶԲԱՆՍ ՀԱՆՃԱԲՈՅ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Իսլեցեք ժողովրդից ամեն ինչ, նա կարող է վերականգնել. սակայն խլեցեք նրա լեզուն, եւ նա այլեւս չի ստեղծի այն: Ժողովուրդը կարող է ստեղծել նույնիսկ նոր հայրենիք, բայց լեզու՝ երբե՛ք. մահացավ լեզուն՝ ժողովրդի շրթունքներում՝ մահացավ եւ ժողովուրդը:

Կոստանտին Ուշինսկի

Ներկայիս ժամանակում մեր ազգության ապացույց եւ նշանն միայն մեր լեզուն է, եթե այն եւս միջիցն բառնանք, էլ հայ չենք:

Մեսրոպ Թաղիոյան

Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզունն ա ու հավատը: Լեզուդ փոխիր, հավատդ ուրացիր, էլ ընչո՞վ կարես ասիլ, թե ո՞ր ազգիցն ես:

Չեզ են ասում, ձեզ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անուամբն մեռնիմ, ձեր արեւին դուրբան. տասը լեզու տվորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցեք:

Իսաչատուր Աբովյան

Լեզուն կորսնցնելու ետեւ եւ մանավանդ անոր հանդեպ անհոգ ըլլալն ետեւ մեկ ալ ազգային տվորությունք եւ հիշատակք եւ նշանք շուտով կկորսվի:

Ղևոնդ Ալիշան

Քանի որ ազգ մը իր լեզուն կպահե, թեպետ եւ ուրիշ ամեն ազգային հատկություններն ալ կորսնցնե, ազգությունը չկորսնցնե, իսկ լեզուն մեկդի ձգելուն պես ազգությունն ալ խիստ շուտ կկորսվի:

Գաբրիել Այվազովսկի

Աբադան (Մաս 1)



Միհրդատ Մարտիրոսեան Գլենդէլ



Աբադան Ալֆիի հրապարակը

Մի գրիր այն ժամանակ երբ շատ ես ուզում գրել: Մի գրիր այն ժամանակ երբ չես ուզում գրել: Գրիր այն ժամանակ երբ չես կարող չգրել: (Ռուբէն Բարսեան)

Ահա ես գրում եմ, երբ չեմ կարող չգրել:



Աբադան: -Քաղաք Իրանի հարաւարևմուտքում, Խուզիստան նահանգում:

«Աբադան անուն Քաղաք կայ, Ախալայան վիլայեթում, Թուրքմենաստանի արևմտեան մասում»: Աբադանում բնակություն են հաստատել Մասանեան տիրապետութեան շրջանից և շարունակել իսլամական տիրապետութիւնից մինչ հիմա: Իրանի Աբադանը քաղաքը , (آبادان) 46 քմ.երկարութեամբ, 20 ից 30 քմ. լայնքով, գտնուում է Ահազից 116 քմ. հեռավորութեամբ Իրանի հարաւ արևմուտքում: Շրջապատուած ձախից Արվանդ ջրուղիով, Արևլքից Բահմանշիր թաղամասով և Քարուն գետի մուտքով դէպի Պարսից ծոց : Պարսից ծոցից 50 կմ յիւսիս, Շաթ-էլ-Արաբ գետի ափին: Սահմամամերձ է Իրաքին: Աբադան քաղաքը ովկեանոսային նաւերի համար մատչելի նավահանգիստ: Ամենամեծ քարիւղի գտարանը այս քաղաքում է հիմնադրուած և ամբողջ խուզեստանի շրջանի քարիւղը այս քաղաք է բերում գտելու նպատակով և գտելուց յետոյ արտահանում տարբեր երկրներ: Աբադանին ամենամօտիկ մեծ քաղաքը Խոռամշահրն է որը գտնուում է 15 քիլոմէթր հեռավորութեանը: Աբադան քաղաքը նաֆթամշակման խոշոր կենդրոն է: Արտահանում է տարբեր նաֆթամթերքներ: Քաղաքը ունի օդանավակայան: Աբադան քաղաքի մասեր են. Թանքֆարմ, Օլդ Բաւարդա, Յիւսիսայի և Հարաւայի Բավադա, Բահմանշիր, Ահմադաբադ, Քարուն, Բհար, Ջամշիդաբադ, Հլալ Բրէյմ և այլն :

Աբադանը գտնւելով մի դաշտավայրում և հարևանութեամբ լայնածաւալ կիզիչ անապատ-ների, ինչպէս Աբաբիան և Իրաքը, ունի անապատային տաք կլիմա: Չմտանը սառը քամիների պատճառով երբեմն օդի ջերմաստիճանը իջնում է մինչև զրօի, իսկ ամռանը օդի ջերմու- թիւնը 50 սենթիգրէտի է հասնում, ունենալով երբեմն այրող տաք և թէ խոնաւ քամիներ: Աբադանի կլիման կարելի է երկու եղանակի համարել, Ամառ և Աշուն:

Աբադանում հայերի մուտքը սկսւել է 1909 թւականից, երբ դեռ քիչ թուով մարդիք էին ապրում այնտեղ:

Ջտարանը պատրաստուել է երկու թաղամասերի, Բավադդէի և Բրէյմի մէջտեղում, շրջա- պատուած Քարուն և Արվանդ գետերով: Աբադանը քաղաքը կազմակերպւելուց մինչ օրս չորս պատմական շրջան է անցել, ունենալով տարբեր զարգացումներ:

1- Առաջին շրջան 1912 ից 1933 ից մինչև արդիւնաբերութիւն, Ռէզահշահի միջիշխանութեան ժամանակ և Վիլիամ Դարսիի առաջին պայմանագրի օրօք:

2- Դարսիի պայմանագրի ընդարձակման շրջան 1933 ից մինչև 1951 էսֆանդ 29 մինչ ընկերութեան ազգայնացման շրջան, որը յայտի է որպէս երկրորդ պայման :

3-Երրորդը շրջանը 28 Մորդադ1332«19 օգոստոս 1953»մինչև պարտադրեալ պատերազմը:

4- Պատերազմից մինչ Ազգայացում:



Վիլիամ Դարսին է Իրանի քարիւղի արտադրութեան առաջին հեղինակը: Այն ինչ որ պատճառ դարձաւ դարսին հաջողել քարիւղի արտահանման արտօնելութիւնը Ղաջար կառավարութիւնից ձեռք բերել, տեղեկութիւններ էին որ երկու ֆրանսա - հպատակ երկրաբաներ ժաք դո Մորգան և Էդվարդ դո գոթէ նրան տեղեկացրին:

1901 Թւականին Վիլեամ Նոքս Դարսին (William Knox D'Arcy's) մի միլոնատեր, սոցեալիստ, Լոնդոնից, Մասչէտ Մոլէյմանում քարիւղի հանքը հայտնաբերելուց անմիջապէս մէկ տարի անց, բանակցութեամբ, համաձայնութեան եկաւ պարսկաստանի արքա, Մոզաֆէր ալ դին շահ Ղաջարի հետ, յանձն առանելով հետազոտել, քննել Խուզեստանի շրջանի նաև ողջ իրանի բոլոր

Հույս Ամսագիր

տարածքում քարիղի արտադրումը 60 տարի պայմանագրով, (Ի բաց առեալ Ագրբայջան, Գիլան, Մազէնդարան, Գորգան և Խորասան նահանգները), զերծ մնալով անգամ մաքս վճարելուց, այն բոլոր մեքանիքալ սարքաւորումներին, որոնք գտարանի աշխատանքի համար ներմուծելու էին: Փախադարձ, նւիրելով շահին 20.000 Դոլար, հաւասար միւնոյն արժողութեամբ որ կունենար Դասիի ընկերութիւնը: Նաև խօստանալով վճարել 16 տոկոս շահ:

1903 թւականին Դարսին վարձեց մի խումբ երկրաբաներ և քարիղի մասնագետներ հետազոտելու Պարսկաստանի անապատները: Վիճակը չափազանց դժար էր: Ամեն տեղ կար ջուր, բայց անհասանելի էին: 50 սենթիգրէդ Օդի կիզիչ ջերմութիւնը անտանելի էր:

1904 թւականին որ աւելի քան 500000 դոլար պարտքի տակ էր և դեռ որևէ քարիղի չէին հասել, Դարսին և Բըրման որոշեցին յայտարարելով իրենց վնասումը, դադարեցնելով աշխատանքը և պատասխանել բոլոր գործաւորներին, նաև վաճառքի դնելով իրենց բոլոր սարքաւորումները, ապահովելու իրենց վերադարձի բոլոր ծախսերըը դէպ իրենց երկիրը:

Երբ Անգլիացի մասնագետները հետախուզութեան յուսահատ վերջին ջանքերն էին գոծա- դրում, բախտի բերմամբ, 26 Մայիս 1908-ին Մասչետ Սուլէմանի թիւ մէկ Նաֆթունի հորում 360 մէթր խորքում, տեղի ունեցաւ քարիղի յանկարծակի ժայթքում, հայտնաբերեց քարիղ որև գործողութիւնը շարունակեց: Նաև թիւ երկու և երէք հորերում էլ քարիղի խոշոր աղբիւրներ յայտնեց:



Փալաշկահ Արաւան - Տալ Մայ Դեգ 1300 Տի



Հալ Մաշալաթ Նաֆթի Բա Կարուան Տիւր Զո Րոյ Բո Րոմաշահ Բեմաշիր - Արաւան - Դեգ 1190

Առաջին հորը Մասչէդալէյմանում որ 1918 թ. 360 Ուղտերի քարաւանը քարիղի տեղափոխումը Բահմանշիր

մէթր խորից առաւօտեան ժամը 5 ին ժայթքեց: գետի շարժական կամուրջի վրայով: 1921 թ.



Տալ Արոյ Դեգ Զո Րոյ Դեգ Գրաշահ Արաւան - Տալ Մայ Դեգ 1190



Հալ Մաշալաթ Նաֆթի Բա Կարուան Զո Րոյ Բո Րոյ Դեգ 1190


քարիղի փոխադրում, դէպ Աբադանի գտարան: Քարիղի արտահանում Պարսկաստանից Իրաք 1921 թ:



Հալ Արոյ Դեգ Զո Րոյ Դեգ Գրաշահ Արաւան - Տալ Մայ Դեգ 1190



Լին Իկ Հալ Զո Րոյ Դեգ Գրաշահ Արաւան - Արաւան Տալ Մայ Դեգ 1300 Տի





Առաջին Քարիւղահանը (փոմփ)Աբադանում: Չտարանի աշխատանքի աւարտի ժամ 1912 թուականին:

Տարիներ անց հետազոտությունից յետոյ երբ դարսիի առողջական վիճակը քայքայվել էր, նա ստիպւած եղաւ վաճառել ամբողջ իր բաժնեմասը Գլաքօի կազմակերպութեան, Բրումահ Օյլի «Burmah Oil Company» հիմնարկութեան:

Ապրիլ 14 -1909 թականին Բրումա ընթերությունը կազմակերպեց Անգլո -Փերժիան Օյլի քումփընին, որպէս լրացուցիչ օրգան և համայնքին վաճառեցին բաժնետոմսեր:

Նաֆտային գտարանը տեղադրւած է Աբադանում Պարսից ծոցի մօտակայքում: Հիմնադրւած Անգլիա - Պարսկական նաֆտային ընկերութեան կողմից, որը վերջաւորւել է 1912 թականին:

Պարսկաստանի նաֆթի հասոյթի արդիւնաբերությունը վերջապէս սկսեց 1913 ին և Աբադան քաղաքում հիմնադրուեց գտարան, որը 50 տարիներ ճանաչեց որպէս աշխարհի ամենամեծ գտարանը:

Աբադանը որպէս ունենալով երկու քաղցր ջրով մեծ ազատ ջրանցքներ և գետեր, նաև գտնւելով Մասչետ Սոլէյմանի մօտակայքում, Քաղաքը նշանակեց ամենահարմար վայր գտարանի համար: Ուստի գտարանի հիմնադրման աշխատանքներ 1918 թականին սկսեց և 1920 թականին արդէն օրական 2500 տակառ քարիւղի արտադրություն ունեցաւ:

Միջին դարաշրջանում Անգլիական կառավարութեան առաջին ծովակալ իշխան Վինսթոն Չրչիլը 1913 թականին մասամբ ազգայնացրեց նաֆթային ընկերությունը, որպիսի Անգլիան ապահովի և հսկի քարիւղատար նաւերի արտադրանքը: փոխադարձ Անգլիաի կառավար- ութիւնը ներմուծեց 2 միլիոն փանուղ հասոյթի դրամագլուխ հսկելու ըկերութեան շահերը:

1280 (1911)Անգլիայի Պալատի կողմից Կնքեց մի պայմանագիր որը յայտնի ճանաչեց որպէս, Դարսիի պայմանագիր և կէս դար դարձաւ Անգլիաի տիրապետական, տնտեսական, քաղաքական, զինուորական նաև մշակութային նաճման շրջան:

32 Տարի Դարսիի մենաշնորհից անց 10 Օրդիբէէշտ 1312 «1933» ին երկրորդ պատմական դէպքը որ քարիւղի պայմանագրում պատահեց, Անգլիա- Իրան ընկերութեան

միջև կնքւած մի նոր պայմանագիր, որը կոչւեց 1933- թականի նշանաւոր պայմանագիր:

Բրիտանական կառավարութեան միահեծան գերիշխանութեամբ, Իրանի քարիւղի շահա- գործումը, շարունակւում է մինչ քսաներորդ դարի միջակաբնական շրջանը: Վերջապէս եկրորդ համաշխարհային պատերազմի նախավերջին, Բրիտանական կառավարութեան անօրինական և ապօրինի քարիւղի հասոյթի շարունակական օգտագործումը, կամաց կամաց Իրանում տարբեր խաւերի կողմից հանդիմանութեան, բողոքի և քննադատութեան առիթ ներկայացաւ և քիչ անց 1320ի 1942ի վերջում ազգայնացման որոշման առիթ դարձաւ:

Նաֆտային ընկերութեան շաջանակում գործաւորների աննպաստ պայմաններին վերահաս լինելու պահանջով, գործաւորությունը դիմեց գործադուլի: Նաֆտային ընկերությունը խնդրին դիմակայալու նպատակով, մի խումբ գործավորների հրահրեց միութիւններ կազմակերպել և պահանջատեր լինել Խուզիստանը Պարսկաստանից բաժանելու նպատակով բայց որևէ արդիւնք չստացւեց:

Ահազից յետոյ Աբադանը, Խուզեստանի ամենակարեւոր քաղաքներից է: Աբադան քաղաքը նախքան հեղափոխութիւնը, միջին արևելքում հայտնի քաղաք էր, օժտւած հոյեակապ գտարանով, քաղաք հիմնւած արդի քաղաքաշինութեան նորմերով, ունենալով համաշ- խարհային ռադիօ և հեռուստատեսի կայաններ, Թէքնիքալ համալսարան, արդիական ապրուստի հարմարություններ, որ թերևս իրանի միւս քաղքներում նմանը չկար: Թաջ կիմոն ամենամեծն էր Պարսկաստանում և երրորդը միջին արևելքում:

1942 թականին «Շամսի1342» Ֆրանսիաի քարիւղի հիմնարկությունը հանձն առաւ Փեթրո- քիմական արտադրման հիմնարկ հիմնել պարսկաստանում:Նկատի ունենալով որ Աբադան քաղաքը լինելով ամենամօտը քարիւղի շրջանի գտարանին նաև Արվանդ գետին, ուրեմն ամենից հարմար վայրն էր այդ նպատակի համար:

Աբադանի գտարանի տարածումը Անգլո իրանիան պայմանագրի կազմաւուծւելուց յետոյ 1932 թականից, նոր քարիւղի պայմանագիր կնքեց և որոշեց Իրանի դպրոցաւարտ աշակերտներին կրթել դաստիարակել որպէս մասնագետներ, փոխարինելու արտասահմեան գիտաշխատաւորների և հենց այդ բերումով, Աբադան համալսարանի հիմնադրման միտքը առաջացաւ և1950 թականին համալսարանի բացումը կատարուեց:

Մասանեաների թագաւորութեան օրօք Աբադան կղզիի մի մասը Բահման Արդէշիր էր կոչւում որ Բահմանշիր թաղամասի անունը դրա յիշատակն է: Ռգաշահի թագաւորութեան օրօք Ըբադան անունը փոխեց Աբադանի:

(Շանունակելի)

چکیده کتاب تاریخ آرتساخ (قره باغ)

(۲)

نگارش: دکتر ادیک باغداساریان

رویدادهای آرتساخ (قراباغ) در سالهای ۱۹۲۳-۱۹۱۷

سرگئی گورودتسکی، شاعر، چهره اجتماعی و ناطق روس حدود ۷۰ سال پیش درباره آرتساخ و ساکنان آن چنین نوشته است: "در عین اشتراک قومی، اقتصادی و زبانی، قراباغ همچون دژ میانی و جبهه شرقی ارمنستان عمل کرده است. این سرزمین چه در گذشته و حال و چه در آینده این موقعیت خود را حفظ کرده و حفظ خواهد کرد، زیرا بدون برخورداری از قراباغ، دفاع از قلب ارمنستان و دشت آرات نا ممکن است". او آنگاه می‌افزاید: فعالیت بسیار گسترده، دلاوری فداکارانه، آمادگی در به خطر انداختن زندگی، اعتماد به نفس، سماجت منحصر بفرد، راست پنداری، زندگی سنتی، اینها ویژگی‌های قابل ستایش ساکنان قراباغ هستند که گویی گرد هم آیی پارسی‌ها و پاکدامنی‌های باستانی ارمنیان می‌باشند..."

هر بار که مقاله "قراباغ" نوشته شاعر دوستدار ارمنیان را می‌خوانیم، به نظر می‌رسد که او امروز در کنار ما قرار دارد و در غم‌ها و احساسات ما شرکت می‌کند و به خاطر کشتارهای سومگائیت، باکو، خوجالو، شوشی، کیروآباد، گتاشن و شاهومیان در سوگ ارمنیان شریک شده و سازماندهندگان این رویدادها را محکوم و سرزنش می‌نماید.

تاریخ سرزمین آرتساخ که در متون ارمنی به صورت "سرزمین شرقی ارمن" نیز یاد شده است مملو از قهرمانی‌ها و حماسه می‌باشد اما امروز رویدادهایی^۱ که در سالهای ۱۹۹۱-۱۹۱۷ در آنجا رخ داده حائز اهمیت است، به ویژه آنکه در سالهای اخیر رویدادهای یاد شده توسط مورخان آذربایجان کلاً تحریف شده است. آنان به هر نحو سعی دارند اثبات کنند که "قراباغ کوهستانی قلمرو آذربایجان تاریخی است" و ساکنان آن "ترجیح داده‌اند در قلمرو آذربایجان زندگی کنند". آرتساخ هرگز در هیچ دوره‌ای جزو سرزمین آذربایجان نبوده است. به یاد آوریم که در اثناء سالهای ۱۸۱۳-۱۸۰۴ هنگامی که سپاه ژنرال سیسیانوف به مرزهای آرتساخ نزدیک می‌شد، اهالی این مرز بوم به پیشواز آنان شتافتند.

تزار آلکساند دوم در ۹ دسامبر ۱۸۶۷ قانونی را امضاء و اعلام کرد (به نام "درباره اصلاحات اداری سرزمین قفقاز و ماوراء قفقاز") که از اول ژانویه ۱۸۶۸ به اجرا گذاشته شد. بر پایه این قانون، استان جدیدی در ماوراء قفقاز تشکیل شد. گنجه قدیم، الیزابت پل نامگذاری شده استان جدید نیز دارای همین نام گردید. این استان شامل آرتساخ، زانگور و نواحی دیگر ارمنی بود. بر پایه اصولی که در قانون یاد شده پیش بینی شده بود مرز بین نواحی مختلف چنان می‌بایست ترسیم و مشخص می‌شد که وسعت آنها از ۶۵۰۰ روست مربع^۲ و جمعیت آنها از ۱۰/۰۰۰ خانوار یا ۸۰/۰۰۰ نفر تجاوز نمی‌کرد.

پیش از آغاز جنگ جهانی اول، جمعیت ارمنی نواحی جبرائیل، شوشی، کارپاگینو، زانگور و الیزابت پل که در این استان قرار گرفته بودند بالغ بر ۳۰۰ هزار نفر می‌شد و در مقایسه با ساکنان آذری و دیگر اقوام از اکثریت مطلق برخوردار بودند.

پس از انقلاب بورژوا-دموکراتیک فوریه سال ۱۹۱۷، حداقل در خواست‌های ارمنیان مورد توجه قرار گرفت و دولت موقت تقسیمات جدید اداری ماوراء قفقاز را درست ارزیابی کرد و بنابر این آرتساخ، گنجه، آخالکالاک و شاور-نخجوان به عنوان قلمرو ارمنیان شناخته شدند.^۱

دولت موقت در ۹ مارس ۱۹۱۷ کمیته ویژه ماوراء قفقاز (اوزاکم) را تشکیل داد که بنا به تصمیم این کمیته، کمیته‌های اجرایی منطقه‌ای، شهری و روستایی به وجود آمد. در ۱۳ مارس کمیته امور قراباغ متشکل از ۴۰ نفر برای اداره این سرزمین تشکیل شد.


در اوایل سال ۱۹۱۸ الیزابت پل مجدداً "گازاک" (گنجه) نامیده شد و تبدیل به یکی از مراکز نیروهای ضد انقلابی ماوراء قفقاز گردید. مرتجع‌ترین فئودال‌ها و نیروهای ضد انقلاب در آنجا گرد آمده به سرکردگی مساواتی‌ها در صدد اجرای برنامه‌های پان ترکیستی خود بودند. جلادهای ترک عثمانی شتابان به گنجه می‌رفتند.

چنانکه پیدا است، اشغالگران ترک از بهار سال ۱۹۱۸ متوجه باکو شده بودند تا مرکز انقلاب ماوراء قفقاز را نابود سازند.

به تحریک دولت تازه تاسیس مساواتی آذربایجان، ترکیه دولت جمهوری ارمنستان را مجبور به شناسایی سراسر استان الیزابت پل به عنوان اراضی متعلق به مساواتی‌ها کرد و لذا نواحی ارمنی زانگور، آرتساخ و گنجه به قلمرو آذربایجان مساواتی ضمیمه شد.

مساواتی‌ها مبارزه آشکار و شدیدی در جهت برقراری سلطه ترکیه بر ماوراء قفقاز به عمل می‌آوردند و در گنجه بی صبرانه منتظر ورود نوری پاشا برادر انور پاشا جلاد ملت ارمن بودند. در آن روزها به دستور انورپاشا سپاه منظم ترکیه از طریق تبریز راهی گنجه شد و در ۲۵ ماه مه به مقصد رسید و نوری پاشا نیز که "قشون وحشی" تحت امر او قرار گرفته بود وارد این شهر گردید. علی آقا شیخ‌لینسکی سپهبد ارتش تزاری باعلاقه و تلاش به او کمک میکرد. یکی از اهداف اساسی نوری پاشا این بود که "به هر نحو برای تسهیل پیشروی خود به سمت باکو، قراباغ کوهستانی را عاری خطر و مشکلات احتمالی کند".

آرتساخ مانعی برای پیوستن قشون ترکیه از سمت جلفا و در محور گنجه به یولاخ بود. فرماندهی ارتش ترکیه تصمیم گرفت از اشرار مسلمان این نواحی استفاده کرده روند اتحاد قشون یاد شده را تسریع نماید. در یکی از اسناد تاریخی چنین آمده است که در بهار سال ۱۹۱۸، در روستاهای مسلمان نشین دشت قراباغ، فرماندهان نظامی ترکیه دیده شده و اکثر آنها جزو عساکر ترک بودند که به انحاء مختلف از اردوی اسرای جزیره نرگیس واقع در دریای خزر آزاد شده بودند. ترکها مسلمانانی را ثبت نام کرده و گرد هم می‌آوردند که حاضر بودند در سایه حمایت آنان با مردمان همسایه غیر مسلمان به جنگ بپردازند. اوضاع به ویژه از ماه آوریل ۱۹۱۸ که فرماندهان نظامی ترکیه در نواحی مسلمان نشین ظاهر شدند و حکومت را کلاً به دست خود گرفتند، رو به وخامت نهاد. آنها مسلمانان مسلح آن نواحی را در گروه‌های راهزن و چپاولگر متشکل ساختند. حملاتی که بر علیه ارمنیان صورت می‌گرفت از وحشیگری‌ها، بی رحمی‌ها و کشتارهای منحصر و ویژه ترکان برخوردار بود. روند کشت و کشتار به امری معمولی تبدیل گردید و در این میان کلیسای جامع گریگوریس مقدس در آماراس با خاک یکسان شد و صدها خانه در خوناشن (مارتونی کنونی) و دیگر جاها ویران گردید. از نامه‌ای که شورای ملی ارمنی قراباغ به تاریخ ۳۱ ژانویه ۱۹۱۹ خطاب به دولت جمهوری ارمنستان نوشته بود چنین بر می‌آید که از ماه مه ۱۹۱۸ افسرهای گشتی ترک در قراباغ نخست به نام دولت عثمانی و سپس آذربایجان بارها به ارمنیان قراباغ اتمام حجت کرده بودند که تسلیم شده سلاح‌های خود را تحویل دهند، در غیر اینصورت آنان را تهدید به کشتار و نابودی کامل می‌کردند.^۱



